Hayoc' vank'eṛ

hamarôt tesowt'iwn

K. Kostaneanc'

Kostaneanc', Karapet

urn:nbn:de:hbz:5:1-9722

65

Goussen 3340

6

ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԸ

ՀԱՄԵՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ.

ՄՈՍԿՈՎ.
Типографія О. О. Гербекъ, Чернышевскій переулокъ, домъ № 5-й.
1886.

3746

Дозволено цензурою. Спб. 1 Ноября 1885 года.

ԵՐԱԽՏԱՒՈՐԱՑ

ԱՐԴԻ ՎԱՆՕՐԷԻՑ

ԶՕՆԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ-Ա.

ՆՈՐԱՊՍԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,

ՆԱԽԱԲԱՆ

ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅՈՑՆ Է ԻՍԿԱՅԻՆ, ՈՐ ՓՈՐՁԵՑԵ ԶԻՆՔ ՎԵՐ Ի Վ ԳՈՐԾՈՒՆԵՒՆ

Սահակ Պարթև։

Հայաստանն իւր մէջ մի հզօր և միահեծան ազգ բովանդակելու համար ունէր շատ անյարմարութիւններ. լեռնային դիրքը, անմատչելի հովիտները, հաղորդակցութիւնը դժուարացնող կիրճերը, իշխանների ինքնապաստան կենցաղը, սահմանակից զօրեղ տէրութիւնների միջամտութիւններն եւայլն՝ մեծապէս նպաստեցին, որ քաղաքական միութեան կապը ոչ մի ժամանակ Հայոց ազգային միութեան կապ չեղաւ։ Ընդհակառակը՝ մենք գիտենք, որ դրրացի քաղաքակրթեալ ազգերը հեթանոսութեան դարերում միշտ բարոյապէս իշխող եղան, իսկ քրիստոնէութեան դարերում մինչև անգամ բռնացան նաև քաղաքական ազատութեան վերայ։ Հայերին մնում էր թերևս խառնուել մի այլ զօրեղագոյն ազգի հետ և ջնջուել իվերջոյ աշխարհիս երեսից այնպէս, ինչպէս ջնջուեցան փիւնիկեցիք, բաբելացիք և այլք։ Սակայն քրիստոնէական կրօնը շնորհեց Հայերին ազատութեան եղք. զի նա եղաւ Հայ ազգի բոլոր անհատներին իրար հետ կապող զօրութիւնը. նա իբրև

միաբար յօդ ժողովից և շաղկապից Հայոց տարակեղբոն մասերը և մի բարոյական համակեղբոնութիւն ստեղծեց։

Այս մեծ գործն յաջողուեցաւ Դ. դարում, երբոր Ս. Լուսաւորիչ գրեց Հայաստանեայց Եկեղեցու կազմակերպութեան հիմքը և իւր քարոզութեան ձայնով նոր կեանքի կոչեց կուսակրաշտութեան խաւարի մէջ տոգորեալ Հայ ժողովրդին. Տրդատ արքայն իւր հսկայական զօրութեամբ չկարողացաւ խափանել այդ կենդանարար ձայնը. զի ինքն ևս համոզուեցաւ թէ անյաղթելի էր Ս. Եւսեբիանի պաշտօնէի քարոզած ճշմարտութիւնը. նա «մեծահաստատ իշխանութեամբ» հրամայեց թօթափել հեթանոսութեան ծանր շղթաները և Քրիստոսի ծառայութեան «ամենանահեշտ լուծն» ընդունել։

Այդ նոր լուծը շօշափելի եղաւ Հայ ժողովրդին Ս. Եւսեբիանի ոգին արտայայտող նոր հաստատութիւններով, որ հիմնեց Ս. Լուսաւորիչ։ Նոցա մէջ նշանաւոր տեղը բռնում են վանքերը. զի նոքա առաւելապէս նպաստեցին Հայոց բարոյական և մտաւոր կրթութեանը և ամրապնդեցին ներդաշնակ միութեան կապը Հայոց Եկեղեցու և իւր հօտի մէջ. ուստի և այդ երկուսի գոյութեան շրջանում երբէք տեղի չունեցաւ մի կէտ, մի սահման, ուր նոցա շահերը միմեանցից անջատուէին և միմեանց հակառակ լինէին։ Ընդհակառակը՝ բոլոր աշխարհային ծանր զրկանքների դնով պահպանուած Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ցայսօր եղած է և է միակ հաստատանը, որի վերայ հիմնուած են թէ հօտի և թէ հովուի գոյութեան իրաւունքները։

Ը.

Մարդս իւր կեանքի մէջ ունի մի վայրկեան, երբ զգում է կարօտութիւն առանձնանալու և մտախոհ լինելու։ Այդ վայրկեանն է անապատականի որոնած երջանկութիւնը։ Ֆին կրօնների մէջ ամենուրեք երևելի անձինք օրէնսդիրներ, իմաստասէրներ, մարգարէներ իրենց գործունէութիւնն սկսում կամ վերջացնում էին առանձնանալով։ Մարդկային բնութեան այդպիսի պահանջից յառաջ եկաւ կրօնաւորական կեանքը։ Դարերի ընթացքում զանազան կրօնների մէջ և զանազան պայմանների տակ զոյութիւն ունենալով, այդ կեանքը նուիրագործուեցաւ իվերջոյ և մեր Փրկչի օրինակով, որի աշխարհային կեանքի խորհրդաւոր վայրկեաններից մէկն էր քառասնօրեայ փորձութիւնն անապատում։

Առանձնական կեանքի հետ սերտ կապ ունի և ընկերական կեանքը։ Ինչպէսոր ներքին աշխարհի մէջ խորասուզուելու պահանջը մղում է մարդուս դէպի անապատը, այնպէս էլ մտախոհութեան արդիւնքը իւր նմաններին հաղորդելու պահանջը, որ նոյնպէս բնական է, մղում է նորան դէպի ընկերական կեանք։ Մարդկային բնութեան այս երկրորդ յատկութիւնն ևս երևեցաւ Աստուածորդու կեանքի մէջ, երբ անապատից դուրս գալով մտաւ նա աշխարհ, ժողովից աշակերտներ և քարոզից իւր Աւետարանը։

Ամենասիկ երկու բնական պատճառներ, որոնք յառաջ բերին երկու կրօնաւորական վիճակ՝ միակեցութիւն և եղբայրութիւն։ Մեակեացներն ապրում են մարդկային հասարակութիւնից հեռու լեռներում և անապատներում անձուկ և մենացեալ ճգնարաններում։ Եղբայրներն ապրում են մի կազմակերպեալ ընկերութեան մէջ վանքերում և մենաստաններում, թէպէտև հեռու աղմկալից աշխարհից և նոյն իսկ անապատական լռութեան դրրկում։ Երկուսի նշանաբանը մի է. նոքա ուխտում են աշխարհուրացութիւն և մենաւոր կեանք։ Նոցա այս նշանաբանը կրկրկնէր անշուշտ իւր վսեմ խորհուրդը, եթէ նորա սրբագործող և նուիրական զօրութիւնը չլինէր նոյն ինքն կրօնը։ Իբրև մի ամփոփումն վսեմ սկզբունքների կրօնն է միակ առաջնորդը, որ դարերի ընթացքում ուղղորդ է եղել մարդիկներին ճանաչելու հոգեւոր կեանքը և նորա ճշմարիտ վայելչութիւնները, որոնց առաջ ոչինչ են աշխարհիս ամենարարձր վայելքները։ Ոչմիայն կեանքի դառնութիւններից զզուած մարդիկ, այլ նաև մեծատուններ, իմաստուններ և նոյն իսկ թագաւորներ թողել են իրենց աշխարհային շուքն ու առաւելութիւնները և ընտրել են կրօնաւորի համեստ տարազը, որպէսզի հասնին ճշմարիտ երջանկութեան։ Կրօնաւորական վիճակը իբրև աստուածատուր կեանք, հրեշտակային կենցաղ, դիրմարդկային աշխարհ եղել է սրբութիւն և սրբերի վարժարան։ Այնտեղ էին կեդրոնանում մարդկութեան բոլոր հոգեկան շահերը. այնտեղ էին զուում կեանքի վսեմ խորհուրդներն և նպատակները. այնտեղից էին բխում ամենայն ճշմարիտ և աշխարհաշէն պատգամները, որոնք աստուածային ծագ-

ման դրոշմը կրելով, առաջնորդում էին մարդիկներին մոլորութիւններից պատսպարելու։

Այս վսեմ կեանքը դարերի ընթացքում մշակել է և իւր որոշ պայմանները, որոնց նպատակն է գերագոյն երջանկութեան հասնելու համար մեռցնել մարմինը և զօրացնել հոգին։ Պահեցողութիւնը, ծոմը, կուսութիւնը, աղքատութիւնը, ապօթքը և հնազանդութիւնը այդ կեանքի անհրաժեշտ պայմաններն են։ Ինչպէս ամենայն մարդ կրօնաւորն էլ ապրում է աշխարհիս երեսին, տեսնում է նորա բարիքը, անձնիշխան է ամենայն ինչ վայելելու, սակայն ինքն իւր յօժար կամքով առանց մեռած լինելու մեռցնում է իւր ցանկութիւնները, ուրանում է աշխարհիս գոյութիւնը և ընտրում է իրեն համար մի հոգեւոր աշխարհ։ Այդ աշխարհն ըմբռնելու միակ միջոցը հաւատն է, որ կապում է մարդուս միտքը կրօնական սկզբունքների հետ և զօրութիւն է տալիս նորա բոլոր խորհուրդներին։ Առանց այդ միջոցի՝ առանց հաւատի՝ կրօնաւորի գոյութիւնն անխորհուրդ է և անհասկանալի։

Ի.

Քրիստոնէական աշխարհի կրօնաւորական կեանքը զարգացաւ Գ. և Դ. դարերում, երբ հռովմէական կայսրների հալածանքները մղում էին քրիստոնեաներին քաղաքակրթեալ աշխարհից հեռու դէպի Եգիպտոսի և Ասոս լիքի անծանօթ լեռներն ու անապատները, երբ հեթանոսաքրքունիքների զեղխութիւնն ու շռայլութիւնն յարուցանում էին զզուանք նորահաս սերունդի մէջ և ստիպում էին նոցա դիմել պարզ և բնական կեանքի գիրկը և երբ

իվերջոյ քրիստոնէութեան առաքեալներն և վկաները, թէև իրենց արեան գնով, վաստակում էին նոր ժողովուրդ հեթանոսական անխորհուրդ ծէսերից զզուած և երկնային կեանքի սիրով յափշտակուած։

Արօնաւորական կեանքի առաջին հիմնադիրն եղաւ Ս. Անտոն անապատականը, որ ապրեցաւ 250 թուից մինչև 356 թիւը [1]. մի հարուստ աղնուական երիտասարդ էր նա. քսանամեայ հասակում վաճառեց իւր ընդարձակ և արգաւանդ հողը, գինը բաժանեց աղքատներին և ինքն առանձնացաւ Եգիպտոսի անապատները։ Երեսուն և հինգ տարի շարունակ մաքառեցաւ իւր մարմնի հետ և ամէն փորձութիւններին յաղթելով, շահեցաւ իւր հոգու ազատութիւնը։ Նորա երջանիկ առանձնութիւնը խանգարուեցաւ աշակերտներով, որոնք ժողովուեցան նորա շուրջը. հարևան ճգնաւորներն ևս սկսեցին շրջապատել նորան և ուսանիլ նորանից ասուածդիտութեան գաղտնիքները. նորա համբաւին գալիս էին բազմաթիւ ուխտաւորներ, որոնք խընդրում էին նորանից բժշկութիւն և թողութիւն. նոյն իսկ հեթանոս և քրիստոնեայ փիլիսոփաները բերում էին նորա առաջ իրենց տարակասութիւններն և կասկածները և լսում էին նորանից հանձարեղ և խնամտուն պատասխաններ։ Ս. Անտոնի մենարանն այսպիսով դառաւ մի ժողովարան, որին ուղղութիւն և ոգի տուողն էին նորա սրբութեան օրինակը, ոգելից խրատները և ջերմեռանդ աղօթքները։ Այդ խառն բազմութիւնից կազմեց նա իվեր-

---

[1]) Եգիպտոսի կրօնաւորների մասին մեր տեղեկութիւնները քաղուած են Թարգմանեցինք Մոնտալամբէրի «Les moines d'Occident» գրքի Բ. գլխից։

ջոյ մի եղբայրանոց. ինքն՝ առանձնական կեանքի առաջին կրօնաւորն եղաւ և նոր ընկերական կեանքի առաջին առաջնորդը կամ հայրը (ասորերէն աբբա.): Եղբայրանոցի բնակավայրն եղաւ Եգիպտոսի հին Թեբայիդը. այդ տեղը լցուեցաւ շուտով այնպիսի մի բազմութեամբ, որ այլ ևս անապատական մեռելութիւնն անհետացաւ և տեղի տուեց միաբանական երգերին և անխոնջ մշակութեանը, որոնցով ոգևորուած էին Ս. Անտոնի աշակերտները: 310 թուին նա առաջին անգամ դուրս եկաւ իւր անապատներից և բազմաթիւ միայնակեացների դլուխն անցած՝ մտաւ Աղեքսանդրիա, որպէսզի խրախուսէ քրիստոնեաներին և ինքն էլ վկայէ Քրիստոսի աստուածութեան մասին Մաքսիմինոսի հալածանքների ժամանակ. սրիոսեանները ևս այդ ժամանակ իրենց մոլորութիւններով դաշնակից էին հեթանոսներին: Ս. Անտոն մի փառաւոր ճակատամարտ ունեցաւ հաւատի թշնամիների հետ. կայսերական զորձակալներին անպատուեց, նոցա զինուորներին խրատիւ կշտամբեց, նոցա կայկայուն փառքերն հերքեց և շահեցաւ իրեն մի նոր հիւր, նոր բարեկամ, նոր աշակերտ՝ հռչակաւոր Ս. Աթանասին, որ քրիստոնէական եկեղեցու մեծ և պերճախօս եպիսկոպոսներից մէկն էր և ապա Ս. Անտոնի կենսագիրն եղաւ: Այս մեծ յաղթանակից յետոյ ժողովուրդը ոգևորուած ամէն կողմից դիմում էր նորան տեսնելու. հեթանոսները, մինչև իսկ քրմերը, հետեւում էին նորա քայլերին և աղաղակում էին. Թողէք մեզ տեսնել Աստուծոյ մարդուն: Սակայն նա ամենապարում էր դառնալու դէպի իւր Թեբայիդը. Զկնները մեռնում են ասում էր, երբ հանում են նոցա ցամաք. ճգնաւորներն

էլ ուժասիտ են լինում քաղաքներում. դառնանք շուտով դէպի մեր լեռները, ինչպէս ձիները դէպի ծով։ Նա կնքեց այնտեղ իւր աւելի քան հարիւրամեայ կեանքը շարունակ աճող աշակերտների և ուխտաւորների բազմութեան մէջ, որոնք լսում էին նորա խրատներն և զմայլում էին ինչպէս նորա մտքի կորովի վերայ նոյնպէս և նորա պատկառելի դէմքի գեղեցկութեան. զի երկար տարիներն և անձնամոռաց ճգնութիւնն իսկ չէին կարողացել քայքայել նորա պարզութիւնն և զուարթութիւնը։ Ս. Անտոն ունեցաւ և օգնականներ. նշանաւոր տեղը բռնում են Ս. Պօղ և երկու Ս. Մակարները. սակայն նոր կեանքի կազմակերպութեան նկատմամբ աւելի բարձր նշանակութիւն ունեցաւ Ս. Պաքոմիոս, որ քառասուն տարով աւելի փոքր էր Ս. Անտոնից և վախճանեցաւ նորանից յետաջ։ Նա եղաւ գրաւոր կանոնագրութեան առաջին հեղինակը. աւանդութիւնն ասում է, որ Ս. Պաքոմիոս իւր կանոնների բնագիրն երկնքից ստացաւ Աստուծոյ հրեշտակի ձեռով։ Ս. Անտոն այդ աստուածառաք կանոններն ընդունեց իւր եղբայրութեան մէջ։ Ս. Պաքոմիոս այդ կանոններով հիմնեց Նեղոսի ափում Տաբենեի վանքը կամ աւելի ճիշտ, մի միաբանութիւն ութն վանքերից բաղկացած, որոնցից իւրաքանչիւրը կառավարւում էր մի աբբայով և միացած մի սերտ կապով հնազանդում էին միևնոյն ընդհանուր առաջնորդի հրամաններին։ Մ՝ իքանի հաղար կրօնաւոր պատսպարուած էին նոցա մէջ։ Երբոր Ս. Աթանաս՝ արդէն հռչակուած իւր եռանդով արիոսականների դէմ և իւր փառաւոր մաքառումներով Կոստանդ կայսեր հետ, դուրս եկաւ Աղեքսանդրիայից և ոմբձրացաւ Նեղոսի վերայով տեսնելու այս բազմաթիւ

միաբանութիւնները, Ս. Պաքմիոս հանեց նորա առջևը մի անհուն դուռ կրօնաւորների, որոնց մէջ նա ծածկում էր համեստութեամբ իւր իսկ ներկայութիւնը։ Ամէնքը երգում էին սաղմոսներ և օրհնութիւններ, ամէնքը ողևորուած էին ճշմարիտ կրօնի նախանձախնդրութեամբ և ներկայացնում էին մի այնպիսի բարոյական գեղեցկութիւն, որ կարող էր հիշատութեամբ յաղթահարել և սպառել բոլոր հիրձուածները։

Եգիպտոսի վանականների հրաշալի պատմութեան մէջ ոչինչ այնպէս անհաւատալի չէ, ասում է Մօնտալամբէր, ինչպէս նոցա թիւը. բոլոր արժանահաւատ հեղինակները միաբերան ընդունում են սակայն այդ թուերի հաւանականութիւնը։ Եւ յիրաւի, եթէ մոռացենք, որ այս մի դաղթականութիւն էր քաղաքներից դէպի անապատը, քաղաքակրթութիւնից դէպի պարզ կեանքը, աղմուկից դէպի լռութիւնը, ապականութիւնից դէպի անմեղութիւնը, զարմանալի չէ տեսնել, որ միմիայն Ս. Պաքմիոսի վանքում ժողովուած էին երկք հազար կրօնաւոր նորա կենդանութեան ժամանակ և հոգին հազար նորա մահից յետոյ։ Յետագայ այցելուները և ճանապարհորդները տեսան այնտեղ մինչև 50 հազար մարդ միմիայն այն կրօնաւորների ընդհանուր ժողովում, որոնք հետևում էին Ս. Պաքմիոսի կանոնին։ Շատ ստէպ էին պատահում առանձին վանքեր 2, 3, 5 հարիւր միաբաններով միևնոյն աբբայի ձեռքի տակ։ Ս. Արսենիոսի մօտ կային մինչև 10 հազար կրօնաւոր։

Գ.

Կրօնաւորների մեծագոյն մասը բնակուում էր եղբայրանոցում կամ վանքում. նոքա միացած էին ընդհանուր կա-

նոններով և հասարակաց գործերով միևնոյն առաջնորդի կամ աբբայի ձեռքի տակ։ Նոցա գործն էր աղօթել և աշխատել. իւրաքանչիւրն ունէր մի ձեռագործ, որը նա կատարում էր առանց բաժանուելու իւր աղօթքից և հոգևոր մարզութիւններից։ Ս. Պաքոմիոսի կանոններով իւրաքանչիւր վանքը բաժանուած էր միքանի ընտանիքի՝ նայելով այն ձեռագործին, որ ունէին ընտանիք կազմող ճգնաւորները։ Իւրաքանչիւր ընտանիքն ունէր իւր առաջնորդը և բաժանւում էր խցերի, որոնցից իւրաքանչիւրը բովանդակում էր երկք ճգնաւոր. կային վանքեր, որոնք բաղկացած էին 30/40 ընտանիքից։ Իտալիայի հին երևելի նկարիչները պատկերացնում են կրօնաւորների կեանքի առօրեայ վիճակը. տեսնում ենք նոցա իրենց կոշտ մազեղէն սև հագուստի մէջ կնկուղը գլխներին, այծի մորթը ուսերին ոմանց ծառ կտրելիս, ոմանց ձուկ որսալիս, ոմանց այծ կթելիս, ոմանց արմատ ժողովելիս, ոմանց խսիրներ հիւսելիս և այլն։ Մ՝իւսներն զբաղուած են կարդալով կամ Ս. Գրքի մեկնութեամբ։ Այնպէսոր խցերը անապատում նման են մեղուի փեթակին, ինչպէս համեմատում է Ս. Եպիփանը. այնտեղ իւրաքանչիւրն իւր ձեռքում ունի աշխատանքի մոմը և իւր բերանում սաղմոսերգութեան և աղօթքի մեղրը։

Կրօնաւորների ձեռագործն էր մեծ մասամբ խսիրներ հիւսել. սակայն կային նոցա մէջ ամբողջ ընտանիքներ, որոնցից ոմանք ոստայնանկ էին, ոմանք հիւսն, ոմանք խաղալիքագործ, ոմանք բրուտ և այլն։ Պարապմունքի ժամանակ խիստ պահպանւում էր ծոմը։ Անապատական Ս. Հայրերն և բոլոր կանոններն ամէնքի համար պարտադիր են համարել աշխատութիւնը. և իրենք իսկ իրենց օրինակով աւելի բարձրացու-

եղել են այդ օգտակար հրամանի նշանակութիւնը։ Ձէին բողոքում, չէին յայտնում բացառութիւններ այս ընդհանուր և անփոփոխ կանոնից։ Նա, որ ամենից մեծն էր, նա ինքն էր առաջին մօտեցողը իւր ձեռագործին։ Մինչդամ երբոր Ս. Մակարն եկաւ տեսութեան Ս. Անտոնին, նոքա իսկոյն սկսեցին միասին գործել խսիրը, շարունակ խորհրդակցելով հոգեշահ խնդիրների մասին. և Ս. Անտոնն այնպէս խրատուեցաւ իւր հիւրի ջերմեռանդութիւնից, որ համբուրեց նորա ձեռքն ասելով. Ո՞ւրքան առաքինութիւն է թափուում այդ ձեռքերից։

Իւրաքանչիւր վանքը ոչ միայն աշխատանքի մի մեծ վարժարան էր, այլ և միևնոյն ժամանակ բարեգործութեան մեծ կրթարան։ Կրօնաւորները գործում էին բարիք ոչ միայն մէկը միւսի համար կամ միայն իրենց հարևան շրջակայ կարօտեալների համար, այլ նոցա աջը հասնում էր ուղևորներին, ուխտաւորներին և ամէն մի պատահական նեղեալին։ Քրիստոնէութեան դարերում երբէք տեսնուած չէ այնքան մարդասիրութիւն և այնպիսի համատարած քրիստոնէական ողորմածութիւն ինչպէս Եգիպտոսի կրօնաւորների մէջ։ Կային նոցա մէջ այնպիսի վանքեր, որոնք ապաստարան էին հիւանդ երեխաների. կային և այնպիսիները, ուր ժողովւում էին խեղճերն և անդամալոյծները. նոքա, որ իրենց ձեռքի աշխատանքով պահպանում էին այս մարդասիրական հաստատութիւնները, վստահութեամբ կարող էին պարծենալ մեծատուններին առաջ և մատնացոյց լինելով իրենց այդ հաստատութիւնների վերայ բացագանչել. Ահա՞ մեր գոհարները. ահա՞ մեր մարգարիտները։

Կրօնաւորներն այդպիսի բարոյական գործունէութեան

ժամանակ խստապահանջ էին միմիայն իրենց անձի նկատմամբ. ցուրտը, տապը, սովը, ծարաւը, մերկութիւնը, անարգանքը, խոշտանգանքը և այլ ամենայն հարուածներն ու դառնութիւնները չէին հանում նոցա բերանից ոչ մի տրրտունջի ձայն և բողոք. զի նոքա իրենց կոչումը հէնց այդ լայնասիրտ համբերութեան մէջ էին նկատում: Նոքա իրենց առօրեայ անպայման աշխատութիւնը, ապաշխարութեան խիստ վարժութիւնները և հիւրասիրութեան ու բարեգործութեան հոգսերը բարեխառնում էին հոգևոր մշակութեամբ և Ս. Գրքի ուսումով: Ս. Պաքոմիոսի կանոններից մէկը անշուշտ պարտաւորցնում էր կրօնաւորին կարդալ Ս. Գրքի զանազան մասերը: Այս պարտաւորութիւնը կատարւում էր ճշտութեամբ. գրագէտները կարդում էին, անգրագէտները լսում կամ ուսանում էին: Դալիս էին նոցա մէջ և Աղէքսանդրիայի գիտնականներից ու փիլիսոփաներից շատերը, որոնք իրենց հետ բերում էին զանազան գիտութիւնների մի հարուստ պաշար: Անապատական առանձնութեան մէջ նոքա միջոց էին գտնում զտելու իրենց գիտութիւնը հաւատի նկատմամբ. այդ գիտութիւնն աւելի կաղդուրում էր նոցա հոգու կորովը. կրօնաւորներն այդ եկաւոր ուսումնականների առաջնորդութեամբ սկսեցին մըշակել աստուածաբանական և փիլիսոփայական շատ խնդիրները, որոնց օգնութեամբ նոքա համարձակ մտնում էին պայքար հերձուածողների հետ:

Գ.

Թեբայիդի կրօնաւորներն այնքան ամենցան, որ յետոյ տեղի պակասութեան պատճառով փոխադրուեցան

Գրաբիա, Եսորիք, Պաղեստին և փոքր Ասիա։ Այս դաշ-թականութիւնների միջոցով կրօնաւորական կեանքը մնաց մինչև կրկիններում և արմատ ձգեց նոցա մէջ, կրելով իւր վերայ և յառաջադիմութեան դրոշմ։ Առաջին անգամ ընդունուած կանոններն հիմնուած էին առաւելապէս Ս. Անտոնի և իւր ընկերների կեանքի և գործունէութեան վերայ. ոլորան և մօտ էին նոքա բարոյական սկզբունքներին, այնուամենայնիւ դեռ առօրեայ փորձերի բովում դաւած չէին։ Ս. Պաքոմիոսի կանոնների մէջ մենք տեսնում ենք միայն կրօնաւորներին, որոնք կենդրոնացած են իրենց աշխատութեան և աղօթքի մէջ և շատ սակաւ առընչութիւն ունին Ս. Եկեղեցու վիճակի հետ. դի նոքա չունէին եկեղեցական ասաքնաներ, չէին հովում եկեղեցու հօտը և շատ սակաւ հանդիպում էին ճակատ առ ճակատ նոյն իսկ ժողովրդի հետ, որ կարօտ էր նոցա քարոզութեանն և օրինակին։ Առաջինն եղաւ մեծն Բասիլ Կեսարացին, որ բարեփոխեց կրօնաւորական կեանքի կազմակերպութիւնը։ Նա ապրեցաւ 329 թուից մինչև 379 թիւը. սնաւ Կեսարիայում, Կ. Պոլսում և Եթէնքում. ապա ծանեալարհորդեց Եգիպտոս, Եսորիք և Պաղեստին. ծանօթացաւ կրօնաւորների կացութեանը. և քանի վիցամեայ հասակում վերադարձաւ իւր հայրենիքը, ուր իւր հայրական կալուածքում բնակեցաւ և սկըսեց գործել անդ։ Կեանքի հրապոյրներն և հեշտութիւնները չկարողացան կողել նորա հաստատուն նպատակները. խստակրօն իւր առօրեայ կացութեան մէջ, հանապազ զբաղուած Ս. Գրքի ընթերցանութեամբ և խմբատասիրութեամբ, շարունակ հետևելով իւր երկրի մշակութեանն և ձեռագործին, նա բաւականանում էր միայն չոր հացով և

ջրով. իւր ամբողջ նիւթական վաստակը, ինչպէս և իւր կալուածքի եկամուտները, մատակարարում էր հասարակաց. այսպիսի գործունէութեամբ նա նմանեցաւ Եգիպտոսի հայրերին, որոնցից զանազանւում էր սակայն իւր անհուն համբերութեամբ հեթանոսական դիտութիւնների մէջ և կիրթ ճաշակով քրիստոնէական պերճախօսութեան մէջ. նա իւր պաշարեալ մտաւոր հմտութիւններն ևս մատակարարեց հասարակաց, գրելով իւր Վեցօրէից ճառերը, որոնք բովանդակում են իրենց մէջ մի քրիստոնէական խորիմաստ ներբող վեցօրեայ արարչագործութեան վերայ։ Քրիստոնէական եկեղեցու հովիւներից մէկը լինելով, նա մի ճշմարիտ օրինակ է կրօնաւոր եպիսկոպոսի. նա ձգտում է իրական կեանքը վերացականի հետ միացնել. նորա նշանաբանն է աշխատանք, պահեցողութիւն և դիտութիւն. նորա հայեացքով կրօնաւորն այն ժամանակ միայն պիտանի է եկեղեցու շահերին, երբ կարող է կառավարել ժողովուրդ, մշակել բարոյականութիւն և զարգացնել քրիստոնէական կեանքը։ Ս. Բասեղ իւր հայեացքների այս ծրագիրը դրեց 203 հարցմունքների մէջ, որոնց պատասխաններն ընդհանրապէս կոչւում են Բասեղ Կեսարացու կանոններ։ Դոցանով նա հանդիսացաւ կատարելագործող Ս. Պօղոսիմոսի վանական կանոնագրութեան։

Դ.

Ս. Բասեղի կանոններով վանական կեանքը զարգացաւ և կազմեց մի զօրաւոր ամբարտակ հեթանոսական գաղափարների և հերետիկոսութեան դէմ։ Մաքառումը

շատ եռանդուն էր և անվերջ։ Այս մաքառման մէջ կրօնաւորները շահեցան բաղմաթիւ թշնամիներ, սոքա էին հեթանոսներն և հերձուածողները, որոնք միացան և զրգռեցին կայսերութեան ժողովրդի մէջ ատելութիւն նոցա դէմ. հեթանոսների մէջ գիտնականները, փիլիսոփաներն և յառաջաւոր անձինք սկսեցին ծաղրել, անուանելով նոցա սև մարդիկ. ծաղրածութիւնները թափանցում էին մայրաքաղաքների ապականեալ դասակարգերի մէջ և գնում էին արձագանգ. աւելի զայրանում էին հարուստ և ազնուական ծնողները, որոնք բաց աչքով տեսնում էին, որ իրենց որդիք և ժառանգները ծախում են իրենց գոյքը և գնում են կրօնաւորների յետևից։ Աւելի խիստ էին նոցա դէմ արիոսականները. նոքա բանակից էին կայսրներին. Կոստանդ և Վաղէս նոցա դրդմամբ մեծ հալածանքներ յարուցին. Կոստանդի ժամանակ կրակ ձգեցին և վառեցին Եգիպտոսի վանքերն իրենց միջի վանականներով. Ս. Աթանասի մահից յետոյ Վաղէսի հրամանով մի կայսերական գունդ ուղարկուեցաւ Ս. Պաքոմիոսի հիմնած վանքերի վերայ. նոքա քանդեցին և պղծեցին սրբավայրերը և բոզքօղ կրօնաւորներին աքսոր վարեցին։ Այնուհետև Վաղէս միքանի հրամաններով փորձեց տապալել վանքերը. նախ՝ հրամայեց խուզարկութիւն անել Թեբայիդում, բռնել այն մարդիկներին, որոնք իբրև սինլքոր փսխտականներ մտել էին վանք, և վերադարձնել նոցա իրենց նախկին պարապմունքին. երկրորդ՝ հրամայեց ծառայեցնել կրօնաւորներին զինուորական ծառայութեան մէջ և նոցա, որոնք խոյս կուտան այդ պարտաւորութիւնից, տանջել գաւազանի հարուածներով։ Աստի հետևեցան կապանք և աքսոր, որոն-

ցով վարատուեցան միաբանութիւնները։ Երբէք գոգցես այնպիսի ծանր և վտանգաւոր շրջան չէ ունեցել Ս. Եկեղեցին, ինչպէս այդ տարօրինակ հաղածանքների ժամանակ, երբ քայքայեալ հերետիկոսութեան մէջ բուն դրած հերձուածողները, գործում էին իբրև քրիստոնեայ քրիստոնեաների դէմ և Ս. Եկեղեցու հիմունքը խախտելու չափ յանդուգն նպատակով պատսպարանք էին գտնում նորա մաքուր հովանու տակ։ Ա. յապիսինեարին աչքի առաջ ունի անշուշտ Ս. Յովհան Ոսկերիրան, երբ իւր մի ճառի մէջ, գրուատելով Ս. Գրիգոր Լուսաւորչի վարքը, յանդիմանում է իւր ժամանակի չար հովիւներին. նա ասում է. «աւուրքս չարութեան են. և փոխանակ հովուաց գայլք մտանեն հօտապետք. բանիւ ձևանան բարեպաշտք. և գործովք իւրեանց ուրացեալք են»։ Պատմելով այն, որ Ս. Լուսաւորիչ խոյս էր տալիս աշխարհային մեծութիւնից, աքանչելի վարդապետն արդար յանիշտակութեամբ բացատրում է. Հայնպիսին գովեմ ես հովիւ, զայնպիսին վերակացու. զի ոչ նա զհիա պատուոյն, այլ զհիա նորա պատիւն ընթանայր։ Որ այսպիսիս ոչ լիցի, ոչ հովիւ ուրեմն կոչի, այլ գող և աւազակ, գայլ սպասանիչ՝ օգտելով զհօտն Քրիստոսի։ Ահա են բազմութիւնք երանելի եպիսկոպոսացն առաջնոց և վարդապետացն, որք իբրև զփայլակն ծագեցան յաշխարհի։ Նոքա էին հովիւք ճշմարիտք. իսկ սոքա (այսինքն իւր ժամանակի հովիւները) գայլք սպասանիչք, ընկղմեալք յինչս և յլուսացուածս մարմնականս. քանզի յապուշս արծաթոյ և հանդերձից խնեղութեան, երիսարաց և ջուրց և սրօրանձիկ ոգանց և հօտից և խաշանց բազմանալոյ և վասն պէտսէս զօշաբազութեանց բարդում ջանս և խօսս ի մէջ սոցա տե-

սանել. իսկ վասն բանաւոր հօտից փրկութեան և բարու-
թեան նախանձու և ոչ մի ինչ բան կամ հոգաբարձութիւն։
Այս արդարհատելի վիճակի համար անոգոքելի Ս. հոգեորն
արձակում է իւր խօսքի արագաթև շանթերը վեսատակաւ
հովիւների գլխին. Արդ լուարուք հովիւք, ազազակում է
նա, մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի։ Արծաթ ձեր բազմա-
ցաւ, և բանն նուազեցաւ։ Գոյք ձեր ածեցին, և համար-
ձակութիւնն լռեաց։ Ընթանիցն հոյլք բազմացան, և բա-
նաւոր ձեր հօտքն գիշատեցան։»

Մի ուրիշ ճառով «Վանական կեանքն հակառակորդներն
դէմ» Ս. Յովհան Ոսկերերան պարզեց իւր բազմիցս յայտ-
նած գաղափարը վանական կեանքի կարևորութեան և
օգտակարութեան մասին, որով և մեծապէս խախտեց հա-
կառակ բանակի գոյութեան հիմքը։ Հետևանքն այն եղաւ,
որ բիւզանդեան կայսրները, թէև անզօր էին էական յե-
զափոխութիւն ձգելու և ուղղելու յիշեալ չարիքները, սա-
կայն ազատութիւն և արտօնութիւններ շնորհելով կրօ-
նաւորներին, միջոց տուին Ս. Ոսկերերանի նման արժանա-
ւոր հովիւներին հիմնաւոր կերպով կազմակերպելու Ս. Եկե-
ղեցու անտեսութիւնը։ Այս եղաւ առաւելապէս կրօնաւո-
րական ուխտերի և վանական կարգերի օգնութեամբ։ Ս.
Անտոնի և Ս. Բարսեղ Կեսարացու սահմանած սկզբունք-
ները մեացին առաջնորդ ամէն գաւառնութեան քրիստոնեա-
ների համար։ Հայաստանեայց Ս. Եկեղեցին ևս իրրև անգ-
լիական եկեղեցի Արևելքում իւր գոյութեան առաջին դա-
րերից հետևեցաւ նոյն սկզբունքներին, իսկ նոցա հեղինակ-
ներին դասեց իւր ուսնելի սրբերի կարգը, յիշատակելով նո-
ցա յիշատակն առանձին երգերով, որոնց մէջ Ս. Անտոնը

հռչակուում է իբրև «բաժակ հոգևորական լցեալ աստուածային ուրախութեամբ», իսկ Ս. Գարսեղ իբրև «լուսապայծառ իմաստիւք լոյս եղելոց աշխարհի համաձգաւոր»։

Գ.

Հայոց վանքերի առաջին կազմակերպութիւնն եղած է Ս. Լուսաւորչի հեղինակութեամբ, թէև աւանդութիւնն յիշում է [1]) և այնպիսի վանքեր, որոնք գոյութիւն ունէին և նորանից յառաջ։ Ս. Լուսաւորչի սահմանելով «վանքը մի եղբայրութիւն է. իւրաքանչիւր անդամը մի եղբայր է. նոցա միասին միացնող կապը բարոյական է. այդպիսի կապի ներկայացուցիչը եղբայրների համաձայնութեամբ ընտրած առաջնորդն է. իւրաքանչիւր եղբայր պարտական է անպայման հնազանդել առաջնորդին, նորա խրատներին ականջ դնել, նորա հրամաններին հպատակել. ոչ մի գործ առանց առաջնորդի կամքին լինելու չէ. նորա կամքից դուրս եկողը պէտք է ապաշխարէ. նորան արհամարհողը Աստծուն է արհամարհում. ոչոք չպէտք է իւր կամքով գործ ինդրէ առաջնորդից, այլ ինչ գործ առաջնորդն յանձնելու լինի, այն պէտք է ընդունի անտրտունջ. առաջնորդն ինքը պէտք է անհոգ չլինի. պէտք է ամէն բանի մէջ ճշմարտասէր լինի. պէտք է եղբայրներին խրատէ խորագիտութեամբ, ինչպէս որ ժամանակը կամ իւրաքանչիւրի բարքն ու ընդունակու-

---

[1]) Ստեփաննոս Օրպէլեանն ասում է, որ Թանահատի վանքն հիմնուած է Հայոց թուականից 400 տարի յառաջ այսինքն 112 թուին. Ս. Բարթուղիմէոս Առաքելոյ, Հոգեաց, Արտազու և մի քանի ուրիշ հին վանքերի հիմնարկութեան ժամանակ համարում են Ա. դարը։

թիւնը կընելին։ Ս. Լուսաւորչի սահմանած վանքերի մէջ առաջնորդից զատ կան և ուրիշ պաշտօնատար անձինք. նոցա մէջ առաջինը տնտեսն է. Ս. Լուսաւորիչ պատուիրում է տնտեսին չկորցնել, չծախել և դուրս չձգել Ս. Եկեղեցու անօթեղէնը. զի ինչոր եղբայրութեան համար է, այն «պարգև է Աստուծոյ». պատուիրում է մատակարարելու ժամանակ պահպանել հաւասարութիւն. ծերերին, հիւանդներին, տկարներին, ճանապարհորդներին, մշակներին իւրաքանչիւր արժանաւոր բաժինը տալ։ Տնտեսից յետոյ գալիս են շաբաթաւորները, որոնք, ինչպէս երևում է, հերթապահ եղբայրներ են, որ վիրակացու են նշանակւում կահկարասիքի պահպանութեան։ Ապա հետևում են «տեսուչք հիւրոց», որոնց պատուիրում է հիւրերի հետ քաղցր վարուել հիւրերի պատճառով պահքը կամ աղօթքը չլուծել, ամէն բանի մէջ առաջնորդի հրամաններին հետևել։ Կան և «տեսուչք եղանց հողագործաց կամ խաշանց արօտականաց և հօտից կթոց և գրաստուց բեռնակրաց.» նոցա պատուիրում է հաւատարիմ լինել «որպէս Աստուծոյ գործավարք և իմաստուն մշակք արդիւնակատարք [1])»։

Ս. Լուսաւորչի որոշած այսպիսի կազմակերպութեան շնորհիւ վանքերն ունեցան կրկնակի նշանակութիւն. մէկոր նոցա մէջ կազմուեցաւ նոր հասարակութեան համար մի կենդանի օրինակ. ժողովուրդն ընդօրինակում էր նոցա կարգերը, սովորութիւնները և գաղափարները. որով և հետ

[1]) Ցե՛ս Ցաճախապատում։ — Հայոց վանքերի մասին բոլոր մեր տեղեկութիւնները, որ Զ. դարից սկսած հաղորդելու ենք, քաղուած են Հայոց պատմիչներից. շատ տեղ չակերտով նշանակուած են նոցա խօսքերը։ Առանձին ծանօթութեամբ նոցա տեղը նշանակելն աւելորդ համարուեցաւ, զի մեծ մասն հանրածանօթ է։

զՀետէ կազդուրուում էր քրիստոնէական կեանքի մէջ. երկրորդ որ նոքա ծաղկեցուցին իրենց մէջ ուսում, դպրութիւն և հոգեւորական կրթութիւն։

Ե.

Առաջին ուխտը, որ Ս. Լուսաւորիչ հիմնեց Հայաստանում, Ինանկնեան վանքն էր, որ յետոյ Գլխակայ Ս. Կարապետ կոչուեցաւ. շքեղապատուած խիտ և ընդարձակ սենեակներով, բարձր և դեղեցիկ բլուրներով, առատ ջուրով և բարեհամ աղբիւրներով այդ վանքը շրջուած լցուեցաւ մինչև վախճանն ճգնաւորներով. Ս. Լուսաւորիչ այդ վանքին առաջնորդ կարգեց մի անուանաւորի, որին հրաւիրել էր Երեմուրից. վանքի կառավարութեան համար նշանակեց տասնեակու դիւղ, որոնք հարուստ և ընդարձակ էին. նոցանից մէկը ունէր 3200 ծուխ և կարող էր զինուորել վանքի թշնամիների դէմ 1040 հեծեալ, 840 աղեղնաւոր, 680 տիգաւոր և 280 պարսաւոր հետեւակ զօրք։ Ինանկնեան տեղի նախկին նուիրականութիւնը, քրիստոնեայ ճրագնաւորների մաքուր կենցաղը, Ս. Լուսաւորչի սահմանած նոր տօները կարճ ժամանակի մէջ կատարեցին նորահաւատ ժողովրդի սիրտը այդ վանքի հետ և դրաւում էին բազմաթիւ ուխտաւորներ. աւանդութիւնն ասում է, որ միանգամ, երբ մեծն Տրդատ իւր նախարարներով եկաւ ճգնաւորներից աղօթք և օրհնութիւն հայցելու, Ինանկնեան վանքում հաւաքուած էին հարիւր հազարից աւելի ուխտաւորներ։

Ինանկնեան վանքում, ինչպէս և Ս. Լուսաւորչի հաս-

տատած բոլոր վանքերում կրօնաւորները վարում էին «խստաբաղնագզեստ, քարանձաւատուն, միայնակեաց, խոտաբուս կեանք. բնակում էին «դարափոս խցերի մէջ», «ոմանք ծերպերում, ոմանք շատ նեղ խուցերի մէջ, ոմանք բացօթեայ». նոցա կենցաղական կանոնն էր մեղութեան, վշտի, չարչարանքի և բանտարկութեան համբերող լինել». «Ճգնաւորների զինուորութեան զէնքը, ասում է Ս. Աստուածաշունչ, մարմնաւոր չէ, այլ հոգեւոր. նոքա պէտք է անխարդախ հաւատքին բոլոր հոգեւոր խրատներին և մերկանան աշխարհային բոլոր ցանկութիւններից»: Նոքա մեծ յօժարութեամբ տանջում էին իրենց մարմինը հոգեկան վսեմ բաւականութիւն ձեռք բերելու համար. այս երևում է առաւելապէս նոցա կերակուրի, զգեստի և բնակարանի կազմութիւնից: Պարզունակ Խոտակերից վանքի միաբանների մեծագոյն միայն վայրի բանջարն էր. Մաքենոցի կրօնաւորների զգեստը ոչխարի մորթին էր. Թանահատի կրօնաւորները, որ կոչւում են «մշտապաշտօնք, տահմանատրք», բաւականանում էին «չոր հացով և լոկ ջրով». այն էլ ճաշակում էին օրը մի անգամ երեկոները առանց խօսելու. դոր դիշեր աղօթքի էին կանգնած, կամ ինչպէս համեմատում է պատմիչը, «անշէջ կանթեղի նման կախ էին». սպասաւորներից դատ ոչոք իրաւունք չունէր վանքից դուրս գալու. կիւրակի օրերն անգամ բաւականանում էին միայն բանջարեղէնով և ընդեղէնով. չէին ճաշակում ոչ իւղ ոչ պանիր և ոչ անգամ հնասարակ թան. ուստի կոչուեցան Թանահատք. միմիայն զլեաւոր ոտներին նոքա ճաշակում էին ձէթ և փոքր ինչ գինի»: Վանական կանոնների տակ իրենց անձը ճնշող կրօնաւորներն անտարբեր չէին սակայն, երբ հասարակութեան բարոյական օգուտը

պահանջում էր նոցա ներկայութիւնն և մասնակցութիւնը. մենք գիտենք, որ Ս. Սահակ Պարթև ունեցաւ վաթսուն աշակերտ, որոնք, ինչպէս պատմում է Խորենացին, մայրաքաղաքների անքուն ժրաջան կրօնաւորների նման «խարազնագլեստ, երկաթապատ և բոկագնաց» մարդիկ էին և միշտ իրենց վարդապետի հետ միասին շրջում էին. Ս. Սահակ ինչպէս մի անապատական նոցա հետ միասին կատարում էր մշտական աղօթքով եկեղեցու կարգը, բայց միևնոյն ժամանակ ինչպէս աշխարհական մարդ կառավարում էր և երկրի գործերը։

Կրօնաւորների ազդեցութիւնը այսպիսի մի խստակրօն սրբութեան շնորհիւ շատ փրկարար եղաւ ժողովրդի համար. աւանդութիւնները չեն սխալւում, երբ այդ ազդեցութեան չափը որոշելու նպատակով հաղորդում են զանազան նկարագրութիւններ, որոնք տանում են մեզ դէպի հրաշքների աշխարհը. այսպէս պատմում են, որ բազմաթիւ ուխտաւորների մէջ անպակաս են եղել հիւանդներ, անդամալոյծներ, դոսացեալներ և այլն, որոնք գտնում էին բժշկութիւն կրօնաւորների աղօթքով. յիշւում է նմանապէս, թէ կրօնաւորներն իրենց առաքինութեամբ նուաճում էին մինչև անգամ վայրենի գազաններին՝ արջերին, գայլերին, առիւծներին և կամ աղօթքով սատակեցնում էին վիշապներին։ Ինչպիսեան վանքի կրօնաւորներից մէկը աղօթքով կապեց այն գազանների բերանը, որոնք եկեղեցու լուսաբերներին պատառում էին։ Եթէ Հայոց կրօնաւորների այսպիսի գերբնական շնորհը ժառանգել չեն նոքա, որոնք այժմ հասարակ ժողովրդի մէջ թուղթուդրով գիլկապուկ են անում, գոնէ այդպիսիների արդի գոյութիւնը պարզ

ապացուցանում է Հայ ժողովրդի նախկին սերտ կապն իւր վանքերի հետ։

Այսնաւորների բարոյական ազդեցութիւնը շատ աւելի հեռու էր տարածւում քան իրենց նեղ ու անձուկ տաղաւարների սահմանը. նոցանից պատկառում էին աւազակներն և յուզկահարները. նոցա զօրութեամբ չեզոքանում էին յարձակմունքներն, յափշտակութիւններն և անակնուններն կոտորածները։ Մղեշէն գեղեցիկ պատկերացնում է Աբրահամ Խոտովանոզի նկարագրութեամբ նոցա այդ բարոյական նշանակութիւնը. Ի լուր համբաւոյ նորա, ասում է, իմաստնացան տգէտք, և ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լիսիք. բնակեալ էր ըստ մարմնոյ ի նեղ խցկանն և ահ սրբութեան նորա անկեալ էր զհեռաւորօք և զմերձաւորօք։ Յոյնք երանի ետուն վասն նորա աշխարհիս Հայոց. և բաղում բարբարոսք փութացան տեսանել զնա մարմնով. սիրելի եղև նա սիրելեացն Աստուծոյ և զբաղում ի թշնամեաց ճշմարտութեանն ած ի հաւանութիւն սուրբ սիրոյ։

Ը.

Ս. Լուսաւորչի հաստատած վանքերը, որքան և օգտակար էին, լիակատար բաւականութիւն չէին տալիս նորածին քրիստոնեայ հօտին. զի սա կարօտ էր տակաւին գործնական վարժանների, ուր կարողանար տեսնել քրիստոնէական կեանքի շօշափելի պատկերը և ուսանէր նորա գործածութեան եղանակը։ Ս. Լուսաւորչի թոռան թոռը մեծն Ներսէս Պարթև եղաւ այն առաջին անձը, որ տուեց Հայ ժողովրդին գործնական վարժարաններ։ Նա ոչ միայն, ինչ-

պէս վիպում են պատմիչները, հատատակ բոլոր գաւառներում յունարէն և ասորերէն դպրոցներ, այլ և բարեկարգեց ՝այոց եկեղեցին, հիմնելով վանքեր, օտարանոցներ, հիւրանոցներ, հիւանդանոցներ և ուրիանոցներ։ Այս նոր կարգերի նշանակութիւնն այնքան աւելի մեծ կ՝երևի, որքան աւելի խորին հեռաքննութեամբ ծանօթանանք նոցա հանդէս գալու ժամանակին։ Եթէ մեծն Սերսէս ոչ այդ ժամանակի, այլ մեր որդի ժամանակների համար պէտք է ծնուած լինէր, նորա սահմանած կարգերն այնուամենայնիւ իրեն ժամանակը նշանաւորող երևոյթներն եղան և մեծապէս նպաստեցին ՝այոց բարքերի ազնուանալուն։ Այն ժամանակ, երբ անդթութիւնը բուն էր դրել քրիստոնէութեան անունը կրող ՝այերի մէջ, երբ հիւանդներին, անդամալոյծներին հալածում էին շէնքերից դէպի անապատները, երբ օտարականներին և եկաւոր հիւրերին մերժում էին, երբ աղքատները, որբերը և ծերերը լքեալ վտարեալ սովամահ էին լինում, մեծն Սերսէս գործեց և քարոզեց իբրև գործնական վարդապետ։ Քարոզում էր ողորմածութիւն, և հատատակ աղքատանոցներ. քարոզում էր դթասրտութիւն, և հատատակ ուրիանոցներ. քարոզում էր մարդասիրութիւն, և հատատակ հիւրանոցներ և օտարանոցներ. քարոզում էր անձնուիրութիւն և ընկերասիրութիւն, և հատատակ մենաստաններ, անապատներ և եղբայրանոցներ. քարոզում էր ուսում, դիտութիւն և լուսաւորութիւն, և հատատակ որբանոցներ և վարժարաններ։ Նորան աջակից էր ընդհանուր բազմութեան հաւատն։ զի նա այդ խնդիրների համար գումարում էր ազգային — եկեղեցական ժողովներ, որոնց որոշմամբ սահ-

մնում էր Նորահատաստան կարգերի նիւթական ապահովութեան համար մշտական աղբիւրներ՝ այն է գիւղեր, ագարակներ, անտառներ և այլն։ Մեծն Ներսէսի հատատած այս կարգերից յետոյ, ինչպէս վկայում է Խորենացին, Հայոց երկիրն այլևս չէր «որպէս բարբարոսաց այլանդակեալս, այլ որպէս զքաղաքացիս համեստացեալս»։

Թէ մեծն Ներսէսի բարեկարգութիւնների գաղափարն արմատ ձգեց Հայոց մէջ, այդ երևում է նորանից, որ յետագայ դարերում ևս գոյութիւն ունէին նմանօրինակ հատատութիւններ։ Այսպէս՝ մենք գիտենք, որ Զ. դարում Սիւնեաց աշխարհի մէջ Արասխի վերայ շինուեցաւ Գիւտայ վանքը, որ մի ուրիշանոց ունէր. ժամանակի առաջնորդներն յատկացուցին այդ վանքին առանձին այգիներ Արասխի ափում. վանքի հարստութիւնն երևում է Սահմանոս Օրպէլեանի խօսքերից, որ ասում է թէ նա ունէր այն ժամանակ 1000 արջառ, 12 հազար ոչխար, 700 ուղտ, 600ձի, 400էշ և 170 կտուէպան այգիների մշակութեան համար։ Այսպիսի մի ուրիշանոց կար Սիւնեաց աշխարհում Ժ. դարում, երբ շինուեցաւ Նորավանքը. այդ ուրիշանոցը Սա. Օրպէլեանն անուանում է «դոդատուն». Զ. դարում Հնաստաս կաթուղիկոսը շինեց Մասիսի ստորոտում Եկոռի գիւղի մօտ մի վանք «ի տաճողութիւն հանդստեան հիւրոց և տնանկաց և աղքատաց»։ Ժ. դարում Հ. Իրաք գաւառի Հոռոմոսի վանքը կոչւում է «ասպնջականոց». Առողիկը պատմում է, որ այդ ասպնջականոցի հիմնադիրը Յովհաննէս վարդապետը, «երբ հանդիպում էր աղքատներին, հանում էր իւր զգեստը և տալիս էր նոցա. ճամբորդների համար վանքում պատրաստել էր հանդստա-

նալու տեղ այնպէսոր օտարներն անգամ հանդիսանում էին անդ, ինչպէս իրենց տան մէջ». այդպէս և եղել է Հռոմոսի վանքն Ասողիկի ժամանակ. ԺԻԲ. դարում մի ընդարձակ հիւրատուն է եղել Սանահնի վանքում: Ենոյ Ս. Փրկիչ եկեղեցու մօտ ևս մի օտարանոց է եղել, ուր մշտապէս ձրի հաց և տեղ էին տալիս եկաւորներին և օտարներին. 1173 թ. Ենոյ քահանաներից մէկը Տրդատ երէցը տուել է այդ օտարանոցին չորս այգի, երկու տուն և արտեր, որպէս զի դոցանով շահուին եկաւորները: Սոցա նման են եղել և Ուշաունիքի Նարեկայ վանքը, Դիրջանի Խլաձորի վանքը, Ենձևացեաց Հոգեաց վանքը, որ միևնոյն ժամանակ մի կուսանոց էր, և այլ շատերը: Հայոց աղքատների, հիւանդների և ամէն տեսակ կարօտեալների ապաստարաններն էին նոքա. այս աղցաւոր և վշտալի աշխարհիս երեսին միմիայն նոցա մէջ կենդանի հնչում էր աստուածային սփոփիչ ձայնը, թէ Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ: Ինչպէս տեսնում ենք արձանագրութիւններից, բարեպաշտ ժողովուրդը նուիրում էր այդ վանքերին արտեր, այգիներ, ջրաղացներ, ձիթահանքեր և այլն, որպէսզի նոցա բերքը ձրիաբար բաժանուի կարօտեալներին:

ԹԻ.

Հայոց վանքերի այն առաւելութիւնները, որոնց մասին էր ցարդ մեր խօսքը, բոլորովին նահմանում են նոցա գլխաւոր կոչման առաջ, որ է սպասաւորել ժողովրդական կրթութեանն և լուսաւորութեանը: Նոցա գործունէու-

թեանն այսպիսի մի ասպարէզ և ապագայ որոշողն եղաւ դարձեալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ. Նա հաւանեցնում էր թագաւորին, ասում է Ագաթանգեղոս, որ զանազան տեղերում մանուկներ ժողովին ուսում տալու համար. և թագաւորն հրաման տուեց Հայոց սահմաններին զանազան դաւառներից հաւաքել մանուկներին դպրութեան արուեստի համար, և նոցա վերայ հաւատարիմ ուսուցիչներ կարգել. և դպրոցների համար հասոյթներ ևս նշանակեց։ Բացի այս՝ Լուսաւորիչ անդադար գրում էր Կեսարիա և խնդրում էր Ս. Ղևոնդ հայրապետից, որ դպրութեան հմուտ մարդիկ ուղարկէ Հայաստան. զի «երկրի մանուկները տակաւին դպրոցումն էին, հունձը շատ էր և մշակները սակաւ»։ Գրէթէ հարիւր տարի ժամանակ հարկաւոր եղաւ, որ Լուսաւորչի ջանքը արդիւնաւոր լինէր Եկեղեցու համար և հունձին համապատասխան մշակներ հասնէին. և այդ այն ժամանակ, երբ մեծն Ներսէսի բացած դպրոցներից հանդէս եկան Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի նման հայրեր, որոնք Հայոց գրերի գիւտը յաջողեցուցին, Ս. գիրքը հայացուցին և ազգային դպրութեան նոր դարագլուխն ընծայեցին։

Իսկ երբ Պարսից հալածանքների երեսից Հայոց եկեղեցական դասը բռնութիւնների ենթարկուեցաւ, կրօնաւորներն հարկի տակ դրուեցան և արժանաւոր հովիւները տատաշխարհ աքսորուեցան, երբ Ս. Վարդանանց պատերազմից յետոյ Հայոց բազմութիւնն ևս տարագիր ցրուեցաւ լեռներն ու անապատները և մի ընդհանուր յուսահատութիւն թագաւորից ամէն տեղ, այդ իսկ ժամանակ պարսկական բռնութեան գործած բարոյական աւերակների տակից նո-

բոփեանուբ զարդարուած Հանդէս եկաւ Հայոց եկեղեցական ուխտն իւր վանքերով, որոնք այնուհետև Հայոց բարոյական պաշտպանութեան համար եղան «սիւնք աշխարհի, պարիսպք ընդդէմ թշնամւոյն և աստեղք լուսաւորք յերկրի» ինչպէս նմանեցնում է նոցա իւր բանաստեղծական հանճարով Շնորհալին Ներսէս։ Այդ նոր վանքերի մէջ զեկավարութիւնն այլ ևս ասորի և յոյն կրօնաւորների ձեռքը չէր. այստեղ ժողովուած էին կանոնի և հաղածանքների փոթութեան բովից եկած Հայ կրօնաւորներ, որոնց որոնի մէջ վառ և բորբոք էր ազգային եկեղեցու ինքնուրոյնութեան նախանձը. այստեղ գործում էին այժմ Գիւտի, Յովհան Մանդակունու և Բարդէնի նման գիտնական և անկախ հայրապետներ, Եզնիկ Կողբացու, Մովսէս Խորենացու, Եղիշէի և Փարպեցու նման կրօնաւորներ, որոնք մի ձեռով տարածում էին լուսաւորութիւն և ծաղկեցնում էին դպրութիւնը, միւս ձեռով հեռու էին մղում բարոյական թշնամու գաղտագողի յարձակումներն և խլրտումները։

Գլխաւոր տեղն այդ վանքերի մէջ անշուշտ Վաղարշապատու Կաթուղիկէ Եկեղեցուն է պատկանում. դեռ Կորիւն Աբանեզին նորա մասին գրում է, թէ «այնտեղ ինքնաբերաբար գալիս էին շատ ուսումնատենչ բազմութիւն և թափւում էին ասորաձոյլ գիտութեան աղբիւրի վերայ. զի Արարատեան գաւառի մէջ թագաւորների և հայրապետների կայանքում բղխեց Հայերի համար շնորհք»։ Վահան Մամիկոնեանը ուրիշների կարգում Կաթուղիկէ Եկեղեցին էլ նորոգել տուաց և այնտեղի վերատեսչութիւնն յանձնեց Վաղաք Փարպեցուն։ Վահանից զատ այդ հաստատութեանն օգնում էին և Կամսարական իշխանները

«պաղովք և ամենայն պիտոյիւք», երբ Պաղարի թշնամիներն իբրև լոյսի թշնամիներ՝ վանեցին նորան վանքից և յափշտակեցին նորա կայքի հետ միասին նաև նորա յուներէն գրքերը, այնուհետև Մայր Եկեղեցին ճնաց զուրկ լուսաւորչական անունից և պահպանուեցաւ միայն իբրև մի նշանաւոր հնութիւն մինչևոր ԺԷ. դարում նորոգուելով վերստին դառաւ իւր նախկին դիրքը։

Կաթուղիկէ եկեղեցուց յետոյ նշանաւոր էր Ինանկեան Ս. Կարապետի վանքը, որի կրօնաւորների թիւը Չ. դարում հասնում էր մինչև 400ի. կոչում էր «մեծահանդէս մայրաքաղաք». այնտեղ ծաղկեցաւ և գիտութիւնը. Չ. դարի առաջին տօմարագէտն հայր Եթանաս, որ պատմիչների վկայութեամբ տեղեակ էր բոլոր ազգերի տօմարին, Ինանկեան վանքի կրօնաւորներից էր և 551 թուի Դունի ժողովում կազմեց Հայոց ազգային եկեղեցական տօմարը։ Այս վանքի առաջնորդներից մէկն էր Յովհան եպիսկոպոս Մամիկոնեան Տարօնի պատմիչը։ Ի. դարում, երբ Պարսիկներն յարձակուեցան Տարօնի վերայ, Ինանկեան վանքի կրօնաւորները թուով 395 վտանգի ժամանակ ժողովրդին օգնելու համար «սեւազգեստ մոմեղենօք և կնկղաւորք ձեռները» խաչագրօշ բարձրաբուն «դուրս եկան թշնամու բանակի դէմ և պատերազմ վարեցին Հայոց գնդերի հետ միասին։ Եւ Գլակայ վանքի վերայ մեծ խնամք ունէին Մամիկոնեան և Կամսարական տոհմերը. բազմաթիւ գիւղեր, ընդարձակ կալուածներ և առատ տուրքեր էին սահմանուած «մեծահանդէս մայրաքաղաքի» պայծառութեան համար. Ս. Կարապետի անունը՝ նուիրական ամէն Հայի համար՝ առաւել մեծ ոգեւորութիւն էր ազդում Տարօնի ժո-

ղովրդին և նորա իշխաններին. պատերազմների, վտանգների և ամենայն դժուարին վիճակի ժամանակ նոցա բացագանչութիւնը Ս. Կարապետի անունն էր. այդ պատճառով ամէն մի յաղթութեան առաջին նուէրը նորան էին մատուցանում և ամէն մի վրէժխնդրութիւն նորա անունով էր լինում։

Գլակայ վանքի նման Ի. դարում Ծաղկեցան միքանի այլ վանքեր. պատմիչներն յիշում են Երազածոտնի Ս. Աստուածածնի անունը. սորա ղեկավարն էր Թէոդորոս Գռեթենաւորը, որին աշակերտել էին Սահակ Զորափորեցին և Յովհան Օձնեցին։ Եթէ այսօր անյայտութեան մառախուղի տակ ծածկուած է Երազածոտնի Ս. Աստուածածնի տեղը և պատմութիւնը, Զորափորեցու գեղեցիկ շարականներն և Յովհան իմաստասէրի ոգելից ճառերը, մեծապէս փայլեցնում են այդ վանքի առաջնորդի անունը։ Ինչպէս Յովհան Իմաստասէր վկայում է, Թէոդորոսը ոչ միայն իւր գիտցածն էր հաղորդում աշակերտներին այլև շատ տեղերից ամենալաւ բաները ծաղկաքաղ անելով, լրացնում էր նոցա ուսման ծարաւը և իւր գիտութիւնը շարունակ կատարելագործում էր։ Այս երևում է և Օձնեցու ունեցած պատրաստութիւնից. Յովհաննէս Կաթուղիկոսն ասում է, որ նա «հմուտ և տեղեակ էր քերթողական շարագրաց և կրթական վարժից թէոնականաց»։

Մի նշանաւոր կեդրոն էր և Հիրակայ Գպրեվանքը, որի առաջնորդն Ի. դարում Բարսեղ Հոռն էր. սա, ինչպէս յայտնի է, գրեց Ս. Մարկոսի աւետարանի մեկնութիւնը և իրեն ժամանակի «իմաստուն մարդիկներից» մէկն էր. Կիրակոս Գանձակեցու ասածով նա ընտրեց և խմբագ-

լեց այն շարականների ժողովածուն, որոնք եկեղեցիներում ընդունեցան և կոչեցան Հոնընտիր։ Սակայն բոլոր այս վանքերի մէջ կրթական նշանակութեամբ ամէնից բարձր տեղը պատկանում է Սիւնեաց Վարդապետարանին։

Ժ.

Աւանդութիւնը շատ խորին հնութիւն է ընծայում Սիւնեաց Վարդապետարանին և նորա ծագումը հասցնում է մինչև Առաքեալների ժամանակը. այդ վանքը նոյն իսկ Տաթևու կամ Ս. Եւստաթէոս Առաքելոյ ուխտն է. սակայն նորա նշանակութիւնը բարձրացաւ այն ժամանակ, երբ մեծն Ներսէս և Սահակ Պարթև շնորհեցին նորան արտօնութիւններ։ Ե. դարում Սիւնեաց Անանիա եպիսկոպոսը մի գպրոց հաստատեց այստեղ և Յիսիսամին անունով մէկին, որ Ս. Թարգմանիչների աշակերտներից էր, վարժապետ կարգեց։ Ստեփաննոս Օրպէլեանն ասում է, որ Սիւնեաց Վարդապետարանը «գիտութեան աղբիւր էր և իւր մէջ պայծառացած գպրոցներով ամէն հայ գիտունների գլուխն էր. զի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ սորան էին տուել արտօնութիւն Ս. գիրքը թարգմանելու և մեկնելու»։ Զ. դարում այս Վարդապետարանի գլխաւոր ղեկավարն էր Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսը, որ «Մովսէս քերթողահօր աշակերտն էր, քաջ հռետոր և անյաղթ փիլիսոփայ, քերթող և թարգմանիչ». նորա աշակերտներից էր իւր յաջորդը Մաթուսաղա եպիսկոպոս, որ ոչ միայն Սիւնեաց Վարդապետարանը ծաղկեցուց, այլև Է. դարում հիմնեց Արշարունիքում Վարդիկ Հայր վանքը, որ կարճ ժամանակի

մէջ լցուեցաւ զանազան գաւառներից եկած աշակերտներով։ Մաթուսաղային հոչակում են պատմիչներն իբրև «մեծ քերթող, փիլիսոփայ, ամէն առաքինութիւններով զարդարուած, քերթողութիւնն ուսած և ճարտասանականով վարժուած, փիլիսոփայական արուեստին հմտացած, ամենայն իմաստութեամբ լի և գիտութեամբ կատարեալ» անձն։

Նթէ եղել են Հայաստանում վանքեր, որոնց փառքը և անշքութիւնը կախուած է եղել պատահական հանգամանքներից, Սիւնեաց Վարդապետարանը նոցա շարքում չէր հին ժամանակ։ Այստեղ մշտապէս լոյս էր տալիս գիտութեան ճրագը. նոր անձինք կամ նոր հանգամանքներ միայն աւելացնում կամ պակասեցնում էին այդ լոյսի պայծառութիւնը, այլ երբէք չէին հանգցնում։ Սիւնեաց Վարդապետարանի այսպիսի յատկութիւնը և նորա ունեցած համբաւն Հայոց մէջ մասամբ կարելի է պատկերացնել Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսի կեանքով. սա Հայոց նշանաւոր երգիչներից մէկն է. իւր սկզբնական կրթութիւնն առաւ Դունի կաթուղիկոսարանում և ապա մտաւ Մաքենոցի վանքը. պատմիչն ասում է, որ «մի քանի տարի յետոյ, երբ հասակն առաւ, անպատշաճ համարեց տգիտութեան խաւարի տակ մնալ, այլ աշխատում էր գիտութիւն ձեռք բերել. ուստի ուղարկեց, գնաց դէպի գիտութեան աղբիւրը այսինքն Սիւնեաց Վարդապետարանը, որ բոլոր Հայ գիտունների դլխաւոր տեղն է. ինչպէսոր աթենացիք Յունաց և Հռովմայեցւոց մէջ ճոխացած էին և գիտութեան մայր էին կոչւում, այնպէս էլ սոքա Հայաստանում։ Ստեփաննոսն աշակերտ եղաւ Սիւնեաց Մովսէս եպիսկոպոսին. շուտով հմտացաւ աստուածային գիտու-

թիւններին և հրաման առնելով եպիսկոպոսից, նստաւ բարեւնական ամբիոնը» ու մեկնում էր վարժարանի աշակերտների առաջ աստուածային գրքերը. այնտեղից եկաւ, մնաց կաթուղիկոսարանում և չէր դադարում երբէք հին և նոր կտակարանները մեկնելու. պատահեցաւ, որ միանգամ հաւատի մասին վէճի բռնուեցաւ մի իշխանի հետ. և որովհետև «արտաքին փիլիսոփայական արհեստին» հմուտ չէր, իշխանը նորա խօսքերին չհաւանեցաւ և անպատուեց նորան, անուանելով «տգէտ». այն ժամանակ Ստեփաննոսը ծածուկ հեռացաւ քաղաքից և իւր տարազը փոխելով գնաց Կ.-Պոլիս. այնտեղ յունարէն և լատիներէն ուսանելով, զօր ու գիշեր վարժուեցաւ նոցա գրքերով և արհեստներով «փիլիսոփայական ոճին» համեմատ: Եթէնք էլ գնաց և այնտեղ էլ վարժուեցաւ ամէն գիտութիւններով. երբոր վերադարձաւ Հայաստան, Սիւնեաց իշխանները Ստեփաննոսին ընտրեցին իրենց առաջնորդ: Տաթեւու առաջնորդների մէջ ոչոք այնպիսի արդիւնաւոր և համապատշաճ գործադրութիւն չէ տուել իւր հովուական գաւազանին, վարդապետական խօսքին և ուսումնական գրչին, ինչպէս Ստեփաննոս եպիսկոպոսը. պատմիչն անուանում է նորան «սուր հրեղէն ի ձեռին ամենասուրբ Հոգւոյն, և մեծ իմաստասէր, որ աստուածային օրինաց խրատէր և ուսուցանէր. որպէս սուր հատանէր զախտացեալսն, որպէս բժիշկ իմաստուն բժշկէր զվիրաւորսն, որպէս աղ ընտիր համեմէր զանհամեալսն, որպէս արեգակն պայծառ լուսաւորէր զնաւարեալսն»: Նա մեկնեց Ս. գրքի զանազան մասերը. գրեց զանազան ճառեր, երգեց շարականներ և մեղեդիներ, որոշեց եկեղեցական երաժշտութեան ձայներն և այլն: Ստե-

փանոսի այս բազմակողմանի արդիւնաւոր գործունէութիւնն է, երևի, պատճառ, որ երբ նա մի անզգամ կնոջ կատաղութիւնը զոհ գնալով, 735 թուին յանկարծակի սպանուեցաւ, ժողովուրդն իւր զգացած յարգանքն և բողոքը բնութեան երևոյթների մէջ զետեղեց. զի անմիջապէս նորա մահուան վերայ սուգ արին անշունչ տարերքը. «խաւար շշափելի կալաւ զդաւառն ամենայն զքառասուն օր. եռայր երկիրն ահեղ դողացմամբ, լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակտէին, աղբիւրք խցէին, գետք կորնչէին և ամենայն տեղի երկրէր տատանմամբ»: Մեծ վարդապետի մահից յետոյ Սինեաց Վարդապետարանը դարձեալ յարատևեց իւր լուսաւորչական ասպարէզի մէջ և հետզհետէ պայծառացաւ: Թ. դարում Տաթևու առաջնորդներից մէկը Յովհաննէս եպիսկոպոսը, որ լի էր «աստուածեղէն շնորհիւ, հայուստ խոհականաւն և փարթամ յիշողականաւն» նորոգում և ընդարձակում է այս վանքի շինութիւնները այն կարօտութեան չափով, որ զգալի էր այդ ժամանակ. «զի անպատշաճ էր այնպիսի ՆԵՇԻ ՆԱՅՐԱՓԱՂԱՓԻ և աշխարհաքանդ-Նաբ ժողովարանի առանց մեծ կաթուղիկէի լինել». իշխանների օժանդակութեամբ Ա. Պետրոս և Ա. Պօղոս առաքեալների հոյակապ եկեղեցու շէնքը կանգնելուց յետոյ, երբ նորա օծման «աշխարհախումբ հանդէսն» էին կատարում, տեսիլք երևցաւ առաջնորդին. Ա. Առաքեալներից մէկը մի բանալի և միւսը գիրք տուից նորան. և այսպէս աւանդեցին իրենց պատգամը. «այդ բանալի արքայութեանն է. կացցէ յեկեղեցւոջս, զի ասա բանալոց է դուռն դրախտին ամենայն մեղուցելոց. և այս գիրք կացցէ ի ամն, զի ապրի ԲԵՂԵԼՈՅ Է ՇՆՈՐՀ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ. և ոչՔԱՆԻ ՓԱՐՈՂԱՐՆԻՆ ԱՌՔԻ

գրքերեցոյ սոյա ծնողոց է անապակ և անխարեն-դրդ»։ Ի՞նչ աւելի ճարտար վկայութիւն քան այս սանդղութիւնը, որ ակն յայտնի պատկերացնում է մեր աչքի առաջ նախ՝ թէ Հայոց մէջ գպրոցն և եկեղեցին անանջատ են միմեանցից և երկրորդ՝ թէ Տաթևու Վարդապետարանն Հայաստանեայց Եկեղեցու ուղիղ վարդապետութեան առաջին և գլխաւոր սանդղապահն է եղել. անշուշտ իւր այս վերջին նշանակութեամբ հռչակաւոր Վարդապետարանը շնորհապարտ է գիտութեանը կամ, տեսիլքի խօսքով ասած, այն զրքին, որ Ս. Առաքեալները գրին նորա մէջ։ Եւ յիրաւի զանազան ժամանակներ այս վանքն եղել է լի «ծովամատոյց, անցաղթ» փիլիսոփաներով, «աննման» երաժիշտներով, «բանիբուն» վարդապետներով, «անհամեմատ նկարիչ և գրող արհեստաւորներով». Ժ. դարում այդ վանքն ունէր 500 կրօնաւոր եղբայրներ. յիշեալ Յովհաննէս եպիսկոպոսը շինեց այդ տեղ գրատուններ. ԺԳ. դարում Տաթևու հռչակաւոր առաջնորդներից մէկը Ստեփաննոս Օրպէլեան Սիւնեաց պատմութիւնը գրելու ժամանակ մեծապէս շահուեցաւ այն բազմաթիւ յիշատակարաններից, որոնք շտեմարանեալ էին Տաթևու գրադաններում։

ԺԵ.

Երբոր Ալաբացիք հաստատուեցան Հայաստանում, շարունակ հետամուտ էին խանդարելու Հայոց իշխաններին միանալ իրար հետ. այս քաղաքականութիւնից Ժ. դարում ծնան Հայաստանում երեք առանձին թագաւորութիւններ՝ Բագրատունեաց, Արծրունեաց և Սիւնեաց. նոքա

իրենց գոյութեան մրցման մէջ միայն մի օգուտ տուին երկրին՝ այն է նպաստեցին նեղքին մտաւոր շարժմանն և յառաջադիմութեանը. իւրաքանչիւր թագաւոր ջանք էր անում զօրացնել երկրի մէջ կրթութիւնը, գիտութիւնը և արուեստը, գրաւել եկեղեցական դասի համակրութիւնը և փառաւորուել աշխարհաշինութեան հոչակով։ Այսպէս՝ Անւոյ թագաւորների մեծագործութիւնների մասին պատմում են մայրաքաղաքի հոյակապ պարիսպները, երկնաբերձ աշտարակները, կամարակապ հաստահիմն կամուրջները, անդնդային քարակտուր ուղիները, կարուանների պատսպարութեան համար կանգնած ընդարձակ իջևանները, արքունիքի բնակութեան ու վայելչութեան համար շինուած ապարանները ու դաստակերտները և, որ ամենից գլխաւորն է, բաղմաթիւ շքեղ և պայծառ տաճարները։ Վասպուրականի թագաւորներն էլ ունեցան իրենց հոյակապ յիշատակներն Աղթամարում, Ոստանում, Վանում և Երասխի ափերում։ Սիւնեաց թագաւորների մեծագործութիւնների յիշատակը պահպանել են Վայոց ձորի Ցախացքարն իւր Հրաշկաբերդով և Սիւնեաց բաղմաթիւ մենաստանները։ Թագաւորների օրինակին հետևում էին իշխաններն և մեծատուները, որոնք իրենց կալուածներում նոյն ոգին էին արծարծում ինչոր իրենց տէրերը։ Այսպիսի փոխադարձ մրցման գեղեցիկ պտուղն են Հայոց վանքերը։ Ամէն բան իւր եկեղեցու ազատութեան համար կորուցած Հայ ժողովուրդն իւր սիրոյ առարկայ ընտրած էր միմիայն հոգևոր կեանքը, որին հասնելու միակ ճանապարհն է, անշուշտ, հոգևոր մարդութիւնը. չկար խորութիւն մեծի և փոքրի, իշխանի և հպատակի, եկեղեցականի և աշխարհա-

կանի մէջ. ամէնքն այդ հոգևոր ձգտումն ունէին. քաղաքականութիւն զանազան դրօշակների տրոհեալ տարբեր դասերին միևնոյն աւագանի, միևնոյն եկեղեցու և միևնոյն բարոյական կանոնների հետ կապող զօրութիւնը այդ հոգևոր կեանքի ակընկալութիւնն էր։ Նշանաւոր է այն, որ հարեւան համարիւն գաւառներ քաղաքական հաշիւներով իրարու հակառակ միանում էին օտարի հետ, սակայն երբէք չէին զլանում բարեկամ և պաշտօղ մնալ այն եկեղեցուն, որ իրենց հոգևոր կեանքի պատճառն էր. բարոյական միութեամբ միշտ հակառակ էին այն կրօնին կամ դաւանութեանը, որ վնասակար էր իրենց եկեղեցուն. նոքա դաշնակից չէին լինում օտարին, երբ խնդիրը կրօնական էր և շօշափում էր իրենց խղճի ազատութեան սահմանները. նոքա պատրաստ էին հարկաւոր ժամանակ նիւթապէս վնասել իրարու, բայց չէ տեսնուած, որ նոքա դիմեն վնաս տալ իրարու, կազմելով տարբեր աղանդներ և հերձուածներ. քաղաքական հերձուածը խոտելի չէր նոցա աչքում, զի անցաւոր էր և մարմնական. իսկ կրօնական հերձուած խոտելի էր և անհընարին, զի վնասում էր հոգևոր կեանքին։ Ահա վկայ այն ճարտարապետական հնութիւնները, որ մնացել են յիշեալ երեք թագաւորութիւնների ժամանակից. մենք տեսնում ենք, որ շատ հաղուագիւտ են իշխանական ապարանքներ և աշխարհային անցաւոր կեանքի այլ օթեւաններ. մինչդեռ ամենուրեք փայլում են վանքեր և եկեղեցիներ, որոնք իրենց քանակութեամբ, տարածութեամբ և շքեղութեամբ անհամեմատ առաւել են միւս ճարտարապետական յիշատակարաններից։ Մ իայն Անի քաղաքի մէջ աւանդութիւնն յիշում է 1001 եկեղեցի, որ, ինչքան և առասպելական երևի,

վիպայում է ոչ այնքան քաղաքի բազմամարդութեան, որքան բնակիչների կրօնական ջերմեռանդութեան մասին։ Մի այն Երազած լեռն իւր չորեքծագեան ստորոտներով ամբողջապէս ներկայանում է իբրև մի վանական գաւիթ. քայլ չկայ առանց վանքի, մինչդեռ շատ օթեւաններ պէտք է անցնել, որպէսզի կարելի լինի մի որևիցէ այլ շէնք տեսնել։ Եթէ յիշեալ երեք գաւառական թագաւորութիւնների սահմանները բաժանելու լինինք, մենք կըտեսնինք, որ Ռադբատունիք իրենց հովանաւորութեան տակ ունին երեք «մեծ մայրաքաղաքներ.» դոքա են՝ Հաղբատ, Սանահին և Հոռոմոս. բացի այդ՝ նոցա յիշատակներն են՝ Ռադարանի, Մրենի, Տիկորի, Երազգաւորսի և այլ բազմաթիւ վանքերը. նոցա իշխանութեան ժամանակ հիմնուեցան և նորոգուեցան նոյն տերութեան մէջ և ուրիշ նշանաւոր վանքեր, որոնց խնամակալը զանազան իշխաններն էին. այսպէս՝ Վահրամ Պահլաւունին հիմնեց Մարմաշենու վանքը. Գրիգոր Մագիստրոս շինեց և նորոգեց Հաւուցթառայ, Կեչառիսի, Ռշնոյ և այլ միքանի վանքեր. Վեստ Սարգսի հովանաւորութեան տակ էր Խծկոնից վանքը։ Սըմբատ Մագիստրոսը շինեց Ռաղնայրի «փառակատեա» վանքը։ Միւնեաց իշխանների բարեպաշտական մրցման կոթողներն են Սևանայ հովտի, Վայոց ձորի, Երնջակայ հովտի հրաշակերտ մենաստանները, որոնց մէջ փայլում են Մաքենոցի, Թանահատի, Խոտակերից, Կոթայ և Սևանայ անուանները։ Երծրունիք ծածկեցին Վանայ ծովի կղզիները և գրեթէ ամբողջ ոլորտը բազմաթիւ վանքերով, որոնց մէջ երևելի են Նարեկայ Ս. Ուխտը և Աղթամարը։

Վանքերի բազմանալուն նպաստեց և մի այլ հանգա-

մանք։ Ժ. դարում Երուզանդացւոց Ռոմանոս կայսրը հալածանք հանեց իւր հպատակ Հայերի դէմ, որովհետև նոքա չէին յօժարում դաւանութեամբ միանալ Յունաց հետ. այդ հալածանքների պատճառով շատ կրօնաւորներ փախան Հայաստան. Անոյ թագաւորները և Հայոց կաթուղիկոսներն, ընդունելով նոցա, թոյլ տուին իրենց իշխանութեան սահմաններում բնակելու. այդ կրօնաւորներն և պատճառ եղան միքանի վանքերի վերանորոգութեանն և բարգաւաճմանը. այդպիսիների կարգումն են Արշարունեաց Կամրջաձորի վանքը, Շիրակ գաւառի Հոռոմոն և Ս. Գրիգորն Էխուրեանի ափում, նաև Գուգարքի Սանահինը։

Նորահաստատ կամ նորոգած վանքերն եղան պատսպարան Ս. Գրքի ուսումնասիրութեամբ և մանուկների դաստիարակութեամբ պարապող կրօնաւորների։ Այսպէս մենք գիտենք, որ Ժ. դարում ծաղկեցաւ Ոշտունիքում Նարեկայ «մեծափառ և բարձրապատիւ» ուխտը, որի առաջնորդն էր «մտավարժ փիլիսոփայ» Նարեկացին Անանիա. նորա աշակերտն Ուխտանէս պատմիչը, որ գրեց Հայոց պատմութիւն, տալով մեզ մանրամասն տեղեկութիւն և Հայոց ու Վրաց բաժանման մասին, անուանում է իւր վարդապետին «վսեմական ի հարս և տիեզերական վարդապետ՝ կենդանախարուկեալ սուրբ և պարկեշտ վարուք, հոգեւոր հեղինակ և հռչակաւոր հռետոր». նոյն պատմիչն հաղորդում է, որ Անանիա Նարեկացին, գալով Խաչիկ Ա. կաթուղիկոսի մօտ, նորան ընծայեց «զգիրս Հաւատարմատ, որ ընդդէմ երկաբնակացն». իբրև թշնամի զանազան աղանդների և հերձուածների Անանիան գրով և խօսքով մաքառեցաւ Թոնդրակեցւոց և այլ աղանդաւորների հետ. նո-

լա աշակերտներից մէկն է և «Նարեկայ վանից վանական» պատչելի բանաստեղծն Ս. Գրիգոր Նարեկացի, որ իւր բազմարովանդակ աղօթքների մէջ «սրտի խորքերից խօսելով Աստուծոյ հետ» մեծ հմտութեամբ պատկերացնում է Ամենակալի մեծութիւնը և մարդուս ոչնչութիւնը. չնայելով իւր բազմաթիւ օրինակների երկասիրութիւններին և մեծաւոր զարգացմանը, Նարեկացին համեստութեամբ անուանում է իրեն «յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց»: Մի ենոյն դարումը Երշարունեաց Կամրջաձորի վանքում կային մինչև 300 կրօնաւոր. նորա առաջնորդներից մէկը Սամուէլ Կամրջաձորեցին, մականուանեալ իմաստակ, վարժ էր Ս. Գրքի գիտութեան, տօմարագիտութեան և երաժշտութեան մէջ. Մատթէոս Ուռհայեցին պատմում է, որ Ժ. դարում, երբ մի տօմարական վէճ ծագեցաւ Բիւզանդիայի վարդապետների մէջ, կայսրը հրամայեց և Սամուէլին կանչել վիճաբանութեան. Յունաց բոլոր իմաստունները «շարժեցին ի վերայ Սամուէլի զամենայն զրեանս տանն Յունաց և ոչ կարացին շարժել զնա ի ճշմարտութեանց անտի»: Նոյն վանքում ծաղկեցաւ ԺԱ. դարում Գէորգ Ուռճեցի հարիւրամեայ ծերունի ատենախօսը, որին անուանում է պատմիչն «աղբիւր մշակնջենաբուղխ վտակաց և լիզու հրեղէն հրոփն ներկեալ»: Հիրակայ Հռոմոսի վանքն ևս ունեցաւ իւր գիտնական վարդապետները, որոնցից մէկին Յովհաննէսին յիշում է Ասողիկ: Այդ վանքն ունէր և մի հարուստ մատենադարան: Սանահնում ևս կար մի մեծ գրատուն ուր ժողովուած էին, ինչպէս Կիրակոս Գանձակեցին է ասում, շատ գիտնական և ուսումնասէր մարդիկ, որոնցից մէկն է Անանիա

Անանահնեցին այր մտաւոր և հանճարեղ, գիտող տօմարական արհեստի և աստուածային գրոց մեկնող։ Անանահնից ոչ պակաս երևելի էր գիտութիւններով և լուսաւորութեամբ Հաղբատու վանքը, ուր Ժ. դարում եղել է մինչև 500 կրօնաւոր. այնտեղի մատենադարանը, որ պատմիչներն անուանում են «ամենափարթամ գանձարան» մատամբ տեղաւորւում էր այրերի մէջ. կրօնաւորներն այնքան յափշտակւում էին այդ գանձարանի ուսումնասիրութեամբ, որ մինչև անգամ օրերով մոռանում էին իրենց առանց այն էլ սակաւապէտ կերակուրը. այդ քարանձաւների գրատուներն և նիւթ տուին ԺԱ. դարի վերջերում Յովհաննէս Սարկաւագ վարդապետին կազմելու իւր սարկաւագաղիր տօմարը. Կիրակոս Գանձակեցին տրա ուսումնասիրութեան բազմաթիւ յիշատակները թուելով, նորագիւտ տօմարի մասին այսպէս է խօսում. «Սա զբազմաց փափաքելին և ոչ ձեռնհաս զհաստատ և զանշարժ տօմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատանոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տօմարի ընդ Հայոց»։ Իւր ընդարձակ հմտութիւններով և սուրբ վարքով Սարկաւագ վարդապետը «մեծիմաստն քան զյոյովս և հանճարեղն յամենայնի» գրաւեց դէպի Հաղբատու մենաստաններն առատ բազմութիւն ուսումնասիրաւ կրօնաւորների, որոնց մէջ յիշատակութեան արժանի են՝ ժամանակագրութիւնների հեղինակ Սամուէլ Անեցին և Ելաւկայ որդին Դաւիթ, որ «կանոնք գրեաց զիւրահաս»։ Իշխաններ և թագաւորներ պատկառանօք խոնարհեցնում էին մեծ վարդապետի առաջ իրենց գլուխը նորա օրհնութիւնն առնելու. նա թողեց և մի այլաբանական երգ Սա-

բեկի վերայ, ուր պատկերացնում է միայնակեացի նշանակութիւնը. ունեցաւ և շատ ճառեր ու մի պատմութիւն, որ տակաւին անծանօթ է։

Միւս վանքերի մէջ առանձին առանձին փայլել են Սեւանայ վանքը, ուր Թ. դարում հրեշելի եղաւ Մաշտոց վարդապետը՝ պատմագիր Յովհաննէս կաթուղիկոսի ուսուցիչը, Թեղենեաց և Հաւուց Թառայ վանքերը, որոնք Նարեկայ և Կամրջաձորի ուխտերի նման, առանձնապէս նշանաւոր էին երաժիշտներով, Հոռոմայրի Ս. Ուխտան ու Սաղմոսավանքը ունէին ընդարձակ գրատուներ եւայլն։

ԺԲ.

Դարերի ընթացքում Հայոց վանքերի մէջ մտան նոր կարգեր և փոփոխութիւններ, որոնք ծնունդ էին իրենց ժամանակի, թէև երբէք չփոխուեցաւ Ս. Լուսաւորչի կազմակերպութեան հիմքը. նոր պայմանները, որ մեծ մասամբ բարոյական էին, եւս առաւել հաստատեցին այդ կազմակերպութիւնը. և այս ունեցաւ օգտակար ազդեցութիւն վանքերի ապագայի վերայ։ Ինչպէս յայտնի է, վանքը մի եղբայրութիւն է և նորա իւրաքանչիւր անդամը եղբայր. սակայն հետզհետէ մտան նորա մէջ դերազանցութեան պայմաններ. դիտութիւնը, հասակը, վարքի սրբութիւնը, եկեղեցական աստիճանը և այլն որոշում էին իւրաքանչիւրի դերազանցութիւնը. ամէնքը կրօնաւորներ էին, բայց ոչ ամէնքը կոչման և աստիճանի տէր. քահանաներն և վարդապետները վանականների մէջ ամէնից պատուաւոր տեղն էին բռնում. նոցանից էին ընտրւում առաջնորդներն և

եպիսկոպոսները։ Նախապատիւ էին վարդապետները. վանական կանոններով և ընդհանրացած սովորութիւններով մշակուել են նոցա համար կարգապահութեան միջանի պայմաններ, որոնք Դօշ Մխիթարի սահմանելով այս են՝

Ա. Վարդապետ նշանակում է այնպիսի կրօնաւոր, որ քաջ գիտէ հին և նոր կտակարանը և բոլոր կանոնական հրամանները. նորա պաշտօնն է քարոզել, ուսուցանել Ս. Գիրքը, բացատրել կանոնները և լուծումն տալ կանոնական հարցերին։

Բ. Կրօնաւորն, եթէ կամի վարդապետական կոչումն ընդունել, պէտք է ունենայ նախակրթութիւն այսինքն պէտք է քաջ իմանայ հին և նոր կտակարանը և կանոնական հրամանները. նա պէտք է աշակերտութիւն անէ մի վարդապետի և ձեռք բերէ նորա վկայութիւնը։

Գ. Միայն վարդապետները կարող են տալ վարդապետական կոչումն. անհրաժեշտ է, որ երկու երեք վարդապետ միասին լինին կոչում տուողները, թէև կրօնաւորն աշակերտած լինի միայն նոցանից մէկին. եթէ եպիսկոպոսի, հայրապետի և իշխանի հրամանը ձեռք բերուի, աւելի լաւ է, բայց այդ անհրաժեշտ չէ. կոչումն ստացող վարդապետի արտաքին նշանը գաւազանն է, որ քարոզութեան ժամանակ իրաւունք ունի կրելու։

Դ. Եթէ կրօնաւորն աշակերտ լինի մէկին և չհաւանելով նորան, ամբարտաւանութեամբ գնայ ուրիշի մօտ և նորանից առնի վարդապետական կոչում, այն ժամանակ նորան պէտք է դատել. նա պարտաւոր է հրապարակաւ կրկնել այն, ինչոր առաջին վարդապետից ուսել էր և կամ պէտք է զղջայ և ուղղուի իւր առաջին վարդապետի մօտ.

իսկ այն վարդապետը, որ այդպիսի կրօնաւորին կոչում տուեց, նոյնպէս արժան է պատժի. նա զղջալուց յետոյ պէտք է նեղուին խնդրէ այն վարդապետից, որին նա անպատուել էր, առանց նորա կամքին կոչումն տալով նորա ստահակ աշակերտին։

Ե. Նոքա, որոնք պատրաստւում են կոչումն ստանալ, պէտք է հարցաքննուին, մանաւանդ այնպիսիները, որոնք շատերի մօտ աշակերտութիւն են արել։

Զ. Մանուհիներին ուսուցանելու համար պէտք չէ վարձ առնել. եթէ նոքա որբ են, պէտք է խնամ տանել նոցա. իսկ եթէ որբ չեն, ծնողքը պէտք է միայն կերակուրն և հագուստը հոգան. եթէ ունեւոր են կարող են ուսուցիչներին ընծայ տալ. իսկ եթէ չքաւոր են, պէտք չէ պահանջել։

Է. Կոչումն ստացողը պէտք է ունենայ աշակերտներ. շրջագայելու ժամանակ պէտք է զբաղուած լինի գործով. իսկ եթէ նա թափառում է առանց գործի և միայն հասարակ հետաքրքրութեան համար գնում է ամէն տեղ, այնպիսին դատապարտելի է. պէտք է առնել նորանից դաւազանը և նորա ձեռքը տալ թափառականի ցուպ։

Ը. Իրարուց աշակերտ փախցնելը դատապարտելի է. առանց գրի և փոխադարձ հաւանութեան իրարուց աշակերտ առնել կարելի չէ։

Թ. Եթէ միևնոյն եղբայրանոցի մէջ երկու կամ մի քանի վարդապետներ լինին, այն ժամանակ նոքա առաջնորդի հրամանով իրենցից մէկին, որ աւելի յառաջադէմն է, պէտք է ընտրեն իրենց դուխ (աւագ կամ ծայրագոյն վարդապետ), որպէսզի իրենց մէջ կարգ պահպանէ. հակառակողներն և ստահակները եղբայրների միաբան վճռով պէտք է հեռանան նոցա միջից։

Ժ. Աւագ վարդապետի իրաւունքն է Հայրապետի կամ եպիսկոպոսի հետ միասին վիճակ դուրս գալ կամ նոցա հաճութեամբ մէկ ուրիշն նշանակել, որպէսզի չլինի թէ եպիսկոպոսը կանոններից դուրս դայ:

ԺԱ. Վարդապետն իրաւունք ունի բանադրութիւն կարդալու. եթէ մի վարդապետ եկեղեցականներից կամ աշխարհականներից մէկին բանադրած է, մի ուրիշ վարդապետ իրաւունք չունի բանադրեալին արձակելու. զի ով որ կապել է, նա պէտք է արձակէ:

ԺԲ. Եթէ մի վարդապետ հիւր գնայ մէկ ուրիշ վանք, ուր վարդապետ կայ, կարող է այնտեղ քարոզ ասել, եթէ վարդապետն և եղբայրները կամենան կամ հրաւիրեն. խօսելու ժամանակ պէտք է զգուշանայ այնտեղի վարդապետի պատուին չդիպչել՝ նորան իւր միաբանների առաջ ամաչեցնելու նպատակով:

Այսպիսի կանոնաւոր կազմակերպութեան պտուղն է այն, որ վանքերում հաստատուեցաւ յարատև և անփոփոխ կարգապահութիւն. որքան և նեղ են երեւում այդպիսի կարգապահութեան պայմանները մեր դարու ազատամիտ կրօնաւորներին, չի կարելի չխոստովանել, որ միմիայն նոցա պահպանութեամբ կարելի է ստեղծել վանքերի մէջ մի որոշեալ դպրոց և յուսալ յառաջադիմութիւն. այս մենք տեսնում ենք հին վանքերի մէջ. կրօնաւորների դասակարգում մոնաւորապէս ամենաբարձր տեղը բռնելով, վարդապետներն այդ պայմանների շնորհիւ կարողացան ոչ միայն իւրաքանչիւր դարի հետ համաձայն գնալ, այլև բարձր կանգնել բոլոր հասարակութիւնից և առաջնորդել նորան. նոքա զարգացուցին վան-

քերի մէջ իրենց ժամանակին մատչելի գիտութիւնները. Արաբացւոց, Թիւրանդացւոց և Լատիններու գրականութեանն ու կրթութեանը ծանօթանալուց չխորշեցան. թէև առանձին անկախ եկեղեցու կրօնաւորներ լինելով, նոքա համակարծիք չէին տարբեր դաւանութիւնների և կրօնների վարդապետութեանը, սակայն երբէք չարհամարհեցին նոցա գիտութիւնը. խոհեմութեամբ ծանօթանում էին թշնամու զէնքերին, որ կարող լինին համապատասխան պատրաստութիւններ տեսնել նոցա դէմ. յառաջադէմ էին իրրև գրականութեան և կրթութեան սպասաւորներ. առանդապահ էին իրրև Ս. Եկեղեցու պաշտօնեաներ. և այս զեղեցիկ զուգաւորութեամբ նոքա եղան երկրի համար անհրաժեշտ մարդիկ. իշխանական տեղն և արքունիքները հանապազ կարօտում էին նոցա օգնութեանը, զի նոցա ձեռին էին գիտութեան տաճարի բանալիները: Միմիայն եկեղեցականները չէին, որ աշակերտում էին նոցա, այլ և աշխարհականները. Մատթէոս Ուռհայեցին պատմում է Գագիկ Ա. թագաւորի և Գրիգոր Մագիստրոսի մասին, թէ նոքա «ընդ վարդապետն Հռոմոց ճեմէին և յորժամ մտանէին ի Կ. Պօլիս, ի յամպիոնն նստէին ի մէջ սրբոյն Սոփիէի և բաւանդակ գիտէին զՀին և զնոր կտակարանն Աստուծոյ և ի կարգի վարդապետացն էին յաղագս Հայոց»:

Հայց է այժմ թէ ի՞նչ գործերի մէջ անհրաժեշտ մարդիկ էին վարդապետները և ի՞նչ է նոցա վաստակը կրթութեան գործում: Նախ նոքա մասնակցում էին եկեղեցու կառավարութեան մէջ. հսկում էին եկեղեցական կանոնների պահպանութեան վերայ. ներկայ էին դանւում եկեղեցական ժողովներում և իրենց հմտութիւններով նպաս-

տում էին հարցերի մշակութեանը. զանցառութիւնների մասին բողոքում էին. կանոնական սահմանը պաշտպանում էին. նոցա հսկողութեան տակ էին կաթուղիկոսներն և առաջնորդները, երբ սոքա անձամբ սխալուէին։ Երկրորդ նոցա պաշտօնն էր ուսուցչութիւն անել, կամ ինչպէս յունիների խօսքն է, դաս ասել զանազան գրքերի վերայ, որոնց մէջ գլխաւոր տեղը բռնում է Ս. Գրիքը. նոցա մօտ ժողովում էին ամենայն հասակի և ամենայն դասակարգի աշակերտներ, որոնց դաստիարակութիւնը կատարւում էր յայտնի կանոնների։ Երրորդ նոքա քարոզում էին եկեղեցիներում. ժողովուրդն և եկեղեցականներն իրենց բարոյական հրահանգութիւններն ընդունում էին մեծ մասամբ այդ ատենախօսութիւնների ժամանակ։ Չորրորդ նոքա պարտաւորուած էին մշակել եկեղեցական բանահիւսութիւնը. այս գործունէութեամբ նոքա թողին իրենց ապագաներին դէղերով գրքեր. Ս. Գրքի զանազան մասերի մեկնութիւնները, սրբերի վարքը, խրատներ, ճառեր, թղթեր, կանոնագրքեր, աղօթքներ, շարականներ, տաղեր և այլն այդ անխոնջ մշակների գրչի ծնունդն են։ Հինգերորդ նոքա իրենց ազատ ժամերը նուիրում էին զանազան գիտութիւնների և լեզուների ուսումնասիրութեանը. նոքա թողել են մեզ բազմահատոր գրքեր պատմութիւնից, որոնց մէջ արձանագրել են անցեալ ժամանակների և իրենց օրերի եղելութիւնները. աշխարհագրութիւնը, տօմարագիտութիւնը, քերականութիւնը, բժշկականութիւնն և այլն ունեին նոցա մէջ նշանաւոր ներկայացուցիչներ. նոցա գրչից ելած են և բազմաթիւ թարգմանութիւններ զանազան լեզուներից. և ի վերջոյ նոքա մշակեցին և ծաղկեցուցին հայոց գեղագրութիւնը.

մի նշանաւոր պարապմունք էր նոցա համար ճշգրիտ ընդօրինակել զանազան գրքերը, ծաղկել մագաղաթը և պատրաստել կարևոր գիրերն և մելանը. նմանապէս նոքա մշակեցին և պահպանեցին եկեղեցական երաժշտութեան եղանակները:

ԺԳ.

Այն ժամանակ, երբ Աղձուքեան հրոսակներն սկսեցին գալ և աւերել ու գերել Ռագրատունեաց, Երծրունեաց և այլ գաւառները, Հայ կրօնաւորներն սկսեցին մասամբ գաղթել և ժողովրդի կամ իշխանների յետևից գնալ դէպի Կիլիկիոյ սահմանները. այսպիսով ԺԱ. դարի վերջերում սկիզբն եղաւ նոր վանքերի, որոնք զարգացան Կիլիկիայում: Ռուբինեանց իշխաններն և թագաւորները, նմանապէս և այլ Հայ իշխաններ, իրենց կալուածներում պատրաստեցին կրօնաւորների համար ապաստարան, ուր նոքա ինչպէս բուն Հայրենիքում վայելում էին սովորական արտօնութիւնները: Այս նոր վանքերի մէջ նշանաւոր է նախկինառաջ Սեաւ Լեառն, որ գտնւում էր Մարաշի մօտերը և բաղկացած էր մի քանի անապատներից. այստեղ կրօնական մաքուր կեանքի հետ միասին ծաղկում էր գիտութիւնն և արուեստը. շատ երևելի վարդապետներ արևելեան գաւառներից գալիս էին այստեղ իրենց ուսման պակասը լրացնելու համար. այդպիսիներից մէկն եղաւ և «մեծ վարդապետն Մխիթար Գօշ». կրօնաւորներն իրենց ձեռքի աշխատութեամբ հայթայթում էին իրենց չափաւոր ապրուստը և հատնում էին օգնութեան կարօտեալներին. Խաչակրաց արշաւանքների ժամանակ Սև Սարի կրօնաւորներն իրենց պաշարեղէնով օգնեցին քրիստոնեայ բանակին, որ

սովի ենթակայ էր եղած։ Այստեղ էր «անուանի անապատն Երիզի «ուր բնակուեցաւ Գրիգոր Մագիստրոսի որդին Գրիգոր Ռ. մեծն վիպասէր, որ իրրև նշանաւոր մատենագիր և գործունեայ հայրապետ պատճառ եղաւ ԺԲ. դարու մտաւոր շարժմանն Հայոց մէջ։ 1114 թուին Սև Սարի ուխտերն երկրաշարժից մեծ վնաս կրեցին. միայն Բարսեղեանց անապատում շարժի տակ մնացին 30 կրօնաւոր և երկու վարդապետ. իսկ Յեսուանց անապատից զոհ գնաց միերևելի վարդապետ Գրիգոր Մաշկևորը. այս ձախորդութիւնն եղաւ թերևս պատճառ, որ Սև Սարի կրօնաւորները մասամբ ցրուեցան։

Երկրորդ նշանաւոր ուխտն է Ռեհատնի մօտ Կարմիր վանքը, որ Գող Վասիլի յիշատակն է և Պահլաւունի իշխանների տոհմական սրբավայրը. այստեղ թաղուեցաւ ինքն Գող Վասիլ. նշանաւոր առաջնորդներից մէկը Ստեփաննոս վարդապետ մականուանեալ Տիրացու (ըստ ոմանց Մանուկ) ունեցաւ բազմաթիւ աշակերտներ, որոնցից էին Հայոց նշանաւոր հայրապետներն և հեղինակները Գրիգոր Գ. Պահլաւունին և Ներսէս Գ. Շնորհալի. իրենց գիտական ընկերակիցներն և ժամանակակիցներն էս Լամբրոնացին Ներսէս, Շնորհալին Սարգիս և մեկնիչ Իգնատիոս նոյն վանքի մէջ ճաշակեցին գիտութեան ճաշակը. 1113 թուին այստեղ գումարուեցաւ մեծ եկեղեցական ժողովը, որ կաթուղիկոս ընտրեց Գրիգոր Գ. Պահլաւունուն և երբ սա 1150 թուին հայրապետական աթոռն Հռոմկլայում հաստատեց, Կարմիր վանքի նշանակութիւնը պակսեցաւ, զի մինչև 1292 թիւն Հռոմկլան եղաւ արևմտեան վանքերի առաջնորդ։

ԺԳ. դարի սկիզբներում Ասի մօտ ծաղկեցաւ Արքակաղ-նի վանքը, ուր նստաւ կաթուղիկոս Լևոն Բ. արքայի բարեկամը Դաւիթիբրև հակառակաթոռ Հռոմկլայի օրինաւոր գահակալի Յովհաննէս Ջ. Մեծաբարոյի։ Կիլիկիայի միւս վանքերի մէջ մի նշանաւոր տեղ է բռնում և Դրազարկի վանքը Անարզաբայ քաղաքի մօտ. իբրև տոհմական հանգստարան Ռուբինեաց թագաւորների Դրազարկը գտնում էր նոցա անմիջական հովանաւորութեան ներքոյ. ԺԱ. դարի վերջերում Վասպուրականից եկաւ այստեղ Գէորգ վարդապետ մականուանեալ Մեղրիկ. նա նորոգեց այդ վանքը և, ինչպէս Մատթէոս Ուռհայեցին ասում է, «ժողովեաց անդ զամենայն դասս ճգնաւորացն Քրիստոսի և հաստատեաց անդ կարգ և կրօնք զառաջին սրբոց հարցն.» իբրև «չորսաճաշակ» կրօնաւոր հաւասար նախնի ճգնաւորներին առաջնորդում էր ամէնքին դէպի լոյսի ճանապարհները և իւր «քաղցրուսոյց վարդապետութեան» համար կոչուեցաւ Մեղրիկ. նորա ընկերը Կուրոս «ուսեալ զամենայն կտակագիրս Աստուծոյ և ամենայն խորին քննութեան հասու եղեալ» յաջորդեց նորան. և երկուսն էլ ամփոփուեցան Դրազարկում։ Այդ ուխտի նման խստակրօն կացութեամբ յայտնի է Կաստաղօնի վանքը Վահկաբերդի մօտ, իւր ծաղմամբ թերևս ամենահինը Կիլիկիոյ վանքերի մէջ. այստեղ թաղուեցաւ Ռուբէնի որդին Կոստանդին Ա. կրօնաւորների մէջ յիշւում է «աքանչելագործն և մեծ ճգնաւորն Մարկոս, որ զամս 65 կայր ի խոտաճարակութեան վարս» և ունէր, ինչպէս Մ. Ուռհայեցին է պատմում, մարգարէական շնորհ։

Կիլիկիոյ վանքերն հետևելով նոյն կարգերին, ինչոր

Հայաստանի մէջ կային, չէին կարող միևնոյն ժամանակ զերծ մնալ բարոյապէս արտաքին ազդեցութիւնից, որն յառաջ էր գալիս նոցա աշխարհագրական դիրքից. շրջապատուած լոյն, ասորի և լատին վանքերով, նոքա ակամայ էին լինում նոր ազգերի և նոր կրօնական ծէսերի, որոնք Խաչակրաց արշաւանքների հետ միասին յաճախում էին Կիլիկիայում. քաղաքական և տնտեսական պայմաններն ևս ոչ պակաս ներգործում էին նոցա վերայ. այնպէսով ժամանակի ընթացքում տեղի ունեցաւ դաղափարների շփոթութիւն Կիլիկիոյ և բնագաւառի վանքերի մէջ։ Ասոր յառաջացան ԺԲ. դարում երկու խումբ վանքեր՝ արևելեան և արևմտեան, որոնց գոյութեան նպատակը գոգցես հետզհետէ բաժանուեցաւ, երբոր Հայոց կաթուղիկոսներն սկսեցին ծէսերի կամ եկեղեցիների միութեան համար բանակցութիւններ վարել նախ Յունաց կայսրների և յետոյ Հռովմայ պապերի հետ։ Ուրաքանչիւր խումբն ունեցաւ իւր կեդրոնը. արևելեան կեդրոններն էին Հաղբատ, Տաթև, Ռշտնի և Արտազու վանքը, որոնք հետզհետէ այնքան ազդեցութիւն ձեռք բերին Հայոց եկեղեցու գործերի վերայ, որ մինչև անգամ առանց նոցա հաւանութեան կարելի չէր ընտրել մեկին կաթուղիկոս և վաւերացնել։ Այդ չորս արքեպիսկոպոսական աթոռներն իրենց ուխտերով մինչև ԺԱ. դարը շարունակ հսկում էին կաթուղիկոսների վերայ և, ինչոր հակառակ էին գտնում, մերժում էին. ԺԳ. դարում Գրիգոր Դ. Անաւարզեցու նորամուծութիւնների դէմ բողոքելու ժամանակ արևելեան վարդապետներն, իրենց հետ ունենալով և միքանի իշխաններ, գրում են նորան. Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի

գժոխս ինքանել և ոչ ընդ Հռոմոց յերկինս կանել։ Իսկ արևմտեան խումբը, որ սկիզբը հետամուտ էր միայն բաբելկարգել եկեղեցին և միքանի զեղծումներն ուղղել, հետզհետէ մոլորուեցաւ. կեղծոն եղաւ Սիսը, իսկ պարագլուխ տկարամիտ կաթուղիկոսներից ոմանք, իրենց հետ ունենալով Կիլիկիոյ միքանի լատինասէր թագաւորներ։

Երկու խմբերի մրցման մէջ յենում էին և անտեղի վէճեր և թղթակցութիւններ, փոխադարձ զրպարտութիւններ և այլն, որոնք յառաջ էին գալիս իրար չհասկանալուց, զի տեղով խիստ տարբերայ էին իրարուց և զանազան բռնաւորների ձնշման տակ էին. յայտնի է պատմութեան մէջ Գրիգոր Տուտէորգու և Ներսէս Լամբրոնացու վէճը. քանիսոր առաջինի թղթերը տակաւին անծանօթ են, դատել թէ ով է նոցանից մեղաւոր, կարելի չէ. Գրիգոր Գ. Տղայի կոնդակներից երևում է սակայն, որ Տուտէորգին և իւր հետևողները սխալ են հասկացել արևմտեան վարդապետների միտքը. եթէ Լամբրոնացին և իւր հակառակորդը սխալներ ևս գործած լինին, անշուշտ, միւս վարդապետները պարտական չեն կրելու այդ սխալի նախատինքը. զի ինչքան երևում է Գրիգոր Գ. Պահլաւունու, Ներսէս Գ. Շնորհալու և Գրիգոր Գ. Տղայի կոնդակներից, արևմտեան վարդապետների լուսաւորեալ և խոհեմ դասը կամենում էր լուցնել Հայաստանեայց եկեղեցու դարաւոր թշնամիներին ոչ թէ երկչոտութեամբ հեռու քաշուելով և մտքի տկարութիւնից ստիպուած լուռ մնալով, այլ արիաբար յառաջ դալով՝ ապացուցանելու այն զրպարտութիւնների անհիմն լինելը, որոնք արդարև ընդունակ էին պղտորելու և ապականելու Հայաստանեայց առա-

քիլական եկեղեցու միամիտ ժողովրդի միտքը։ Ահա թէ ինչ է գրում Տուտէորդուն Գրիգոր Գ. Մենք հաւատափոխ չենք, ասում է նա, ինչպէսոր դու իզուր կարծում ես. այլ զարմանում ենք, թէ ինչո՞ւ դու միայն ջոկուեցար քո միւս ընկերներից, մինչդեռ մեր գիրն և խօսքն ուղղել էինք բոլոր վարդապետների անունով։ Իսկ միւս վարդապետներին հասկացնում է, որ Հայոց եկեղեցին հարկաւորութիւն չունի վէճի մէջ մտնել զանազան հերձուածողների մասին և քննել նոցա գործերը. զի նոքա մերը չեն, ասում է, այլ Հոռոմներինն են. մենք պարտական ենք յարգել, պաշտել և պահպանել ինչոր մերն է. Եռ մեզ մի լեցին խոտելիք, գրում է նա, մերն սուրբ լուսաւորիչք և հարք, այլ պատուելիք և պաշտելիք՝ Սուրբն Գրիգոր և զարմն իւր, Սուրբն Ներսէս և Սահակ և որ ըստ նոցայն յստակքն և ճշմարտախոհքն. և նոցայն քարոզեսցի քաջութիւն յեկեղեցիս մեր և յաղագս նոցա բանակռուեսցուք, եթէ դոցին հակառակք։

ԺԳ.

ԺԳ. դարի վերջերում արևելեան Հայաստանի վանքերը Օսաքարէ սպասալարի հովանաւորութեան տակ էին. նա իւր զէնքի զօրութեամբ շատ գաւառներ մահմէտականների ձեռքից զրաւեց իւր իշխանութեան ներքոյ. պատմիչների ասելով, նորա ժամանակ շատ աւերեալ վանքեր և եկեղեցիներ նորոգուեցան և կրօնաւորական կեանքը զարգացաւ. արձանագրութիւններն ևս պատմում են քաջ և բարեպաշտ սպասալարի առատաձեռնութեան և աշխար-

հաշինութեան մասին. նորա յիշատակներն են Հառիճայ, Հաղարծին, Սանահին, Հաղբատ և այլ վանքերի միքանի շէնքերը. նորա ազգականներից մէկն էր Գրիգոր Տուտէորդին, որ այն ժամանակ առաջնորդ էր Հաղբատում. Օաքարէի դաստիարակն էր Կիչառիսու առաջնորդը Գրիգոր Մոնոնիկ. նշանաւոր էր նորա ժամանակ Թեղենեաց վանքը, որի առաջնորդ Տուրքիկը կարգադրել էր իւր վանքում, ինչպէս ասում է Կիրակոս Գանձակեցին, որ ամէն բան հասարակաց լինի և ոչոք առանձին ոչինչ չունենայ. երաժշտական արուեստով պայծառացած էր Հաւուցթառայ վանքը, ուր Եղիա երաժիշտը կարգադրել էր ժամասացութեան ժամանակ «ամենեցուն ընդ մի բերան հնչել եթէ ցած և եթէ բարձր և ոչ հարստահարել ընկեր զընկեր». յայտնի էին Սանահնի, Հոռոմոսի, Սևանայ և Բրջնոյ վանքերը. Սակայն սոցա բոլորի մէջ նշանաւոր տեղ էր բռնում Գետիկայ վանքը, ուր գտնւում էր ժամանակի մեծ վարդապետը Մխիթար Գօշ. տաւուշեցի Յովհաննէս վարդապետի այս գանձակեցի աշակերտը վարդապետական կոչումն ընդունելուց յետոյ չբաւականացաւ իւր գիտութեամբ, այլ ճանապարհորդեց մինչև Սև Լեառն և այնտեղ ծածկելով իւր կոչումը նորից ուսում առաւ. վերադարձին մտաւ Գուգարաց աշխարհի Գետիկայ վանքը. նորա իմաստութեան համբաւին դիմեցին բազմաթիւ աշակերտներ. սակայն շարժը կործանեց Գետիկայ վանքը և աշակերտները ցրուեցան. Մխիթար Գօշ իշխանների սիրելին և Օաքարէի խոստովանահայրը կարողացաւ առնել նոցանից մի նոր գետին Տանձուտայ ձորում Եղտեւի վերայ և 1191 թուին կանգնել նոր Գետիկ որ այժմ կոչւում է Գօշայ վանք.

ցրուեալ աշակերտները դարձեալ ժողովուեցան. դալիս էին նորան լսելու և շատ վարդապետներ, որոնք ծածկում էին իրենց կոչումը. նշանաւոր էին նորա աշակերտների մէջ «ասպնջականն օտարաց և առատն ի տուրս» Թորոս Մելտինեցի, ԺԳ. դարու մեծ վարդապետն Վանական, Մխիթարի յաջորդը Գետակայ վանքում Մարտիրոս վարդապետը, որ էր «կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաձայն յերգս պաշտաման, առատամիտ ընթերցող և երգոյ ի գրչութիւն». Մխիթար բացի այս աշակերտներից թողից «յիշատակ և արձան գերեզմանի դիրս մոսխոհս յօգուտ ուսումնասիրաց». այդ գրքերից են անշուշտ նորա գրած մեկնութիւնները, դատաստանագիրքը և առակները. Գետակայ վանքը նորա մահից յետոյ էս զարգացաւ. Մարտիրոս վարդապետն հիմնեց մի գրատուն «գեղեցիկաշէն յարկաք»: Այն տեղից ոչ հեռու ծաղկեցաւ նոյն ժամանակում Հաղարծինը, որ դրէթէ ամայի էր, երբ եկաւ անդ Տարօնացի Խաչատուր վարդապետը. Օհաբարէի օգնութեամբ նա բարեկարգեց այդ վանքը և ժողովեց աշակերտներ. ինքն էր «այր սուրբ և առաքինի, ասում է Կիրակոս, և գիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ»:

Այս վարդապետների օրով Օհաբարէն կամեցաւ ունենալ բանակի մէջ շարժական եկեղեցի. նա դիմեց Մխիթար Գօշին և միւս արևելեան վարդապետներին, որ իրեն թոյլ տան այդ: Մեծ վարդապետը պատասխանեց, որ նոքա ձեռնհաս չեն այդ հարցը լուծելու առանց կաթուղիկոսի և թագաւորի հրամանին: Այն ժամանակներն երկու կաթուղիկոս կար միևնոյն աթոռի վերայ. մէկը օրինաւոր՝ Յովհաննէս Օ. Մեծաբարոյն, որ նստում էր Հռոմկլայ,

իսկ միւսը Հակոբոս Դաւիթը՝ Լեւոն Բ. թագաւորի ալբանեակը, որ նստում էր Երքակաղնի։ Աղաբարէն Յովհաննէսին էր ճանաչում. ուստի թուղթ գրեց նորան և Լեւոնին և առաջարկեց նոցա իւր խնդիրը։ Լեւոնը Դաւթի հետ միասին միքանի եպիսկոպոսներով ժողով կազմեցին և հրաման տուին Աղաբարէին շարժական եկեղեցի ունենալու։ Յովհաննէսն էլ իւր կողմից կանչաւ ուղարկեց Աղաբարէի մօտ Մինաս եպիսկոպոսին, սարկաւագներ, դպիրներ և քահանաներ և նոցա հետ միասին «եկեղեցաձև գմբէթայարկ վրան, և մարմարեայ սեղան և պատարագի սպասներ»։ Երբոր երկու կողմի նուիրակներն եկան Լօռի, Աղաբարէն հրամայեց եկեղեցական ժողով դումարել. այստեղ Խաչատուր Տարօնացին երգեց իւր պանծալի «խորհուրդ խորին» պատարագի զգեստաւորութեան վերայ. յետոյ, երբոր արևելեան վարդապետները տեղեկացան Դաւթի և Լեւոնի թղթի բովանդակութեանը և նոցա ու Յովհաննէսի տարաձայնութեանը, յետ քաշուեցան. այս բանին պատճառ եղաւ մանաւանդ այն, որ Դաւթի և Լեւոնի թղթի մէջ բացի շարժական եկեղեցու հարցից մէջ էին բերուած և ուրիշ կէտեր, որոնցով խանդարուում էին Հայաստանեայց Եկեղեցու միքանի էական կարգերը։ Ժողովն երկուսի բաժանուեցաւ և ցրուեցան առանց ընդունելու յիշեալ հրամանը. այն ժամանակ Աղաբարէն կամեցաւ բռնի իրագործել. Մինաս եպիսկոպոսին ուղարկեց Հաղբատ, որ այնտեղ մտցնէ նոր կանոնները. Տուտէորդին մարդիկ ուղարկեց նորա դէմ, որոնք բրածեռ արին կաթուղիկոսի նուիրակին. երբ Աղաբարէն կամեցաւ բռնել Տուտէորդուն, նա փախաւ Մխիթարի վանքը։ Հարկ

եղաւ նոր ժողով գումարել, որն հրաւիրուեցաւ Անի. երբոր բոլոր վարդապետներն հաւաքուեցան այնտեղ և տեսան, որ Մխիթարը բացակայ է, յայտնեցին Հաքարէին, որ առանց մեծ վարդապետին չեն կարող ժողով անել. Հաքարէն յայտնեց նոցա, որ Մխիթարը տկարութեան պատճառով հրաժարուել է գալու։ Այն ժամանակ ժողովն իւր կողմից մարդ ուղարկեց Դեռկայ վանքը և գրեց Մխիթարին, որ գայ. Հանկարութիւն մարմնոյ մի՛ ինչ պատճառեր, գրեցին նոքա, եթէ ի ճանապարհի հասանէ քեզ վախճան, ընդ առաջին սուրբ վարդապետացն եկեղեցւոյ կարգեսցուք զքիշատակս քո։ Այսպիսի հրաւէրը չմերժուեցաւ. Մխիթար եկաւ Անի, բայց Հաքարէի նշանակած իշխանը քաղաքի դրան մօտ բռնեց նորա ձիու երասանակից և տարաւ սպասալարի դուռը. ժողովը խռժռեցաւ. զի Մխիթարին ձեռք առնելով, Հաքարէն պատրաստուեցաւ աքսորել բոլոր ժողովականներին. այստեղ աղաղակը զօրացաւ. վարդապետներն իրենց կասկածներով, զրպարտութիւններով և նախանձով կամեցան մեղադրել Մխիթարին. բայց մեծ վարդապետը առանց վիրաւորուելու նախ յանդիմանեց Հաքարէին, հասկացնելով նորան, որ կրօնական խնդիրների մէջ իշխանաբար վարուել հարկաւոր չէր. ապա ժողովին պատգամ ուղարկեց և ասաց. Դուք ազգի համար էք հոգս անում, որ այդպիսի սովորութեամբ (այսինքն նորամոյծ կարգերով) չխառնուին Վրացւոց հետ, իսկ ես այս զօրավարի համար իմ հոգս անում, որ չլինի թէ սա էլ Վրացի դառնայ ինչպէս իւր եղբայրը. դուք ինչու էք ինձ մեղադրում. սա հրաման ունի կաթուղիկոսից և Լևոն թագաւորից. մենք կամենանք, չկա-

մենանք, սա չպիտի դադարի կատարելու այդ։ Ուրեմն դարձէք ամէնքդ ձեր տեղը և ես կրնդրեմ սորանից չզլեկլ ձեզ ձեր եկեղեցիներից և պաշտօններից. եթէ դուք շարունակէք կապարել այն պաղատանքը, որ դուք կապարել եք։ Սորանից յետոյ մեծ վարդապետն ազատեց շատերին աքսորից. ամէնքը գնացին իրենց վանքերը և շարունակեցին այն ինչոր սովոր էին գործել։

ԺԵ.

Թատարների արշաւանքը մի սարսափելի երևոյթ էր, որ պատճառ եղաւ շատ երկիրների աւերածի և շատ ազգերի գերութեան և ապականութեան. Հայաստանն ևս կրեց այդ ընդհանուր պատուհասի հարուածները։ Դարբաբոս զօրավարների կատաղութեան առաջ հող ու մոխիր դառաւ ամենայն շէն և բնակութիւն. նոցա բարկութեան առջևից փախչող ժողովուրդը գտնում էր ապաւինութիւն միայն վանքերի և կրօնաւորների մօտ, որոնք դիտէին անձնուիրաբար միջնորդ հանդիսանալ և ամրակալ բռնաւորների կատաղութիւնը. Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ երբ բազմաթիւ զիւղականներ Տաւուշ բերդի սահմաններից փախչելով ազատութեան տեղ էին որոնում, նոցա ընդունեցին և պատսպարեցին իրենց մէջ Վանական վարդապետի այրերը. կին, երեխայ, ազամարդիկ լցուեցան այդ այրերի մէջ առանց պաշարի առանց որևիցէ պատրաստութեան. նոքա ընկան Վանական վարդապետի ոտները և աղաչեցին գնալ բռնաւորի մօտ և խաղաղութիւն հայցել. Գնեա զարիւն մեր, ասացին, և էջ առ նոսա և ասա

սէր ընդ նոսա։ Եւ նա զարմանալի անձնուիրութեամբ փութաց իւր աշակերտներով բռնակալի առաջ, կրեց սով, ծարաւ, կապանք, հարուածներ, սակայն համբերութեամբ տոկաց և իւր անձը գրաւ դնելով, ազատեց գիւղականներին հարուածներից և արիւնհեղութիւնից. ամիսներ յետոյ, երբ բռնակալը ծանր վրկանք նշանակեց Վանականի ազատութեան համար, երախտագէտ ժողովուրդը չզլացաւ դնել գերութիւնից իւր ազատարարին։ Դարձեալ եկաւ նա իւր աշխատութեամբ փորած այրերը. դարձեալ հաւաքեց նա անդ իւր բազմաթիւ գրքերը. նորա քարակուռ քարակոփ այրերը շուտով լցուեցան ուսումնատենչ աշակերտների բազմութեամբ, զի մեծ վարդապետի Գօշ Մխիթարի աշակերտը լինելով, արդէն վաղուց հռչակուած էր նորա ուսումնասիրութեան համբաւը արևելեան վարդապետների մէջ. այդ սիրասուն աշակերտների դրկում կնքեց նա իւր երկրաւոր կեանքը, ինչպէս վկայում է իւր աշակերտը Դանձակեցին Կիրակոս, արդէն «ալևորեալ և լի աւուրբք, ի տղայական տիոցն ասատուածագործ ծառայութեամբ կացեալ, բազում քրտունս և աշխատութիւնս ցուցեալ ի բանն վարդապետական, բազում որդիս ի փառս ածեալ և ազգի ազգի ճգնութիւնս կրեալ». նորա յուզարկաւորութեանը ժողովուած անհամար բազմութիւնը մեծ սուգ արաւ անոնման վարդապետի վերայ. նորա մարմինն ամփոփուեցաւ իւր իսկ շինած Խորանաշատ վանքի մօտ աղքատների հանդիստարանում, որն ինքը նշանակել էր կանխաւ։

Վանականը թողեց շատ վարդապետական գրուածներ և իւր ժամանակի պատմութիւնը, որ տակաւին յայտնուած չէ. ունեցաւ շատերի կարգում չորս նշանաւոր աշակերտ՝

Երտաղու վանքի վերանորոգողն Յովսէփ և Թաթարների ժամանակի պատմիչները՝ Կիրակոս, Մաղաքիա և Վարդան. սոցա մէջ վերջինս առաւել նշանաւոր է, զի բացի իւր պատմութիւնն և այլ հեղինակութիւններն ունեցաւ կրօնաւորական փառաւոր գործունէութիւն արտաքին կեանքի մէջ: Իւր վարդապետի մահից յետոյ Վարդան մեկնեցաւ ուղևորուելու դէպի Երուսաղէմ. վերադարձին գնաց տեսութեան Հեթում թագաւորին և Որբերդցի Կոստանդին Ա. կաթուղիկոսին, որոնք սիրեցին նորան և պահեցին Կիլիկիայում: Այդ ժամանակները շատ զգալի զեղծումներ մտած էին եկեղեցիներում և վանքերում: Կոստանդին Կիլիկոյ եկեղեցականների հետ խորհրդակցելով մի շրջաբերական կոնդակ և 23 յօդուած կանոններ ուղարկեց արևելեան վարդապետներին. նուիրակութեան պաշտօնը կաթուղիկոսի կողմից վիճակուեցաւ Վարդանին, որն յիշեալ կոնդակով 1246ին եկաւ արևելք: Ահա թէ ինչպիս այլոց ի՞նչ նշանաւոր կէտերի մասին պիտի քարոզէր նա Հայրապետի կողմից արևելեան եկեղեցիներում.

Առաջին՝ արծաթով ձեռնադրութիւն չտանեն. արժանաւորներին և գիտուններին միայն տան եպիսկոպոսական աստիճան և այն էլ՝ առանց կաշառքի. ընծայեալների հատակը երեսուն տարուց պակաս չլինի. եպիսկոպոսը տարին երկու անգամ իւր թեմը մտնի գայ և տեսնի իւր հօտը. գիտուն, երկիւղած և անաղահ քորեպիսկոպոսներ նշանակէ. ծեր և գիտուն խոստովանահայրերի յանձնէ, որ ամէն կիրակի առանց դրամի խոստովանացնեն ժողովրդին և քահանաները նոցա հրամանով հաղորդ տան:

Երկրորդ՝ եպիսկոպոսի առաջին գործը լինի «անդայ-

Ռոփէ և Գիրոն» ուսուցիչներ ընտրել մանուկների ուսման համար. շատերի վկայութեամբ ընտրեն այնպիսի ուսուցիչներ, որոնք վարժ և տեղեակ լինին բոլոր գրքերին. եկեղեցական գրքերը գրելու համար ուղղափառ և գիտուն արուեստաւորներ ընտրեն։

Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ երբ Վարդան յայտնեց ամէնքին հայրապետական պատգամները, շատերը չախորժեցին. «զի ամենայն ոք խոտորեալ էր ի ճշմարտութենէն, ըմբռնեալք ախտիւ ագահութեան և արծաթասիրութեան». միայն միքանի վեճակներ առերես ընդունեցին հրամանը և ձեռագիր տուին։ Այս յանձնարարութիւնը կատարելուց յետոյ Վարդանն առանձնացաւ Գուգարքի Ս. Անդրէի վանքը, ուր հաւաքուեցան նորան լսելու շատ աշակերտներ, որոնց ուսուցանում էր նա երկար տարիներ. նորա այս առանձնական կեանքի խաղաղութիւնը խանգարուեցաւ 1264ին, երբ Հուլաւու խանը, լսելով նորա սրբութեան հռչակը, հրաւիրեց նորան իրենց աշխարհագումար ասնին ներկայ գտնուելու. ինքն Վարդան նկարագրում է իւր տեսակցութիւնը մեծ բռնակալի հետ. մի կենդանի պատկեր է այդ, որ ապացուցանում է թէ սրբութիւնը, անշահասիրութիւնը և խոհեմութիւնը ապաւորուած մարդուս դէմքի և լեզուի վերայ՝ որպիսի դիւթական զօրութեամբ կարող են նուաճել բռնակալների սիրտը։ Ոչխարներին հագած այս գամեստ, խելացի և ժողովրդասէր կրօնաւորը մերժում է իշխանի առաջարկած պարգևները. նա ասում է. Ոսկին և հողը մեզ համար մի է. մենք աւելի մեծ բան ենք խնդրում, որ և ձեր մեծութեանը վայելուչ է՝ ողորմութիւն մեր աշխարհի վերայ։ Հրաժեշտի ողջոյնը

տալու ժամանակ, երբ Հուլաուխանն իւր խոստացած ոսկին և գգեստը տալիս էր, Վարդան նորից իւր տառապեալ ժողովրդի վերայ էր դարձնում բռնաւորի աչքը. Իշխան, ասաց նա Հուլաուին, այդ գրամը կըհատնի և այդ հանդերձը կըմաշուի. մենք անհատնելի և անմաշելի պարգևներ խնդրեցի՛ք։ Իշխանը գնահատեց վարդապետի մեծահոգութիւնն և առանձին հրովարտակով յանձնեց իւր գործակալներին յարգել Վարդանի խնդիրները, որոնք իւր անձի օգտին չէին սակայն, այլ ժողովրդի։

ԺԷ.

Մի նոր երևոյթ մեծ վտանգ էր պատրաստում Հայոց Եկեղեցուն. պապական քարոզիչները, որ արդէն կարողացել էին խախտել Կիլիկիոյ Հայոց հաւատի հիմունքը, մի նոր միջոց գտան հերձուած ձգելու Հայոց վանական ուխտի մէջ. 1333 թուին Հռովմայ աթոռն հիմնեց Հայաստանի համար մի արքեպիսկոպոսական վիճակ, որի առաջին վիճակաւորն եղաւ Բարթուղիմէոս Բոնոնիացի լատին եպիսկոպոսը. շուտով յաջողեցաւ նորան գրաւել դէպի իւր աթոռատեղին, որ Աարպատականի Մարաղայ քաղաքի մօտն էր, Հայ հետևողներ, որոնց մէջ անդրանիկն եղաւ Բոնեցի Յովհան վարդապետը. սա այնքան յափշտակուեցաւ լատին եպիսկոպոսի քարոզութիւններով, որ բաժանուեցաւ Հայոց վանական ուխտից, ուրացաւ իւր եկեղեցին և ապա պապի օրհնութեամբ մի նորանշան միաբանութիւն կազմեց՝ Ունիթորներ կամ միաբարներ անունով, որոնք իբրև թէ Հռովմայ եկեղեցուց

բաժանուած ։այոց հօտը պէտք է վերադարձնէին նորա դիրքը։ Մխարարների խումբն հետզհետէ ածեցաւ նոր հեռուզնելով, որոնց մէջ կային նաև երկու եպիսկոպոս՝ Ներսէս Պալիէնց և Սիմէօն Պէկ։ Մոլորութիւնը տարածուեցաւ ժողովրդի մէջ այն պատճառով, որ այդ ոչխարազգեստ գայլերը քարոզում էին ։այոց լեզուով, չէին մերժում ։այոց ծէսերն և սովորութիւնները և աշխատում էին գրգռել ։այ ժողովրդի կրօնական ինքնասիրութիւնը, հերձուածող և մոլորեալ անուանելով, հեռաւոր օգնութեան սնոտի յոյսեր խոստանալով և իբր նոր եւրոպական լուսաւորութեան քարոզիչ ձևանալով։ Դայթակղութիւնը մեծ էր և վտանգն յոյժ զգալի. տեղը չէ պատկերացնել այն քստմնելի չարութիւնները, որ գործում էին կրօնի սրբութիւնը պահպանելու պատրուակով. սակայն հարկ է յիշել, որ միամիտ ժողովրդի մի մասը, դայթակղեցուցիչ կրօնաւորների շնորհիւ միանգամ կորցնելով իւր հաւատը, այլ ևս չկարողացաւ վերադառնալ դէպի իւր նախկին հոգևոր երջանկութիւնը և հեշտութեամբ զոհ գնաց մահմէտականութեան, մոռանալով միևնոյն ժամանակ և իւր լեզուն։ ։այոց վանքերն և վանականներն, այս իսկ վտանգը տեսնելով, ջոլուցին իրենց աշխատութիւնը. վտանգի առաջ միահամուռ համախմբուեցան ցրուեալ ոչխարն, և եթէ չկարողացան յետ բերել մոլորեալներին, գէթ մնացեալներին պատսպարեցին և զգուշացուցին սպառնացող որոգայթից։ Ուենիթոռների կեդրոնն եղաւ Երնջակայ Ռոնայի վանքը, ուր ժողովուեցան նորադարձ ։այերը. կարճ ժամանակի մէջ կազմուեցան և ուրիշ կեդրոններ, որոնք են Նախիջևան, Ուրմիա, Կարին և այլն. ։այ ժողովուրդն և նորա

առաջնորդներն, այդ խմբի գործ դրած խարդախութիւն-
ներն և խորամանկութիւններն աչքի առաջ ունենալով,
անուանում էին նոցա աղթարմայ, որ նշանակում է աչքա-
կապ կամ կախարդ։ Դիմադրող ոյժերն ունեցան նշանա-
ւոր պարագլուխներ, որոնք իրենց վարդապետական հմտու-
թիւններով կարծես մի նոր սերունդ պատրաստեցին վտան-
գի դէմ մաքառելու. նոցա մէջ առաջին տեղը բռնում են
Եսայի Նչեցին, Յովհան Որոտնեցին Մախանուանեալ
Կախիկ և Գրիգոր Տաթեւացին։ Վարդան վարդապե-
տի աշակերտներից մէկի Ներսէս Մշեցու մօտ ուսում
առաւ Եսայի Նչեցին, որ յետոյ Գայլեձորի առաջ-
նորդն եղաւ. դեռ ԺԴ. դարի սկիզբներում այդ վան-
քը լցուեցաւ ուսումնածարաւ կրօնաւորներով, որոնք ժո-
ղովուել էին Նչեցու վարդապետութիւնը լսելու. աւան-
դութիւնն ասում է, որ նոցա թիւն հասնում էր մին-
չև 360ի. այդ աշակերտներից մէկն էր և դայթակղու-
թեան առաջնորդն Յովհան Որոտնեցին, որ իւր վար-
դապետի հրամաններին անլսող դտնուելով, բանադրուե-
ցաւ. այն ժամանակ Եսային ուղարկեց իւր աշակերտնե-
րին քարոզելու և զգուշացնելու ժողովրդին. ինքն էլ մի
կանոնական թուղթ գրեց Աղուանքի առաջնորդին
Մատթէոսին և բացատրելով Հայոց դաւանութիւնը, զա-
նազան հրահանգներ տուեց նորան։ Նչեցու աշակերտների
մէջ յետոյ նշանաւոր եղաւ Յովհան Որոտնեցին, որ, ինչ-
պէս Թովմա Մեծոփեցին ասում է, «իբրև արեգակն փայ-
լէր ընդ ամենայն ազգս Հայոց և լուսաւորէր զամենեսեան
աստուածային գիտութեամբ և կայր ընդդէմ հերձուածո-
ղաց աղթարմայից». Որոտնեցին, որ հարուստ և ազնուա-

կան տանից էր, հրաժարուեցաւ աշխարհից իբրև մի ճըշ-
մարիտ կրօնաւոր և բոլոր իւր կեանքը նուիրեց ուսման և
քարոզութեան. իւր վարդապետի մահից յետոյ շուտով
շրջապատուեցաւ Տաթեւու վանքում բազմաթիւ աշակերտ-
ներով, որոնց ուսուցանում էր նա Ս. Գրիգոր։ Նորա
ժամանակ ծաղկեցաւ Վանայ հովտում Խառաբաստայ
Ս. Աստուածածնի վանքը, ուր Սարգիս վարդապետի մօտ
ժողովուած էին շատ կրօնաւորներ և լսում էին նորա
վարդապետութիւնը. նորա մօտ գալիս էին և աղթարմա-
նները. փորձելու համար տալիս էին նորան զանազան հար-
ցեր. աշակերտները խնդրեցին նորան դաս ասել Առաքի-
նութեան գրքի վերայ, որն Ունիթորների գիտութեան
շտեմարանն էր համարւում. Սարգիս վարդապետը, թէև
ասաց իւր դասը, բայց երևի չկարողացաւ գոհացնել իւր
ունկնդիրներին, զի նորա աշակերտները լաւ չհասկացան
ու ծածուկ գնացին վանքից և ուղեցին աղթարմայ դառ-
նալ. այն ժամանակ Սարգիս վարդապետն, իւր տկարու-
թիւնն զգալով, օգնութեան կանչեց Յովհան Որոտնեցուն,
որն իւր աշակերտներով եկաւ Երնջակայ Ապրակունեաց
վանքը, ժողովեց Սարգսի աշակերտներին և իւր ազգու ճա-
ռերով սաստեց նոցա. շատերը նոցանից զղջացին, ոմանք
ծանր պատիժներ կրեցին՝ բանտ, շղթայ, գաւազան և այլն,
իսկ մի քանիսը փախան, ընկան «Գառանկների աշխարհը»։

Մեծ հարուած տուեց Ունիթորների յառաջադիմու-
թեանն և Որոտնեցու աշակերտը Գրիգոր Տաթեւացին. այս
հռչակաւոր վանականը, որ ժառանգել է «եօթնալոյս վար-
դապետի» անուն իբրև ճարտար լեզուի, տոկուն բնաւո-
րութեան և հարուստ տեղեկութիւնների տէր անձն, ու-

սուցանում էր իւր աշակերտներին, ամառուայ և ձմեռուայ համար յարմարացուցած քարոզներով լուսաւորում էր ժողովրդի միտքը, մերկացնում էր ամէնի առաջ Ունիթոռների ոլոգայթները և վիճաբանութիւնների ժամանակ համոզանքով լռեցնում էր հակառակորդներին. Մեծոփեցին պատմում է, որ Տաթեւացին «ոչ միայն ծերութեան ժամանակ քարոզում էր անհաւատներին, այլ միշտ անահ և աներ-կիւղ նախատում էր նոցա. և ոչ ոք չէր համարձակում ձեռք տալ նորան ոչ իշխանը և ոչ նորա ստորադրեալը, զի ամէնքը սարսափում էին նորա պատկառելի երեսից»։

Այս վարդապետներն ունեցան և այնպիսի ընկերներ և աշակերտներ, որոնք շատ տեղերում նորոգեցին և ծաղկեցուցին վանքեր։ Գրիգոր Տաթեւացու աշակերտներից յայտնի են Տաթեւի առաջնորդ և բանաստեղծ Առաքել Բաղիշեցին և ԺԵ. դարու պատմիչ Թովմա Մեծոփեցին. Սարգիս վարդապետի աշակերտներից երևելի եղան Գրիգոր Ծերենց Երծկէի Ցիպնայ վանքում և Վարդան վարդապետ, որ յառաջ Հոգեայց և յետոյ Սուխարու Ս. Աստուածածնի վանքում ունեցաւ շատ աշակերտներ։ Նշանաւոր եղան նաև Սաղմոսավանք, Հաւուցթառ, Սևան, Աստապատու Ս. Նախավկայ, Մեծոփայ վանք և այլն։ ԺԵ. դարի բոլոր այս վանքերի և վանականների մի բարոյական մեծ ծառայութիւնն էլ այն եղաւ, որ Հայոց Հայրապետական աթոռն ազատեցին անկումից և, մաքերը նախապատրաստելով, պատճառ եղան 1441 թուին Հայրապետական աթոռի փոխադրութեանը Ասիից դէպի իւր նախկին տեղը Վաղարշապատու Ս. Էջմիածինը։

ԺԵ.

Յայտնի է, որ 1605 թուին Պարսից թագաւորը Շահաբաս Ա. աւելից Երարատեան աշխարհը և շատ տեղերից, մանաւանդ Ջուղայից, բազմաթիւ ժողովուրդ գերի վարեց ու տարաւ Պարսկաստան. երբոր այդ գաղթականները տեղաւորուեցան Պարսկաստանում և հետզհետէ ճոխանալով, ճոխացուցին Ասպահանի արուարձանը Նոր Ջուղան, նոքա միշտ և հանապազ կարօտով յիշում էին միմիայն Հայրենիքում թողած սրբավայրերը. «Նոքա իրենց ապաքաղդ էին համարում, ինչպէս ասում է Առաքել Դավրիժեցին, որ իրենց աչքի առաջ չէն իրենց նախնիների գերեզմանները, վանքերը, ուխտատեղերը և մանաւանդ Ս. Էջմիածնի մեծահանդէս Եթոռը, ուր սուրբ Լուսաւորչի աջն է, որով սուրբ մեռոն է օրհնւում և այնտեղից սփռւում Հայոց ազգի մէջ ամէն աշխարհ, ուր և լինին, և որի համար (այսինքն աջի) բոլոր Հայոց ազգը հնազանդում է Էջմիածնի Ս. Եթոռին և նորա կաթուղիկոսին, որը նստում է այնտեղ»: Դացի Դավրիժեցու այս վկայութիւնից ուրիշ շատ ցուցումներ ևս հաստատում են, որ Նոր Ջուղայի գաղթականները չէն մոռացել այն ժամանակի ողբերգակ Ստեփաննոս վարդապետի պատուէրը. «բարի՞ ձեր որդւոց թոռանց պատմեցէք, էապէս խայրենիքն քանդած թողեցիք, Մասիսի անունն, Նոյայ տապանի, Երարատ դաշտի, սուրբ Էջմիածնի, մեր Խորվիրապի, սուրբ Գեղարդի, Մուղնի չմոռանան մինչև օրն գատաստանի»: Երբ Շահաբաս խմեցաւ գաղթականների սրտի ցաւը և ճա-

նաչեց, որ նոքա ջերմ կապուած են իրենց սրբութիւնների հետ, հրամայեց Ս. Էջմիածնի տաճարի քարերն և Ս. Լուսաւորչի աջը տեղափոխել Պարկաստան և Նոր Ջուղայում Նոր Էջմիածին կանգնել, որպէսզի գաղթականների սիրտը հաստատապէս կապուի նոր բնակավայրի հետ։ Հայի հրամանը բուն նպատակին չհասաւ. տարիներ յետոյ Ս. Էջմիածինը կրկին նորոգուեցաւ և հաստատուեցաւ իբրև ամենայն Հայոց հայրապետական աթոռ, երբ Մովսէս Գ. Սիւնեցին, Փիլիպպոս Հաղբակեցին և Յակոբ Դ. Ջուղայեցին մէկը միւսին յաջորդելով նոր կեանք և գործունէութիւն ներշնչեցին բոլոր եկեղեցական դասին։ Կաթուղիկոսարանի դպրոցը, որ Յովհաննավանքումն էր, Հաղբակեցին փոխադրեց Ս. Էջմիածին. այդ դպրոցից ուրիշ շատերի կարգում հանդէս եկաւ Դ. դարու նշանաւոր պատմագիրն Առաքել Դավրիժեցին, որ և մինչև իւր խորին ծերութիւնն այն դպրոցին ծառայելով, վախճանեցաւ և ամփոփուեցաւ Ս. Էջմիածնի հասարակաց հանդստարանում, ուր և կայ այժմ նորա գերեզմանը։ Դավրիժեցին վկայում է, թէ ամէնը, որ ուսանում էին կաթուղիկոսարանի դպրոցում, եղան պիտանի մարդիկ՝ վարդապետներ, եպիսկոպոսներ և քահանաներ։ Թէև շատ դժուարին էր այն ժամանակ գիտութեամբ պարապել և ուսում տալ, բայց կրօնաւորները չէին զգում այդ դժուարութիւնները, որովհետև անկեղծութեամբ էին ձեռնամուխ լինում գործին. Դավրիժեցին հետաքրքիր նկարագրութիւններ է թողել, որոնցից և երևում է նորա ժամանակի վանական լուսաւորութեան ոգին. այսպէս նա պատմում է, որ երբ ամէն կողմից սպառել էր կենդանութեան նշոյլը և տիրում էր առհասարակ

լքումն և յուսահատութիւն, Բաղէշի մօտ Ս. Ամիրդու վանքում զարգացաւ արտաքին գիտութիւնների ուսումը. այդ գործին առաջնորդ եղաւ Բարսեղ վարդապետը, որ Գրիգոր Տաթևացու աշակերտութիւնից էր։ Ի-ին ժամանակ այդ ուսումը բովանդակում էր իւր մէջ և՛ քերականութիւն և՛ տրամաբանութիւն և՛ փիլիսոփայութիւն և՛ ճարտասանութիւն և այլն։ Դա Հայոց համար նոր և անծանօթ ուսում չէր, զի յայտնի են Դաւիթ Անյաղթ, Գրիգոր Մագիստրոս, Յովհան Երզնկացի և ուրիշները, սակայն մոռացուած էր. Բարսեղ վարդապետի ջանքն այն էր, որ վերանորոգուի։ Երբ յաջողեցաւ նորան այդ ուսումն աւանդել իւր աշակերտներին, մի վերջին պատուէր ևս տուեց նոցա. Ինձանից սովորածներդ, ասաց նա, և ձեր նոր գտածները դաս ասացէ՛ք ձեր աշակերտներին. և պատուիրեցէ՛ք նոցա, որ իրենք էլ այնպէս անեն. և որպէս զի այդպէս անելով կը հաստատամ, որ Աստուած բանայ և ցոյց տայ մեզ չքնաղ ու պանծալի գիտութեան ամէն գռներն ու ճանապարհները։ Եւ յիրաւի Ս. Ամիրդու վանքի դպրոցից հանդէս եկան շատերը, որ իրենց առաջնորդի պատուիրանին հետևելով նպաստեցին գիտութեան տարածմանն Հայոց մէջ. նոցանից մէկն էր Դավրիժեցու յիշած Մելքիսէթ վարդապետը, որի աշակերտը Սիմէոն Ջուղայեցին մինչևանդամ զանազան ձեռնարկներ գրեց, որպէսզի, եթէ մէկ ուրիշն «առանց ուսուցչի ուսանելու լինի, կարողանայ հեշտ հասկանալ և ապա ձեռնամուխ լինել արտաքին գլքերին». Սիմէոնը Ս. Էջմիածնի դպրոցում ունեցաւ երեսուն աշակերտ, որոնք նորանից դաս առան քերականութեան ուսումը։

ԺԷ. դարի կրօնաւորների այսպիսի գործունէութիւնից

էր, որ գիտութեան սէրը վերարծուեցաւ. այդ սիրով վառուած մարդիկ հետամուտ եղան կիսաւեր վանքերը նորոգելու, նոցա կեանք տալու և նոցա մէջ աշակերտներ ժողովելով կրթելու և լուսաւորելու. վերստին ծաղկեցան Սաղմոսավանքը, Հանդավանքը, Հաւուցթառայ, Դայլեձորի, Զարեբաղեսի և այլ վանքերը. պայծառացաւ Երևանում Անանիա Առաքելոյ վանքը, որի նորոգողն և բարեկարգողն եղաւ Մովսէս Սիւնեցին՝ Ս. Էջմիածնի վերջին նորոգողն և վերահաստատողը: Նորա երկու արժանաւոր յաջորդների Հաղբակեցի Փիլիպպոսի և Ջուղայեցի Յակոբի անուան հետ կապուած է Մաղարթայ Ս. Նախավկայի, Օշականու Ս. Թարգմանչաց, Ուշոյ Ս. Սարգսի և Արարատեան այլ սրբավայրերի նորոգութեան անունը: Դրժուար չէ մակաբերել, թէ այդքան վերականգնած մենաստաններ՝ Մայր Աթոռի շուրջը շէն ու պայծառ բոլորած, լուսաւորուելով կեդրոնի վարժարանից և նոր ոյժ ու կազդուրումն տալով նորա սպառեալ զօրութեանը, ոլքան նպաստաւոր էին լինում Հայոց եկեղեցու բարեկարգութեանն և հօտի մխիթարութեանը: Կրօնաւորները, գիւղեր և քաղաքներ շրջելով, սկսեցին ժողովրդի ջերմեռանդութիւնը վառ պահել և մշակել նորա միտքը. Դավրիժեցին պատմելով Մովսէս Սիւնեցու և նորա ընկեր Պօղոս վարդապետի մասին, ասում է, որ «նոքա շրջում էին երկրից երկիր, շինում էին եկեղեցիներ, նշանակում էին քահանաներ, հաստատում էին դպրոցներ և ուսուցանում էին մանուկներին. մեր հաւատի հաստատութեան համար պատշաճաւոր տեղերում հաստատեցին դպրատուն, որ գիւղերի մանուկները ժողովուին և ուսանին»: Զկար մի վանք, որի շրջակայ ժողովուրդը

զուրկ լինէր հոգևոր մխիթարութիւնից. ամէն տեղ կենդանի հնչում էր Քրիստոսի Աւետարանի քարոզութեան ձայնը, որ մեծապէս զօրացնում էր ժողովրդի լքեալ և աշխատեալ ոգին։

Այս ընդհանուր շարժման մէջ յառաջ եկան և լուսաւորութեանը նպաստող նոր երևոյթներ, որոնց նախապատճառը դարձեալ կրօնաւորներն հանդիսացան. առաջինն Հայոց տպագրական արուեստն էր, որը Յակոբ Ջուղայեցին իւր պաշտպանութեան և հոգացողութեան առարկայ ընտրեց։ Նա Ամստերդամ ուղարկեց եկեղեցականներ, որոնք առաջին անգամ տպագրեցին հայերէն գրքեր և տարածեցին Հայոց մէջ. եթէ մտաբերենք, թէ տարանից երկու հարիւր տարի յառաջ ի՞նչ դժուարութիւններ կային Ս. Էջմիածնից Ամստերդամ գնալու, որքա՞ն հեռու, դժուարին և անկանոն էր ճանապարհը, որքա՞ն պակասաւոր և նուազ էին Ս. Էջմիածնի նիւթական միջոցները, մանաւանդ Ջուղայեցու հայրապետութեան ժամանակ, և որքա՞ն վտանգաւոր էր բռնակալներով պաշարուած գրութեան մէջ այդպիսի օտարերկրեայ կեդրոններ դիմելը, եթէ, ասում եմ, մտաբերենք այս ամէնը, չենք կարող չզարմանալ Յակոբ Ջուղայեցու հաստատամտութեան և նորա ազդաշէն գաղափարն իրագործողների արիաջանութեան վերայ. զի և ուրիշներն իրենից յառաջ այդ փորձը փորձած էին, սակայն անյաջող։

ԺԸ.

Տպագրական արուեստը միակ արգասիքը չէր ԺԷ. դարու վանական կրթութեան. սէրը և ձգտումը դէպի նոր

կեանք և գործունէութիւն այնքան մեծ էր, որ շատերն անխտիր կամենում էին շահուել ամենայն պատահական յաջողութիւնից. ոմանք ընկերանում էին պապական քարոզիչներին, զի նոքա իրենց կրթութեամբ և զարգացմամբ գերազանց էին երևում. ոմանք մտնում էին պապական վանքեր և դպրոցներ, որոնք այն ժամանակներն սկսում էին հաստատուել Արևելքում. իսկ շատերը լաւ էին համարում թողնել իրենց վանքերն և ուսման սիրու համար դիմել Արևմուտք Հայ գաղթականների մէջ, որ կարողանան շահուել Եւրոպայի լուսաւորութիւնից. այդպիսիների ջանքը մեծ մասամբ պսակւում էր յաջողութեամբ և արդիւնաւոր էր լինում Հայոց դպրութեան համար: Նոքա տպագրում էին գրքեր, և եթէ վերադառնում էին Հայրենիք, ուսուցանում էին ժողովրդին, կրթում էին աշակերտներ, նախապատճառ էին լինում զանազան տպարանների Կ. Պոլսում և այլ տեղերում. բաւական է նայել ԺԵ և ԺԸ դարերում տպած Հայերէն գրքերի յիշատակարաններին, որ տեսնենք թէ ոՐպիսի ընդարձակ ծաւալ դուռ արտաքսման գնացած վանականների ազդեցութիւնը նոր մտաւոր շարժման մէջ. սակայն մի առաւել շօշափելի օրինակ է ահաւասիկ ԺԵ. դարու Հայ կրօնաւորների մէջ ամենից համեստն և արդիւնաւորը Մխիթար Սեբաստացին (ծն. 1675). ինքնին մարմնացեալ ուսումնասիրութիւն, օժտեալ բարի յատկութիւններով, առաքինի և գործունեայ, ճարտարախօս և համեստ, մնուած ու զարգացած քրիստոնէական առաքինութեան օրինակ լինելու համար Մխիթար Սեբաստիոյ Ս. Նշանի վանքից սկսած շրջեցաւ և ծանօթացաւ Հայոց շատ վանքերի կացութեանը. նախ Ս. Էջ-

միածնի դպրոցին և նորա հմտագոյն միաբաններից մէկի առաջնորդութեանն յանձնուեցաւ, ապա անցաւ Հայոց հնագոյն և յայտնի անապատներից մէկի՝ Սևանայ վանքի մէջ գտնելու իւր ծարաւին յագեցումն. Բասենու և Կարնոյ վանքերում ևս իբրև ուսուցիչ և իբրև քարոզիչ, իբրև նուիրակ և իբրև քահանայ գործեց ամենայն եռանդով և սրբութեամբ. սակայն ամենուրեք նա զգում էր ուսման և գիտութեան անկատարութիւն. նա չգտաւ նոցա մէջ իւր կորովի մտքին համապատասխան նիւթ և աչքը դէպի Երևմուտք ուղղեց. անցաջողութեան և դառն նեղութիւնների բովի մէջ զտուելով, Մխիթար անօրինակ համբերութեամբ դիմացաւ տոկալ և դիմել բուն նպատակին և իվերջոյ 1717ին Վենետիկու Ս. Ղազարի վանքը հաստատելով, հիմնադիր եղաւ այն պատկառելի և բազմարդիւն միաբանութեան, որ ցարդ ևս կրում է նորա հոյակապ անունը: Մխիթարեան միաբանութիւնն իւր երկարատև գոյութիւնը պարտական է Մխիթարի քարոզած և իրագործած սկզբունքներին: Մի գաղափար էր միայն, որ ոգևորում էր նորան այն է՝ եւրոպական գիտութեան սկզբունքները մտցնել Հայոց մէջ և էական դարձուած տալ Հայոց մտքին՝ մշակելու մայրենի լեզուի և պատմութեան ազգիւրները: Այդ գաղափարի մասին անընդհատ քարոզում են իւր իսկ գործերն և սկսուածքները: Նա առաջինն եղաւ, որ հարազատ և հնագոյն գրչեայ օրինակների համեմատութեամբ Աստուածաշունչ Ս. Գիրքը տպագրեց (Աբբայի Աստուածաշունչ): Նա առաջինն եղաւ, որ Հայոց լեզուի համար հարազատ մեկնութիւններով և օրինակներով օժտեալ մի բառարան կազմեց (Աբբայի բառարան): Նա առա-

ջինն եղաւ, որ Հայոց լեզուն զտեց ու մաքրեց լատինասէր հեղինակների գործած զեղծումներից. այդ երևում է նորա գրաբառ լեզուի քերականութիւնից. իվերջոյ նա առաջինն եղաւ, որ Հայոց լեզուի բարբառներին ևս տեղ տուեց և գրաբառի քերականութիւնից զատ կազմեց նաև իւր ժամանակի աշխարհաբառի քերականութիւնը։ Ես չենք յիշում այն, որ նա առաջինն եղաւ Հայոց ընտիր ձեռագիրների ժողովածու կազմողը, նոցա ուսումնասիրութեան եղանակն իւր աշակերտներին աւանդողը և նոցա մէջ շահեմարանեալ ճոխ պաշարը ազգային նոր գիտակցութեան առարկայ ընտրողը։ Հայց է. ուստի՞ գտաւ Մխիթար այդպիսի մեծաւոր նախապատրաստութիւն, եթէ ոչ Հայոց վանքերում. զի նա ուրիշների նման արտասահման չըգնաց և ուսում առած չէր. նա լատինական վանքերի և վարժարանների աշակերտ չդարձաւ։ Նա ուսաւ այն, ինչ որ ուսան բոլոր իւր կարգակիցներն Հայաստանում. երբ նա Արևմուտք դիմեց, նորա ճանապարհն աւելի փշոտ էր քան իւր նախորդներինը։ Նա չունէր ոչ մի հովանաւոր. նա չունէր ոչ մի յուսոյ կայարան. նա մեկնեցաւ Կ. Պոլսից իբրև հալածեալ և ճանապարհ ընկաւ ոչ միայնակ, այլ տասնեւմէկ աշակերտներով, որոնց ապրուստի համար նա ունէր հետը միայն մի քանի հարիւր դահեկան փող, որ գոյացել էր իւր վաճառեալ տպարանի և կարասիքի գնից։ Բայց տեսէք թէ այս լքեալ մերժեալ մարդը ի՞նչ անօրինակ համբերութիւն, աշխատասիրութիւն և բարեպաշտութիւն է ցոյց տալիս օտար երկրի անծանօթ ժողովրդի մէջ. Մեթոնի դղեակում հիւանդութիւն, աղքատութիւն, վերահաս պատերազմ, սիրասուն աշակերտների դերեվարու-

թիւն, իւր ձեռակերտ վանքի և բնակութեան աւերում տեսաւ, չվհատեցաւ Մ՝խիթար. Վենետիկում այդ ձախող հանգամանքներից ոչ պակաս նոր զրպարտութիւններ և մատնութիւններ լսեց, չվհատեցաւ Մ՝խիթար. զի այդ ամէնը լոյծ ալիքներ էին, որ խորտակւում էին նորա հաստատ կամքի և համբերութեան անդրդուելի ժայռերի առաջ։

Իւր գործունէութեան մէջ մի սխալ միայն գործեց Մ՝խիթար, որ անկարելի է առանց յիշատակութեան թողնել այստեղ։ Նա Հայաստանեայց Եկեղեցու հովանաւորութեան տակից դուրս գալով, Հռովմայ գահին հպատակեցաւ. այս կէտի մէջ Մ՝խիթար անշուշտ մեղանչեց պատմութեան առաջ. սակայն նորա այդ սխալը կարելի է բացատրել ժամանակի դառն հանգամանքներով, մանաւանդ որ այն երկրի օրէնքները, ուր նա ստիպուած էր գործել, չէին ներում ոչ ոքի մի կրօնաւորական ուխտ կազմել առանց Հռովմայ գահի հաւանութեան. և եթէ Մ՝խիթար իւր ազգասիրական իղձերն իրագործելու և Վենետիկում ու Իտալիայում մթերեալ դիտութեան պաշարներից օգուտ քաղելու համար ոչ մի հնար չունէր մերժելու այդպիսի մի հպատակութեան պայման, ապաքէն նա ճնաց գործով և հոգով ազգային դրօշակը պաշտող և պաշտպանող անձն և իւր իսկ օրինակով նոյնն աւանդեց և իւր աշակերտներին։

Սակայն ինչպէս կարելի է ասել Մ՝խիթարի համար, նոյնը դժուար է կրկնել նորա անունով հռչակուած միաբանութեան նկատմամբ. զի նա թողած է Մ՝խիթարի ընթացած շաւիղները և նպատակը. շարունակ Հռովմայ գահի հակազգային պահանջներին անսալով, Մ՝խիթարեան միաբանութիւնն ահաւասիկ ապրում է իբրև ուրոյն կղզեա-

ցեալ մարմին առանց այն ազգային սկզբունքների, որոնք Մխիթարի գործունէութեան փառաւոր նշանաբանը կազմեցին։ Եթէ մի ժամանակ Հռովմայ գահին հպատակելը կարևոր էր Մխիթարի վանքի նպատակին իրագործելու համար, այժմիկ նորա սկսած մեծ գործը պսակելու համար, կարծում ենք, որ պէտք է Մխիթարեան Ս. Հարք յօժարին ազգային դրօշակի տակ մնալու, եթէ ոչ Մխիթարի անկած փառաւոր պարտէզն հեղհեղեալ առիւզոյէ նիւթոյ անշուշտ կրչորանայ, ինչպէսոր պատմութեան անսուտ օրէնքներն հաստատում են այդ։

ԺԹ.

Յամէ արդ հակիրճ յիշատակութեամբ անցնել և արդի վանքերի մասին, ընտրելով նոցանից այնպիսիները, որոնք աւելի համապատասխան են այժմեան ժողովրդի բարոյական և մտաւոր պահանջներին։

Դարս և յառաջ յիշատակութեան արժանի է Ս. Էջմիածնի վանքը. չկայ այսօր Հայոց մէջ մի այլ վանք, որ իւր պատմական և ժամանակակից նշանակութեամբ կարողանայ հաւասարուել Ս. Էջմիածնին. այնտեղ է Ս. Լուսաւորչի Աջը և ամենայն Հայոց հայրապետական աթոռը. այնտեղ է լինում բոլոր եկեղեցական վիճակների համար Ս. Միւռոնի օրհնութիւնը և եպիսկոպոսների ձեռնադրութիւնը. և այնտեղ է, իվերջոյ, կեդրոնացած Հայոց Եկեղեցու ծայրագոյն հոգևոր վարչութիւնը։ Սակայն ի՞նչ է պատկերացնում այսօր այդ ամենանշանաւոր և նուիրական սրբավայրը. իւր ամէն մասերում կատարեալ աղքատու-

թիւն։ Նոյն իսկ Ս. տաճարների շէնքն ևս պատկերացնում է մի քայքայումն։ Ս. Էջմիածնի բաղմակողմանի աղքատութեան պատճառն այն է, որ այդ հնագոյնեան վանքի մէջ չկայ այսօր կազմակերպեալ միաբանութիւն. փոխանակ կրօնաւորական ուխտի գոյութիւն ունի անդ միմիայն մի հասարակ կենակցութիւն զանազան տեղերից ժողովուած զանազան կրթութեան և դաղափարների տէր կարդաւորների, որոնց իրար հետ կապող միակ կապը ապրուստն է։ Նոքա չեն կազմում վանական կանոններով և կարգերով սերտ կապուած եղբայրութիւն, այլ կան իբրև լոկ ծառաներ կաթուղիկոսների, որոնք իրենց ճանաչողութեան չափով և որոշում են իւրաքանչիւրի գործունէութեան սահմանը։

Ս. Էջմիածնի վերայ պէտք է նայել առաւելապէս իբրև հայրապետական աթոռի և դաստակերտի վերայ։ Դեռ ԺԷ. դարում Փիլիպպոս Աղբակեցին հաստատեց Ս. Էջմիածնում կաթուղիկոսարանի դպրոցը, որ գոյութիւն ունեցաւ մինչև Ղուկաս Կարնեցին. այնուհետև Դաւիթ-Դանիէլեան վէճերի, Պարսից արշաւանքների և Եփրեմ կաթուղիկոսի փախուստի ժամանակ, որոնք մէկը միւսին յաջորդեցին, ոչ միայն դպրոցը, այլև ամբողջ վանքը ծանր տագնապի մէջ էր։ Յովհաննէս Կարբեցին շինեց Ս. Էջմիածնի արդի ժառանգաւորաց դպրոցը, ուր ժողովեց աշակերտներ և կարգեց ուսուցիչներ մեծ մասամբ իւր ժամանակի վանականներից։ Ներսէս Աշտարակեցին զրէթէ անուշադիր թողեց այդ դպրոցը, յոյսը դրած լինելով իւր հիմնած Ներսիսեան դպրոցի վերայ։ Մատթէոս Ա. իւր կարճատև կաթուղիկոսութեան ժամանակ շատ սակաւ միջոց ունեցաւ ժառանգաւորաց դպրոցով զբաղուելու, թէև աշխատում

էր պահպանել նորա գոյութիւնը։ Իվերջոյ Գէորգ Դ. կաթուղիկոսին յաջողեցաւ 1874 թուին բանալ Մայր Աթոռում մի ճեմարան ընդարձակ դիրքով և ժամանակակից ծրագրով. նորա հրամանով ժողովուեցան մանուկներ Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի սահմաններից. նոքա սնանում և ուսանում են անդ Մայր Աթոռի ծախքով և նորա անմիջական հսկողութեան ներքոյ։ Թէ ինչ ազդեցութիւն կ'ունենայ Մայր Աթոռի ապագայի վերայ այդ նոր օգտաւէտ հաստատութիւնը, ժամանակը ցոյց կուտայ. սակայն ակներև է, որ նա իբրև նոր հաստատութիւն այն ժամանակ կ'ունենայ իւր արդիւնքը, երբ յարատև գոյութիւն ունենայ որոշ և փորձուած ուղղութեամբ։ Ս. Էջմիածինն ունի և մի տպարան, որի հիմնադիրն է Սիմէոն կաթուղիկոսը. նորանից յետոյ տպարանն երկար տարիներ գրէթէ խափանուած մնաց, մինչևոր վերջնականապէս կանոնաւորեց նորան Գէորգ Դ. միքանի բարեպաշտ ազգայինների օգնութեամբ. բաղմարդիւն հայրապետը 1868 թուին սահմանեց և մի թերթ Արարատ անուանով. նորա քաջալերութեամբ առաջին անգամ լոյս տեսան այդ տպարանից և միքանի հին պատմական յիշատակարաններ։ Այս տպարանն, եթէ շարունակուի, ունի մեծ նշանակութիւն և Ս. Էջմիածնի մատենադարանի համար, որ լի է հաղարաւոր գրչեայ մատեաններով. Մատթէոս Ա. բարեկարգել տուաց այդ մատենադարանը և այժմ պահպանում է մեծ խնամով վանքի քարտուղարեայ կամարակապ շէնքերից մէկում։ Գէորգ Դ. կցեց ս. տաճարներին և մի թանգարան, ուր ժողովեց վանքի բոլոր զարդերը, անօթեղէնները, զանազան թանգագին հնութիւն-

ները, որոնք պահպանուում են առանձին պահարաններում թուով ու համարով արձանագրուած։ Այս ամէնից տեսնելու է, որ Ս. Էջմիածինն իբրև կաթուղիկոսների դաստակերտ որոշեալ չափով յառաջադիմութիւն ունեցաւ ներկայ դարումս. նկատելու է սակայն, որ այդ յառաջադիմութեան գործին բոլոր կրօնաւորներն հաւասարապէս նախանձախնդիր չեղան։

Ս. Էջմիածնից յետոյ երկրորդ տեղը բռնում է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը, ուր կայ մի բազմաթիւ միաբանութիւն. դարաւոր հնութիւնը, բազմատեսակ քրիստոնեայ ազգերի և կրօնաւորների ներկայութիւնը, քրիստոնէական կրօնի նուիրական Ս. տեղերի հռչակը, որ գրաւում է բազմաթիւ ուխտաւորներ և այցելուներ, միջոց են տուել այդ վանքին բարձր պահելու Հայոց ուխտերի անունը օտարների առաջ։ Միաբանութիւնն ունի իւր ընտրեալ առաջնորդը պատրիարք անունով, որ ցմահ կապուած է իւր վիճակի հետ. այնտեղ կայ ժառանգաւորաց դպրոց, տպարան և ճոխ մատենադարան. հրատարակւում է Սիոն անունով թերթը. կարճ ժամանակի մէջ տպագրուեցան և միքանի ընտիր հրատարակութիւններ Հայոց մատենագիրներից։ Նկատելու արժանի է սակայն այն, որ արդիւնքների վատ մատակարարութեամբ այդ վանքը ընկած է մեծ պարտքի տակ, որից ազատ է Ս. Էջմիածինը։

Այս մեծ վանքերից զատ կան և դաւառական սրբավայրեր, որոնցից ուշադրութեան արժանի են հետևեալները.

Առաջին՝ Երմաշու Զարխափան Աստուածածնի վանքը Նիկոմիդիոյ մօտ, ուր կայ միաբանութիւն, դպրոց և տպարան. մի ժամանակ հրատարակուեցաւ անդ Յոյս անունով

թերթը. վանքի վիճակը կախուած է կրօնաւորների աշխատութիւնից և ուխտաւորների նուէրներից։

Երկրորդ՝ Վարագայ Ս. Նշանի վանքը Վանայ մօտ. յիսուն թուականներին մի դարու հռանդուն կրօնաւորներից մէկը՝ Մկրտիչ Երիմեան, այժմ արքեպիսկոպոս, ժողովից այնտեղ մնում էին, ուսում տուից, նոցանից կազմեց մի միաբանութիւն, հիմնեց անդ մի տպարան և հրատարակեց Երծիւ Վասպուրականի անունով թերթը, որ անդրանիկն էր Հայոց հողի վերայ։ Տարիներ յետոյ նոյն կեանքն արծարծեց նա և Տարօնոյ Ս. Կարապետի վանքում։ Ապաբաղդաբար երկուսն էլ շուտով խափանուեցան, զի Երիմեան փոխադրուեցաւ աւելի բարձր ասպարէզի համար Կ. Պոլիս, իսկ նորա սկսածը շարունակող չգտնուեցաւ։ Այժմ էս Վարագայ վանքն ունի դպրոց։

Երրորդ՝ Ս. Խաչ վանքը Նոր Նախիջևանի մօտ, որ հիմնուեցաւ անցեալ դարի վերջերում. նորա հիմնադիր Յովսէփ արքեպիսկոպոս Երզուրեանը բացեց անդ մի դպրոց և տպարան, ուր կարողացաւ տպել տալ միքանի գրքեր. այժմիկ այդ վանքը գտնուում է Նոր Նախիջևանի Մարդասիրական Ընկերութեան խնամքի տակ, որը պահում է անդ մի դպրոց շրջակայ հայաբնակ գիւղերի մանուկների համար։ Վանքում միաբանութիւն չկայ։

Չորրորդ՝ Հառիճայի վանքը Աղէքսանդրապոլի մօտ. այս վանքը քանիցս անգամ դարերի ընթացքում ենթարկուել է ասպատակութիւնների և աւերածի։ 1830 թուին Կարսի գաղթականների առաջնորդն Ստեփաննոս եպիսկոպոս Խաժակեանը, որ յառաջ նստում էր Հոռոմոսի վանքում, հաստատեց անդ իւր աթոռը։ 1850 թուին միքանի Աղէք-

սանդրապոլցի բարեպաշտ անձինք Ծայրագոյն հոգևոր իշխանութեան հաւանութեամբ մի հոգաբարձութիւն կազմեցին, որին մշտական նախագահ և ղեկավար եղաւ Տ. Յովսէփ աւագ քահանայն Կոստանեանց։ Հոգաբարձութիւնը նախ և յառաջ նորոգեց Ս. տաճարների քայքայեալ մասերը. ապա մաքրել տուեց փլատակները, և իվերջոյ 1856 թուին շինեց միքանի սենեակներ, որոնց մէջ բացեց ուսումնարան գիւղացի մանուկների ուսման համար։ Թէ շինութիւններն և նորոգութիւնները և թէ նոյն իսկ ուսումնարանի պահպանութիւնն հոգաբարձութիւնն անում էր իւր իսկ ծախքով։ Մատթէոս Ա. և առաւելապէս Գէորգ Դ. հայրապետները գնահատելով հոգաբարձութեան ջանքերն, հետզհետէ նորան հաւատացին վանքի ամբողջ կառավարութիւնը, յատկացնելով դպրոցին և արտաքին արդիւնքներ։ Հոգաբարձութիւնն այդպիսի հովանաւորութիւնից քաջալերուած հետզհետէ կանգնեց վանքի շրջապատում քարուկրեայ նեղարաններ, սեղանատուն և ապա 1878 թուին հիմնեց մի հաստահիմն շինուածք ժառանգաւորաց դպրոցի համար. այնտեղ կարող են զետեղուել յիսուն գիշերօթիկ աշակերտ, որոնցից քսանևհինգն իբրև ձրիաթոշակ որդեգիրներ ընդունում են գիւղացի որբ և չքաւոր երեխաներից։ Հառիճայի դպրոցն հոգաբարձութեան ձեռքի տակ գրեթէ երեսուն տարի շարունակ ունէր վարձեալ ուսուցիչներ և ձրիաթոշակ աշակերտներ, որոնցից շատերը գիւղերում քահանայ դառնալով, պատճառ եղան փոքրիկ գիւղական վարժարանների։ Այդ վանքն էլ չունի միաբանութիւն։

Սան ներկայումս և այնպիսի վանքեր, որոնց մէջ եր-

բեմն երբեմն գոյութիւն ունեցած է գպրոց գիւղական մանուկների համար. զորօրինակ Հաղբատու և Սանահնի վանքերը. բայց որովհետև նոցա մէջ հաստատուն միաբանութիւն չկայ և վանահայրերն ստէպ ստէպ փոփոխուում էին, ուստի և նոցա գպրոցների գոյութիւնը կախուած էր առանձին անհատների ներկայութիւնից և բացակայութիւնից։ Կարելի է այդպիսիների կարգում համարել և Ս. Գայիանէի վանքը. 1872 թուին արդի գիտնական կրօնաւորներից մէկը Բաստամեան Վահան վարդապետը նորոգից և բարեկարգից այդ վանքը. Մայր Էթոռի տպարանի օգնութեամբ հրատարակից անդ Գպրոց անունով թերթը, բայց չյաջողեցաւ նորան կազմել միաբանութիւն. պատրաստեց և Մխիթար Գօշի Գառատոանագլքի անդրանիկ հրատարակութիւնը, որ նորա վաղահաս մահից յետոյ լոյս տեսաւ Մայր Էթոռի տպարանում։ Սոցանից զատ կան և ուրիշ վանքեր, որոնք, ինչքան գիտենք, ներկայ դարում իբրև ուխտատեղեր և հնութիւններ շարունակ վայելել են ժողովրդի յարգանքը, սակայն չեն ունեցել պատշաճաւոր գործունէութիւն։ Մի քանիսների մէջ ջերմեռանդ կրօնաւորներ նոր բնակութիւն են հաստատել դպրոց բանալու նպատակով, բայց տակաւին յաջողած չեն. այդպիսիներից են Հաղարծինը Գիլիջանի մօտ, Կարմիր վանքը Հ. Նախիջևանի մօտ, Խծկոնից վանքը Անդ մօտ, Հարիքայ վանքը Գանձակի մօտ և այլք։

Ի.

Մեր խօսքը երեկոյանում է. զի այլևս սպառեցաւ այն լոյսը, որ առաջնորդում էր մեզ, ամենածանր ժամանակը և

կոյր տգիտութիւնը, կարծես, կարողացած են ջնջել անցեալի պատկերը, աւանդելով մեզ միայն չոր պատեր, տխուր աւերակներ և կիսակործան շէնքեր։ Այժմ չկան այլևս վանքեր և բարձեալ է ամենևին վանական կացութիւնը, թէև փոխարէնը մնացած կան նոցա անցած փառքի նահանջեալ նշոյլները, որոնք դոգցես լեղու եղած չարաչար կշտամբում են մեր անհոգութիւնն և կրօնական անտարբերութիւնը. այսօր գոյութիւն ունին արդարև հռչակաւոր Տաթևը, Գանձասարը, Ս. Գեղարդայ վանքը, Ս. Խորվիրապը, Մողնին, Երնջակայ Ս. Կարապետը, Մաղարթայ Ս. Նախավկան, Արտազու Ս. Թադէն, Տարօնոյ Ս. Կարապետը, Հոռոմոսը և այլն. սակայն ի՞նչ են նոքա համեմատութեամբ իրենց անցեալի հետ. ամենատխուր հակապատկերնե՞ր։ Նոցա մէջ միաբանութիւններ չկան, քարոզութիւնը, վարդապետութիւնը և կրօնական ուսումն այլևս չեն ծաղկում։ Այժմ երբ հայ ժողովուրդը շրջապատուած օտար քարոզիչներով և օտարակրօն որսկաններով՝ ոչ պակաս կարօտ է իւր եկեղեցական դասի աշխարհութեանը և կրօնական եռանդուն գործունէութեանը, այժմ իսկ այդ վանքերի մէջ ամենասակաւ բացառութեամբ թագաւորում է մտաւոր և բարոյական կատարեալ մեռելութիւն։ Մինչև ներկայ դարիս սկիզբները այդ վանքերն ունէին միաբանութիւններ, նոցա պատկանում էին եկեղեցական վիճակներ, որոնց առաջնորդը նստում էր վանքում և այնտեղից հովում էր ժողովրդին. նոցա կրօնաւորներն անդադար դուրս էին գալիս, քարոզում էին ժողովրդին, եկեղեցական հանդէսներ էին կատարում, մանուկներ էին ժողովում վանքի մէջ ուսում տալու, ուխտադնացութիւններն անպակաս էին լինում և այլն.

այժմ ոչ մէկը դոցանից չկայ։ Կանգ առնենք ուրեմն և տեսնենք, թէ ի՞նչն եղաւ այժմ վանքերի անշքանալու և անկման պատճառ.

ա. Ս. Էջմիածնի մէջ ծագած խռովութիւնները Դաւիթ-Դանիէլեան կուսակցութիւնների երեսից սպառեցին նախ՝ Մայր Աթոռի եկամուտներն և գանձերը և երկրորդ՝ ժողովրդի վստահութիւնը նորա կառավարիչների վերայ. ինչոր Պարսից սարդարների գործակալների ազահութիւնից կարողանում էր ազատուել, այն կոչւում անհետանում էր կուսակցութիւնների օգտին։ Այսպիսով Մայր Աթոռը ոչ միայն աղքատացաւ, այլև ծանր պարտքի տակ ընկաւ, որն ստիպեց Եփրեմ կաթուղիկոսին փախչել Ս. Աթոռից։ Միւս վանքերն էլ զերծ չդտնուեցան այս խառնակ և անդլուխ դրութեան վատ հետևանքներից. անհաւատարիմ մարդիկ վատնեցին վանքերի գոյքը և եկամուտները. վանականների վարին սկսեց կոտրուել ժողովրդի աչքում և տուրքերն սկսեցին պակասել։

բ. Ռուս-պարսկական և ռուս-տաճկական պատերազմներն ընդհանուր յուզման պատճառ եղան. մահմէտականներն յարձակուեցան շատ վանքերի վերայ, կողոպտեցին, քանդեցին, կրօնաւորներին մեծամեծ տուգանքների տակ դրին, ուխտաւորներին երկիւղի և անատուդութեան մէջ ձգեցին և այսպիսով ամենուրեք յառաջացաւ մի ընդհանուր աւերած և աղքատութիւն, որ ազդեցութիւն ունեցաւ և վանքերի վերայ։

գ. Կաթուղիկոսներն անփոյթ դտնուեցան վանքերը վերականդնելու և նոցա կրած վնասները յետ բերելու։ Դաւիթ-Դանիէլեան վէճից յետոյ ոչ Դաւիթ և ոչ Դանիէլ

չհոգացին մի որևիցէ վանքի վերանորոգութեան վերայ. Եփրեմ կաթուղիկոսը, Դանիէլի յաջորդը, տկար գտնուեցաւ վանահայրերից հաշիւ պահանջելու. նորա յաջորդն Յովհաննէս ոչ մի օգուտ չքաղեց իւր ժամանակից վանքերի կալուածներին տիրելու և նոցա սեփականութեան իրաւունքը նոր օրէնքներով վաւերացնելու. Ներսէս Ե. ժողովից վանքերի արդիւնքն ու գոյքը Ս. Էջմիածին, վանականներին փախստական վարեց ամէն կողմ, բայց չկարողացաւ նոր վանք և վանականութիւն կազմել. նոյնը չյաջողեցաւ նորա երկու յաջորդներին, որոնք ջանք դրին վանքերից միքանիսի վերանորոգութիւնը փութացնելու:

Դ. Շատ վանքերի նշանաւոր սրբութիւններն և մասունքները հետզհետէ փոխադրուեցան Ս. Էջմիածին կամ մի այլ տեղ. նոքա այսօր Ս. Էջմիածնի անուանը, սրբութեանը և արդիւնքներին ոչինչ նոր բան աւելացուցել չեն, զի նա ինքն ըստ ինքեան իւր նուիրական Ս. տաճարներով, Ս. Լուսաւորչի Աջով և Ս. Միւռոնով արդէն իսկ մի ցանկալի սրբութիւն է. մինչդեռ միւս վանքերը զրկուելով իրենց պատմական սրբութիւններից, զրկուում են ամէն բանից. Ամենափրկչի Ս. Պատկերը, Գետարգելի Ս. Նշանը, Ս. Գեղարդը, Ս. Յակոբայ Աջը և այլն միայն զարդարում են Մայր Աթոռի թանգարանը, մինչդեռ նոքա իրենց տեղերում առանձին առանձին վանքերի գոյութեան պատճառ էին լինում:

Ե. Ներկայ դարում կաթուղիկոսներից ոմանք ներեցին իրենց խլել զանազան ուխտատեղերի արդիւնքը և յատկացնել Ս. Էջմիածնին կամ ուրիշ տեղի: Այդ սխալը ոմանց աչքին երևում է խոհեմ տնտեսագիտութիւն. այն

ինչ, եթէ ուշադրութիւն դարձնենք հետեւանքների վերայ, կըտեսնենք, որ պէտք էր իւրաքանչիւր վանքի արդիւնքը պահել իրեն մէջ և արդիւնաւորել՝ մի դպրոց կամ այլ հասարակաշահ գործ հաստատելով այնտեղ, որպէսզի ժողովրդի ջերմեռանդութիւնը կենդանի մնայ և առաւել սնանի ու աճի։ Ռազմամարդ քաղաքները կարող են ոչ միայն իրենց զաւակների համար իրենց տեղական դպրոցներին օգնել, այլ մինչև անգամ նպաստել և կրօնական-պատմական սրբավայրերի պայծառութեանը։ Այնինչ խլելով վանքերի եկամուտները և տալով քաղաքների դպրոցներին կամ տանելով Ս. Էջմիածին, մենք բանադրում ենք այդ վանքերին լինել թափուր և անշուք և միանգամայն անկարող մի որ և իցէ բարոյական հաստատութիւն կազմելու։ Գլխաւոր պատճառաբանութիւնն այն է, որ այդ արդիւնքներով պահւում են զանազան դպրոցներ. սակայն այդ մի առիթ է արդարանալու. չէ՞ որ նոյն գումարներով կարելի է դպրոց պահել և վանքերում. և այդ աւելի օգտաւէտ կըլինի ժողովրդի, մանաւանդ գիւղական դասի համար։

Զ. Եկեղեցական կարգապահութիւնը, որ այնքան կարեւոր է վանական կեանքի համար, այս դարում բոլորովին խանգարուեցաւ. յառաջ իւրաքանչիւր վանական մի բարձրագոյն աստիճանի և պատուի հասնելու համար պէտք է անցնէր իւրաքանչիւր ստորին աստիճանը և նորա արժանաւորութիւնները պէտք է փորձուած լինէին փոքր գործերի մէջ։ Այժմ այդ գեղեցիկ կարգապահութիւնը և նորան լծակից շատ բարի և օգտակար պայմանները, բոլորովին զանցառութեան են տրուում։ Ասում յառաջացել է այն, որ աւագութեան և ծերութեան պատիւ, արդիւնա-

ւոր անցեալի յարգանք, գիտութեան և կրթութեան վարկ, վարչական հմտութիւնների և բարեպաշտական կեանքի արժանիք տեղի են տուել ճարպիկութեանն և աշխարհային շահերին, որոնք և են այսօր բարձրագոյն աստիճանների ծանուցեալ վերելակները։

Է. Վանական կեանքն ինքն ըստ ինքեան խախտուեցաւ, երբ իւրաքանչիւր վանական սկսեց նախադասել քաղաքներում զանազան պաշտօններով և յանձնարարութիւններով մնալ. այս առաւել զարգացաւ այն ժամանակ, երբ առաջնորդներն իրենց վանքերը թողին և սկսեցին քաղաքներում բնակել։ Ոչ մի եկեղեցական կանոն և ոչ մի օրէնք նուիրագործել չէ այդ փոփոխութիւնը. միակ պատճառաբանութիւնն այն է, թէ հոգևոր ատեաններին հարկաւոր է քաղաքային ատեանների մօտ լինել. եթէ մինչևանգամ այդպիսի կարիք զգալի լինի, դարձեալ հարկ չկայ վանական մարդիկներին քաղաքի մէջ ապրել. առաջնորդներն և իրենց տեսչութեան տակ գտնուող դպրոցը շատ աւելի մեծ օգուտ կուտան եկեղեցու հօտին, երբոր հեռու լինին քաղաքներից և գործեն վանքերի մէջ։ Այս առաւել անհրաժեշտ է այն վիճակների համար, որոնք մահմէտական տէրութիւնների մէջ են. զի յայտնի է, որ առաջնորդն այնտեղ աւելի բարձր նշանակութիւն ունի, որն էլ առաւել կրբարձրանայ, եթէ նորա աթոռը կրօնական սրբավայրում գտնուի։ Մինչդեռ մենք տեսնում ենք, որ Տաճկաստանի կրօնաւորները մեծ մասամբ լցուում են Կ. Պոլիս և Թափուր են առաջնորդական աթոռներն և վանքերը։

Ը. Արդի կրօնաւորներն, ինչ լաւ արժանաւորութիւններ և ունենան, դարձեալ կրօնաւորներ չեն. ամէնքը խոյս

են տալիս նեղութիւնից, ամէնքը կամենում են, որ ժողովուրդն արտաքոյ կարգի պատիւներ ընծայէ նոցա. ամէնքին հաճելի է գտնուել մի բարձր պաշտօնի գլուխը. համեստ կրօնաւորի գործը և կոչումը, որ է առաքինութեան օրինակ լինել, քարոզել և ուսուցանել, շատ փոքր է երևում նոցա աչքին. եթէ շատ սակաւաթիւ բացառութիւններ կան, և՝ նոքա նուազ պատրաստութիւններ ունենալու պատճառով վարակուել են իվերջոյ ընդհանուրի յատկութիւններով։ Կրօնաւորների մեծ մասը մտածում է անձնական հանգստութեան, փառքի և վայելչութեան վերայ. բանիս վկայ այն կերպասն ու թաւիշը, որով նոքա պաճուճւում են, այն տներն ու կալուածքները, որոնցով ճոխանում են նոցա մերձաւորները, այն զարդերն ու կառքերը, որոնց երաշով անցնում է նոցա սղջ կեանքը, այն նշանակեալ հանդստութեան և զբօսանքի ժամերը, որոնք փակում են գործատէր մարդիկների առաջ նոցա դռները, և այն դրամագլուխները, որոնք նոցա մահից յետոյ զանազան վէճերի և կռահների նիւթ են դառնում և որոնք սակայն երբէք չեն կարող չկշտամբել նոցա ագահութիւնը։ Ա. Ոչեղեցու հօտը չի կարող այդպիսիներին ընծայել այն երախտագիտութիւնը, որ վայելում են այն սակաւաթիւ կրօնաւորները, որոնք փոխանակ դրամագլուխների թողին ժառանգութիւն գրքեր, հասարակաշահ շէնքեր, սուրբ և մաքուր վարքի օրինակ և իմաստալից վարդապետութիւններ ու քարոզներ։ Կրօնաւորի գոհարներն ու մարգարիտներն իսկապէս սրբա են, որ իրրև յաւիտենական գանձեր կրպահեն նորա անունը յաւիտեան։

և թ. Հասարակութեան աշխարհական դասը Ա՝ուսաց

տիրապետութեան շնորհիւ միջոց գտաւ պետական վարժարաններում կրթուելու և իւր զարգացմամբ եկեղեցական դասից շատ և շատ աւելի յառաջ անցնելու. այսպէս եղաւ և Օսմանեան Հայաստանում, ուր աշխարհականների որդիք Եւրոպա երթալու յարմարութիւններ ունէին։ Հին եկեղեցական սերունդը չվերանորոգուեցաւ նորակիրթ տարրերով. մինչևանգամ յարատևեց մնաւոր անշարժութեան մէջ։ Հետզհետէ աշխարհականի և եկեղեցականի մտաւոր զարգացման և աշխարհահայեցութեան կերպարանքը այնպէս տարբերուեցան իրարուց, որ այլ ևս նախկին սերտ կապը և պատմական առընչութիւնը կարծես մոռացուեցաւ. զի դերերը փոխուեցան. նախկին առաջնորդն այժմիկ ստիպուած էր մնալ առաջնորդեալի հովանաւորութեան տակ, եթէ ոչ պաշտօնապէս, գէթ բարոյապէս և նիւթապէս։ Պարզ է, որ աստի կարող էին յառաջանալ մէկ կողմից՝ մի տեսակ անբացատրելի սառնութիւն դէպի եկեղեցական կոչումը և միւս կողմից՝ մի խուլ տրտունջ կամ դժգոհութիւն աշխարհականների դէմ։ Ոչ այն և ոչ այս չունէին, իհարկէ, ճշմարիտ հիմք պատմութեան մէջ և իբրև ժամանակաւոր երևոյթներ տեղի պիտի տան իվերջոյ մի սերտ համերաշխութեան հօտի և հովուի մէջ։ Օվ միակ ճշմարտութիւնն այն է, որ Հայոց Եկեղեցին և իւր հօտը չեն ունեցել երբէք տարբեր շահեր և ձգտումներ, այլ եղել են միշտ իրարից անբաժան իբրև մի հոգի մի մարմնի մէջ։

ՎԵՐՋԱԲԱՆ.

Գուցէ ընթերցողին միակողմանի երևի մեր համառօտ նկարագիրը. զի խօսելով լաւերի վերայ, մենք լռեցինք վատերի մասին. և այս ոչ անխորհուրդ։ Մեր նպատակն էր պատկերացնել վանական կեանքը իբրև կազմակերպութիւն, իբրև հասարակական ասպարէզ, իբրև մի նուիրագործեալ դրութիւն։ Մենք ցոյց տուինք այդ, որքան ներում էր մեր կարողութիւնը, և տեսանք, որ բնութեան դիւրագայթ զաւակներին հնարաւոր է ոտքի տակ առնել մարմինը և կաղդուրուած հոգևոր մարզութիւններով՝ արիանալ աշխարհի համար, մեծամեծ գործել և անմահանալ. տեսանք, որ այդ կեանքը օգտակար եղաւ Հայոց Եկեղեցուն և մեծապէս նպաստեց Հայոց կրթութեան, լեզուի և բանահիւսութեան բարգաւաճմանը։ Անշուշտ այդ ամէնն յաջողեցաւ այն կազմակերպութեան շնորհիւ, որ հաստատուեցաւ վանքերի մէջ։

Հարկ չկայ ապացուցանելու, որ ամենայն հաստատութեան մէջ, եթէ կայ կազմակերպութիւն և կանոնական սահման, նոյն իսկ վատերն ևս անզօր են մնում և ենթարկուելով ընդհանուրի ազդեցութեանը, չեզոքանում են։ Նոյնը տեղի ունեցաւ և Հայոց վանական կեանքի մէջ. ասել թէ այնտեղ վատեր չեն եղել, հեռու կրլենի ճշմարտութիւնից։ Այդ վատ և վնասակար անդամներն այն դէպքերում միայն բարձրագլուխ հանդիսացան, երբ Հայոց Եկե-

զեցու կաղմակերպութիւնը թուլացաւ և կանոնական սահմանը քանդուեցաւ։ Այդպիսի մի ժամանակ էր զորօրինակ Ե. դարում այն շրջանը, երբ Ս. Սահակ Պարթևի տեղը օտարազգի և կաշառակեր Ռըքիշոներն և Շմուէլները նըստան, երբ Վաղարշի ու նորա նիզակակից ուխտապահների տանուտէրութիւնը ուրացող Հայ իշխանների ձեռք անցաւ։ Գիտենք որ այն ժամանակ ապականուած եկեղեցականների թիւն ամեցաւ. և անշուշտ այդպիսիների հետ է խօսում երջանիկն Եղիշէ իւր «Յաղագս Մխանձանց» խրատի մէջ, երբ դանդատում է Հայոց կրօնաւորների վատութեան վերայ. «Յետսընդդէմ ընթերցաք, ասում է նա, զգեղեցիկ զրեալն. ի պատճառս ուխտաւորութեան հեռացաք ի սուրբ ծնօղացն և արարաք բազում հարս օտարոտիս. ազատացաք ի հարկաց ալքունի, զորս առանց մեղաց էր հարկիլն, և մնաք ընդ հարկաւ ստացուածոց, որ լի են անառակ ագահութեամբ. չելաք յանկողինս սուրբ հարսանեաց, և արարաք մեզ բարձրագահոյս առաւել քան զաշխարհի. կօշիկք ոտից մերոց յանդիմանեն զմեզ, եթէ չեն սուրբ ճանապարհք մեր. հանդերձք մեր աղաղակեն զգործոց մերոց, եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուցն. երամարք մեր ցուցանեն զմեզ, եթէ ոչ եմք յափշտակելոց ընդառաջ Տեառն ի վերայ օդոց. շինուածք ապարանից մերոց յայտ առնեն, եթէ ոչ ունիմք մեք տաճար առանց ձեռագործի յերկինս. կալուածք անդաստանաց մերոց կշտամբեն զմեզ, եթէ չեք մեր բաժին ի վիճակն յերկնաւորս. մրգուղք անյաղք եղաք ի կերակուրս և առանց չափոյ արբաք գինի պղտորիչ խորհրդոց և մտաց. խոր ի քուն ննջեմք ամենեքեան և երազ թուի մեզ ճշմարտութիւնն. արդե-

լեալք զլսելիս ի սուրբ ընթեցուածոց և ունկնդիր եմք բառաչման խաշանց մերոց. ցաւալից են անդամք մարմնոց մերոց, զի յառաջ քան զմարմինս զոգիս ախտացուցաք»։ Եղիշէի այս բողոքի հետ կարելի է միացնել Մովսէս Խորենացու Ողբի մի մասը և Գ. դարի Փարպեցու թուղթը «Մեզադրութիւն Ստեփանոս Երեղայից», որպէսզի կարողանանք տեսնել, թէ նոյն իսկ Ե. դարում, որ Հայոց համար մի օրինակելի ժամանակամիջոց է, պակաս չէին վատ և վնասակար կրօնաւորներ։ Սակայն ի՞նչ նշանակութիւն ունեցան նոքա. միայն մի յաւիտենական վատ անուն թողնելուց զատ ի՞նչ շահեցան նոքա, երբ կային նոցա դէմ առաքինի ախոյեաններ Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Ս. Յովսէփ և նոցա հետևող ու ժամանակակից Ս. Հայրերը՝ Եղնիկ, Մովսէս, Եղիշէ, Եզան, Երրահամ, Գ. դարի և այլ շատերը, որոնք և փրկեցին հասարակութիւնը բարոյական անկումից։ Նոյնը տեսնում ենք մենք Հայոց եկեղեցական պատմութեան ուրիշ զանազան շրջաններում, երբ անիշխանութիւնը, բռնակալութիւնը, տգիտութիւնը աջակից էին մարդկային ստոր կրքերին, շահամոլութեանը և անձնական ոխակալութեանը։ Այս տխուր և արգահատելի շրջանները, որոնք բարեբաղդաբար սակաւաթիւ են և կարճատև, թէպէտ առժամի վնասում են ընդհանուրի յառաջադիմութեանը, սակայն բիծ են դնում միմիայն առանձին անհատների վերայ և երբէք չկարողացան նսեմացնել վանական կեանքի աշխարհաշէն գաղափարները. զի «փոխանակ հարց որդիք» դալով, յաջորդաբար պահպանուեցաւ այն հաստատուն կազմակերպութիւնն, ինչոր սահմանեցին Ս. Լուսաւորիչ և իւր արժանաւոր հետևողները։

Վատ վանականների թիւը կախուած է նաև հասարակութիւնից և կաթուղիկոսներից, և այս մանաւանդ արդի ժամանակներում։ Որքան լուսաւորուած է հասարակութիւնը, ջերմեռանդ է, անկեղծ է դէպի Եկեղեցին և նախանձախնդիր է առաքինութեան, այնքան պակաս է վատերի թիւը. որքան տգէտ և ապականուած է հասարակութիւնը, այնքան աճում են նոքա։ Սմանապէս՝ լաւ կաթուղիկոսների ժամանակ վատ կրօնաւորներն հեռու են ասպարէզից, իսկ վատերի ժամանակ աջակից է նոցա ամենայն պաշտպանութիւն։ Հասարակութիւնն հարկից ազատում է կրօնաւորներին, իւր վերայ է առնում նոցա բոլոր աշխարհային հարկերի բեռը, ապահովում է վանքերի լաւ թէ վատ գոյութիւնը և պատրաստ է միշտ հանելու նոցա կարօտութեանը. հետևաբար ունի միջոց հսկելու նոցա բարոյական վիճակի վերայ և վատերին ասպարէզ չտալու։ Սմանապէս կաթուղիկոսներն իրենց հոգևոր բարձր և անտահման իշխանութեամբ ազատ են ընդունելու լաւին և մերժելու վատին. նոցա գործն է ընդհանուրի ուղիղ առաջնորդութիւնը, որի համար և ամենայն տեղ Հայաստանեայց Եկեղեցին Ա. պատարագի ժամանակ մաղթում է նոցա երկար կեանք «ուղիղ վարդապետութեամբ»։

ՑԱՆԿ.

Ծան. 1872ին գրուած այս համառօտ տեսութիւնը կարգացուեցաւ 1883ին Գէորգեան ճեմարանի տարեկան հանդէսի ժամանակ։ Մեր կարծիքով դեռ վաղ է Հայոց վանքերի ընդարձակ և լիակատար տեսութիւնը գրելու, զի անմշակ են բոլոր աղբիւրները, պակաս են նշանաւոր վանքերի տեղագրութիւնները և ընթերցող դատն իսկ դեռ չունի հետաքրքրութիւն այդպիսի մանաւոր խնդիրների։ Ուստի այս համառօտ տեսութիւնն ինչ ինչ փոփոխութիւններով լոյս տեսաւ ոչ իբրև լիակատար գործ, այլ իբրև նախաձանրոնք Հայոց վանքերի մասին. այստեղ ամփոփեցինք նախ՝ մի համառօտ տեղեկութիւն ընդհանրապէս վանքերի ծագման և զարգացման մասին (տե՛ս Ա — Զ), ապա մի նկարագիր Հայոց վանքերի Դ — ԺԹ դարը (տե՛ս Զ — ԺԸ) և իսկերջոյ մի հարևանցի ծանօթութիւն արդի վանքերի մասին և յիշատակութիւն այն պատճառների, որոնք մեր կարծիքով նպաստեցին վանքերի անկմանը (տես ԺԹ և Ի)։ Տեսութեանս մէջ յիշուած վանքերի ցանկը հետևեալն է.

Ղ.	Ակռու վանք 29.
Ժ.	Ողթամարայ 42.
ԺԷ.	Ս. Ամբրոսու (Ամրդոլու) 73.
ԺԷ	Ս. Անանիա առաք. 74.
ԺԹ.	Ս. Անդրեի 65.
ԺԴ.	Ապրակունեաց 69.
Է.	Արագածոտնի 34.
ԺԱ.	Արեգի անապատ 53.
ԺԹ.	Արմաշու 83.
ԺԲ.	Արտազու 22, 55, 64, 87.
ԺԳ.	Արքակաղնի 54, 60.
Ժ.	Բադնայր 42.
—	Ս. Բարթուղիմէոս առաք. 22.
ԺԱ.	Բարսեղեանց անապ. 53.
ԺԱ.	Բջնեաց 55, 58.
ԺԵ.	Գանձասար 87.
ԺԳ.	Գայլեձորի 68, 74.
Է.	Ս. Գայիանէի 86.
ԺԵ.	Ս. Գեղարդայ 71.
ԺԲ.	Գետիկայ (Գօշայ) 58—61.
Զ.	Գիւտայ 29.
Դ.	Գլաձայ 24, 26, 33, 84, 87.
Ժ.	Ս. Գրիգոր 43.
Է.	Դպրեվանք 34.

Գրաբ.

ԺԱ. Դրազարկ 54.

Դ. Ս. Էջմիածին 32, 33, 70—74, 76, 80—83, 86, 88, 89, 90.

— Ս. Թադէի տե՛ս Արտազու.

Է. Թանահատի 22, 25, 42.

Ժ. Թեղենեաց 46, 58.

— Իմնակնեան տե՛ս Գլակայ.

ԺԸ. Ս. Խաչ 84.

ԺԴ. Խառաբատապ 69.

Ժ. Խլաձորի 30.

ԺԱ. Խծկոնից 42, 86.

Ժ. Խոտակերից 25, 42.

ԺԳ. Խորանաշատի 63.

ԺԵ. Ս. Խորվիրապի 71, 87.

— Ս. Կաթուղիկէ, տե՛ս Էջմիածին.

Ժ. Կամրջաձորի 43, 44.

ԺԱ. Կատուազօնի 54.

ԺԱ. Կարմիր 53, 86.

ԺԱ. Կեչառիսու 42, 58.

ԺԲ. Հազարծինու 58, 59, 86.

Ժ. Հաղբատու 42, 45, 55, 58, 60, 86.

Թ. Հառիճայի 58, 84, 85.

ԺԱ. Հաւուցիթառայ 42, 46, 58, 70, 74.

Ժ. Հնձանիսի, Հոգեաց } 22, 30, 70.

Ժ. Հոռոմայրի 46.

Գրաբ.

Ժ. Հոռոմոսի 29, 30, 42—44, 58, 87.

ԺԲ. Հռոմկլայի 53, 59.

ԺԸ. Ս. Ղազարի 77.

— Մայր Եկեղեցի տե՛ս Էջմիածին.

Ժ. Մարմաշենու 42.

Է. Մաքենոցի 25, 36, 42.

ԺԵ. Մեծոփայ 70.

ԺԲ. Ս. Յակոբեանց 83.

ԺԵ. Յովհաննավանք 72, 74.

ԺԴ. Ս. Նախավկայի 70, 74, 87.

Թ. Նարեկայ 30, 42—44.

Ժ. Նորավանք 29.

ԺԷ. Զարեք անապ. 74, 86.

Ժ. Սաղմոսավանք 46, 70.

Ժ. Սանահին 30, 42—45, 58, 86.

Թ. Սևան 42, 46, 58, 70, 76.

ԺԱ. Սև Լեառն 52, 58.

— Սիւնեաց վարդապետարան տե՛ս Տաթև.

Է. Վարագայ 84.

Է. Վարդիկ Հայր 35.

Ե. Տաթև 35—39, 55, 69, 70, 87.

ԺԴ. Ցիպնայ 70.

ԺԲ. Ս. Փրկիչ 30.

ԺԴ. Քռնայի 67.